

Հավելված N2  
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի  
հունիսի 24-ի N 245-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՌԱՋԱՐԿԻ ԲԱՑ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է Գնումների հանձնաժողովի  
2021 թվականի դեկտեմբերի «14» թիվ 06 որոշմամբ և հրապարակվում է  
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

*Առաջարկի բաց հարցման ծածկագրերը՝ (2-Ապահով-2021-ՄԷԿ)*

Պատվիրատուն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է Հայաստանի  
Հանրապետություն, 0021ք. Երևան, Ղափանցյան 2/12, հայտարարում է առաջարկի բաց հարցում:

Առաջարկի բաց հարցմանը ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել  
պայմանագիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր) գնման առարկա հանդիսացող՝ **«Միջազգային  
էներգետիկ կորպորացիա» ՓԲ Ընկերության կարիքների համար գույքի (այդ թվում անավարտ  
շինարարության օբյեկտների) և համաքաղաքացիական պատասխանատվության  
ապահովագրություն ծառայությունների մատուցում:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա  
օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու  
հանգամանքից, ունի սույն Առաջարկի բաց հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

*Առաջարկի բաց հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև  
մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման  
համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի Հրավերով:*

*Անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու  
պահից գրավոր դիմել պատվիրատուին վերջինիս հասցեով՝ «Միջազգային էներգետիկ  
կորպորացիա» ՓԲԸ Գնումների և մատակարարման վարչություն, սենյակ 201 կամ  
e.avetisyan@mek.am;*

*Առաջարկի բաց հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել կից նամակով մինչև 2021թ.  
դեկտեմբերի 21-ի ժամը 10:00, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ / Հայաստանի  
Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ղափանցյան 2/12, հեռախոս՝ 012 280028 (201), e-mail՝  
[office@mek.am](mailto:office@mek.am);*

Հայտերը բացվում են Ընկերության ԳՀ նիստին՝ 2021 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 11:00-  
ին:

Հեռախոս՝ 012 280028 (201), 093-90-06-52

Էլ. փոստ [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am)

Պատվիրատու՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

**Announcement**

*About an Open request for proposals*

*The text of this Announcement approved by the decision of the Procurement Commission "06" of December 14, 2021 and published in accordance with article 27 Of the RA law "on procurement"*

Name of lot: 2-INSH-2021-MEC

*The customer - International energy corporation CJSC, registered at Ghapantyan street, Yerevan, Republic of Armenia, announces an Open request for proposals.*

*In accordance with the established procedure, with participant who wins an Open request for proposals will be concluded a contract for the subject of purchase on: **insurance of property of "International energy corporation" CJSC (including objects of construction in progress) against all risks and insurance of general civil liability.***

*According to the terms of article 7 of the RA law "on procurement", any person, regardless of whether it is a foreign individual, enterprise, or stateless person, has equal rights to participate in this procedure.*

*Persons who are not eligible to participate in an Open request for proposals, as well as the qualification criteria for participants and the documents that will be submitted to evaluate these criteria are set by the Invitation to this procedure.*

*It is necessary to contact the Customer in writing within 5 business days from the date of publication of this Announcement at the address: in the Department of procurement and supply of International energy corporation CJSC, room #201 or e-mail: [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am);*

*Applications for an Open request for proposals must be submitted with the attached letter by 10:00 on December 21, 2021, to the International energy corporation CJSC (Ghapantsyan 2/12 street, Yerevan, 0021, RA: 012 280028 (201), e-mail' [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am);*

*Applications are opened at a meeting of the Purchasing commission, the day after the deadline for submitting applications, December 21, 2021 at 11:00.*

*For more information about this Announcement you can contact the Executive Secretary of the Purchasing Commission E. Avetisyan.*

Telephone: +374 012 280028 (201), 093-90-06-52

E-mail: [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am)

**Объявление**

**Об Открытом запросе предложений**

Текст данного Объявления

утвержден решением Закупочной комиссии «06» от 14-го декабря 2021 года и публикуется согласно статье 27 Закона РА «О закупках»

Наименование лотов: (2-Страх-2021-МЭК)

Заказчик - ЗАО «Международная энергетическая корпорация», зарегистрированного по адресу Республика Армения, г. Ереван, ул. Карапцян 2/12, объявляет Открытый запрос предложений.

По установленному порядку с участником, победившим в Открытом запросе предложений будет заключен договор на страхование имущества ЗАО «МЭК» (включая объекты незавершенного строительства) от всех рисков, а так же страхование общей гражданской ответственности. Согласно условиям 7-ой статьи Закона РА «О закупках» любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, предприятием, лицом без гражданства, имеет равные права для участия в данной процедуре.

Лицам, не имеющим права участвовать в Открытом запросе предложений, а также критерии квалификации, предъявляемые к участникам и документы, которые будут представлены для оценки этих критериев, установлены Приглашением к данной процедуре.

Необходимо в течение 5 рабочих дней с момента опубликования данного Объявления письменно обратиться к заказчику по адресу: в Управление закупок и снабжению ЗАО "Международная энергетическая корпорация", комната 201 или [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am);

Заявки на Открытый запрос предложения необходимо представить с прилагаемым письмом до 10:00 21-го декабря 2021 г., в ЗАО «Международная энергетическая корпорация» (0021, РА, г. Ереван, ул.Карапцян 2/12, телефон: 012 280028 (201), e-mail' [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am);

Заявки открываются на заседании ЗК, 21-го декабря 2021 в 11:00.

Для получения дополнительной информации, относительно данного Объявления можете обратиться к ответственному секретарю Закупочной комиссии Э. Аветисян.

Телефон: +374 012 280028 (201), 093-90-06-52

Эл.почта: [e.avetisyan@mek.am](mailto:e.avetisyan@mek.am)

**«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ) ԵՎ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑ ՀԱՐՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1. Առաջարկների հարցման վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ**

1.1.1. Պարզվիրաբու՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (Հայաստանի Հանրապետություն, Երևան 0021, Ղափանցյան 2/12, հեռախոս՝ +374 12 28 00 28, e-mail: office@mek.am (այսուհետ՝ «Պարզվիրաբու»), 2021թ. դեկտեմբերի 14-ին Պարզվիրաբուի [www.mek.am](http://www.mek.am), ՀՀ Ֆինանսների Նախարարության [www.gnumner.am](http://www.gnumner.am) պաշտոնական կայքերում (բաժին «Գնումներ») հրապարակված՝ առաջարկների հարցման անցկացման մասին Ծանուցումով, հրավիրում է իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ «Մասնակիցներ») մասնակցել առաջարկների բաց հարցման ընթացակարգին (այսուհետ՝ «առաջարկների հարցում» կամ «ԱԲՀ») Պարզվիրաբուի կարիքների համար (այսուհետ՝ «Ծառայություններ») «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲ Ընկերության կարիքների համար գույքի (այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների) և համաքաղաքացիական պարասխանաբովության ապահովագրություն ծառայությունների մատուցման Պայմանագիր կնքելու իրավունքով:

1.1.2. Տեղեկությունների համար դիմել գնումների հանձնաժողովի քարտուղար՝ (Էդիպա Ավետիսյան), հեռ. +374 93 900 652, e-mail e.avetisyan@mek.am:

1.1.3 Մատուցվող ծառայությունների մանրամասն նկարագիրը շարադրված է Հավելված 1-ում (այսպես և այսուհետ հղումները վերաբերվում են սույն առաջարկների հարցման փաստաթղթերին): Պայմանագրի նախագիծը, որը կկնքվի սույն առաջարկների հարցման արդյունքներով, նեկայացված է Հավելված 2-ում: Առաջարկների հարցման անցկացման կարգը և դրան մասնակցության պայմանները, ինչպես նաև Առաջարկների նախապարասխանաբովության հրահանգավորումները կայացված են 2 և 3 բաժիններում: Փաստաթղթերի ձևերը, որոնք պետք է նախապարասխանաբովեն և ներկայացվեն Առաջարկի կազմում, ներկայացված են 4 բաժնում:

1.1.4 Առաջարկների հարցումը անցկացվում է Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից 2021թ.-ի դեկտեմբերի 14-ին հաստատված 615 հրամանի հիման վրա:

1.1.5 Սույն առաջարկների հարցումը, համաձայն Պարզվիրաբուի որոշմանը, կարող է անցկացվել մի քանի փուլով: Յուրաքանչյուր փուլի արդյունքներով, առաջարկների հարցման պայմաններում, առաջին հերթին (սակայն չսահմանափակվելով) ծառայությունների մատուցման Տեխնիկական պայմաններում (Հավելված 1), Պայմանագրի նախագիծում (Հավելված 2), Մասնակիցների նկատմամբ պահանջներում և այդ պահանջներին համապատասխանության հաստատման կարգում (ենթակետ 2.5), կարող են կատարվել փոփոխություններ, այդ թվում՝ էական փոփոխություններ: Կատարված փոփոխությունները հաշվի կառնվեն համապատասխան փուլի առաջարկների հարցման փաստաթղթերում: Պարզվիրաբուն նաև իրավասու է Մասնակիցներից յուրաքանչյուրին մերժել առաջարկների հարցման տվյալ ընթացակարգի հետագա փուլերում մասնակցությունը՝ հիմնավորելով մերժման հիմնական պարագրաֆը՝ առանց այդպիսի որոշման ընդունման բոլոր հիմքերը մանրամասնելու: Պարզվիրաբուն նաև իրավունք ունի հրաժարվել առաջարկների հարցման ընթացակարգի անցկացումից դրա ցանկացած փուլում՝ Մասնակիցների դիմաց չկրելով ոչ մի նյութական պարասխանաբովություն:

## 1.2. Ընթացակարգերի և փաստաթղթերի իրավական կարգավիճակը

1.2.1. «1.1.1» կետի համաձայն հրատարակված Ծանուցումը, սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի հետ միասին, որը հանդիսանում է դրա անբաժանելի հավելվածը, հանդիսանում են օֆերտաներ կատարելու առաջարկ և Մասնակցի կողմից պետք է դիտարկվեն համապատասխան կերպ:

1.2.3. Առաջարկների հարցման արդյունքներով կնքված Պայմանագիրը, սահմանում է բոլոր պայմանավորվածությունները, որոնց եկել են կողմերը:

1.2.4. Հաղթողի հետ Պայմանագրի պայմանները որոշելիս, գործածվում են հետևյալ փաստաթղթերը՝ պահպանելով նշված հիեռադիսիան (դրանց հակասության դեպքում)՝

ա) պատվիրատուի և Հաղթողի միջև մինչպայմանագրային բանակցությունների արձանագրությունները (ոչ սույն Առաջարկների հարցման փաստաթղթերում, ոչ Հաղթողի առաջարկում չքննարկված հարցերի շուրջ),

բ) առաջարկների հարցման անցկացման ծանուցումը և սույն Առաջարկների հարցման փաստաթղթերը՝ ըստ բոլոր անցկացված փուլերի և բոլոր հավելումներով և բացառություններով,

գ) Հաղթողի առաջարկը բոլոր՝ պատվիրատուի պահանջներին համապատասխանող լրացումների և պարզաբանումների հետ:

1.2.5. Պատվիրատուի և Մասնակցի այլ փաստաթղթերը չեն որոշում կողմերի իրավունքները և պարտականությունները՝ սույն առաջարկների հարցման հետ կապված:

1.2.6. Այն ամենի առումով, ինչը չի կարգավորված Առաջարկների հարցման անցկացման ծանուցումով և սույն Առաջարկների հարցման փաստաթղթերով, կողմերը առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով:

## 1.3. Բողոքարկում

Բողոքարկման ընթացակարգը կարգավորվում է Պատվիրատուի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ գնումների մասին Օրենքով:

## 1.4. Այլ դրույթներ

1.4.1. Մասնակիցը ինքնուրույն է կրում Առաջարկի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը:

1.4.2. Պատվիրատուն ապահովում է Մասնակցի կողմից սրացված տեղեկությունների ողջամիտ գաղտնիությունը, ներառյալ՝ Առաջարկում պարունակվողները:

1.4.3. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների

համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի փվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

1.4.4. Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

## **2. Առաջարկների հարցման անցկացման կարգը: Առաջարկների նախապատրաստման հրահանգավորումը**

### 2.1. Առաջարկների հարցման անցկացման ընդհանուր կարգը

2.1.1. Հաշվի առնելով 1.1.5 կետի դրույթները Առաջարկների հարցումը անցկացվում է հետևյալ կարգով՝

ա) Առաջարկների հարցման մասին Ծանուցման հրապարակումը (ենթաբաժին 2.2), Առաջարկների հարցման ընթացակարգի ամբողջ ընթացքում իրականացվում է մեկ անգամ,

բ) Մասնակիցների կողմից իրենց առաջարկների պատրաստումը և, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի կողմից Առաջարկների հարցման փաստաթղթերի բացատրությունը (ենթաբաժին 2.4),

գ) Առաջարկների ներկայացումը և դրանց ընդունումը (ենթաբաժին 2.6),

դ) Առաջարկների Գնահատում և դրանց ընդունումը (ենթաբաժին 2.8),

ե) Առաջարկների հարցման մյուս փուլերի անցկացման կամ Հաղթողի որոշման մասին որոշման ընդունում (ենթակետ 2.10),

զ) Պայմանագրի կնքում (ենթակետ 2.12) Առաջարկների հարցման ընթացակարգի ամբողջ ընթացքում իրականացվում է մեկ անգամ,

է) Մասնակիցներին տեղեկացում Առաջարկների հարցման արդյունքների վերաբերյալ (ենթակետ 2.13) Առաջարկների հարցման ընթացակարգի ամբողջ ընթացքում իրականացվում է մեկ անգամ:

### 2.2. Առաջարկների հարցման անցկացման Ծանուցման հրապարակում:

2.2.1. Առաջարկների հարցման անցկացման Ծանուցման հրապարակումը իրականացվ է 1.1.1 նշված կարգին համաձայն:

### 2.3. Կատարողներին Առաջարկների հարցման փաստաթղթերի տրամադրումը

2.3.1. Մասնակիցները պետք է ստանան Առաջարկների հարցման փաստաթղթերը Առաջարկների հարցման մասին Ծանուցումում նշված կարգին համաձայն:

2.3.2. Հաջորդ փուլերի (հավելված 1.1.5) անցկացման դեպքում, դրանց համար Առաջարկների հարցման փաստաթղթերի ներկայացման կարգի մասին Մասնակիցները հավելյալ կտեղեկացվեն:

#### 2.4. Առաջարկի նախապատրաստում

2.4.1. Առաջարկի նկատմամբ ընդհանուր պահանջներ

Մասնակիցը պետք է պատրաստի առաջարկ, որը ներառում է՝

ա) Օֆերտայի ներկայացման մասին նամակ՝ սույն Առաջարկների հարցման փաստաթղթում բերված ձևին և հրահանգավորմանը համաձայն (ենթաբաժին 4.1),

բ) ծառայությունների մատուցման տեխնիկական առաջարկ՝ սույն Առաջարկների հարցման փաստաթղթում բերված ձևին և հրահանգավորմանը համաձայն (ենթաբաժին 4.2),

գ) Առևտրային առաջարկ՝ սույն Առաջարկների հարցման փաստաթղթում բերված ձևին և հրահանգավորմանը համաձայն (ենթաբաժին 4.3),

«ա» և «գ» կետերում նշված փաստաթղթերը միասին պետք է ներկայացվեն առանձին փակ, կնքված և ստորագրված ծրարով:

դ) Պայմանագրի նախագծի առումով փարաձայնությունների արձանագրություն՝ սույն Առաջարկների հարցման փաստաթղթում բերված ձևին և հրահանգավորմանը համաձայն (ենթաբաժին 4.4),

ե) փաստաթղթեր, որոնք հաստատում են Մասնակցի համապատասխանությունը սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին (ենթաբաժին 2.5):

Սույն Առաջարկների հարցման ընթացակարգի հաջորդ փուլերում (դրանց անցկացման դեպքում) (ենթակետ 1.1.5), Առաջարկում ներառվող փաստաթղթերի կազմը, ինչպես նաև դրանց ձևերը և դրանց նկատմամբ պահանջները կարող են փոփոխվել:

Մասնակիցը իրավունք ունի ներկայացնել միայն մեկ Առաջարկ: Այդ պահանջի խաղտման դեպքում, այդպիսի Մասնակցի Առաջարկները մերժվում են առանց դրա պարունակության ուսումնասիրման:

Հայտում ընդգրկված յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ԱԲՀ Մասնակցի անունից առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի կողմից կամ նրա կողմից պատշաճ ձևով ՀՀ Օրենսդրության հիման վրա տրված լիազորագրի հիման վրա գործող լիազորված անձի կողմից (այսուհետև՝ «**Լիազորված անձ**»): Վերջին դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է հայտին:

Յուրաքանչյուր փաստաթուղթ, որ մտնում է Առաջարկի կազմի մեջ, պետք է կնքված լինի Մասնակցի կնիքով:

Առաջարկների հարցման Մասնակիցը նաև պետք է նախապատրաստի Առաջարկի 1 պատճենը թղթե կրիչով, ինչպես նաև էլեկտրոնային 1 կրկնօրինակ:

Տեղեկատվության լրացուցիչ կրիչները (USB ֆլեշ-կրիչները, բրոշյուրները, գրքերը) պետք է համապատասխան ձևով նշագրված լինեն (օրինակ՝ պիտակների օգնությամբ) և տեղադրված լինեն առանձին (այսպես կոչված «տեղեկատվական» ծրարներում): Տեղեկատվական ծրարները պետք է տեղադրվեն Առաջարկի վերջին էջից հետո:

Հայտի էլեկտրոնային փարբերակը պետք է ներկայացվի USB ֆլեշ-կրիչով, որը պետք է ամբողջությամբ համապատասխանի փաստաթղթերի տպագրված փարբերակներին:

Դրանից հետո պետք է կատարվի Առաջարկի բոլոր էջերի տեղեկատվական ծրարների, առանց բացառության, համարակալումը:

Առաջարկի տեքստում կատարված ոչ մի ուղղում չունի ուժ, բացառությամբ այն ուղղումների, որոնք հաստատված են ձեռագիր մակագրությամբ «հավատալ ուղղումին» և յուրաքանչյուր ուղղման կողքը դրված լիազոր անձի անձնական ստորագրությամբ:

#### 2.4.2. Առաջարկի գործողության ժամկետի նկատմամբ պահանջներ՝

Առաջարկը վավեր է այն ժամկետի սահմաններում, որը նշված է օֆերտայի ներկայացման մասին՝ Մասնակցի նամակում (4.1. ենթաբաժին), բայց ոչ պակաս, քան 40 օրացույցային օր առաջարկների հարցմանը մասնակցության հայտերով ներկայացված ծրարների բացման ընթացակարգի անցկացման օրը հաջորդող օրվանից սկսած:

Գործողության ավելի պակաս ժամկետի նշումը կարող է հիմք հանդիսանալ հայտի մերժման համար:

#### 2.4.3. Առաջարկի լեզվի նկատմամբ պահանջներ

Բոլոր փաստաթղթերը, որոնք ներառված են Առաջարկում, պետք է պատրաստված լինեն հայերեն և/կամ ռուսերեն լեզվով՝ բացառությամբ ներքոգրյալների՝

Այն փաստաթղթերը, որոնք տրամադրված են առաջարկների հարցման Մասնակցին երրորդ անձանց կողմից այլ լեզվով, կարող են ներկայացվել բնօրինակի լեզվով այն պայմանով, որ դրանց կցվում է հայերեն (ռուսերեն) լեզվով թարգմանությունը (ապոստրիացված): Օտարալեզու փաստաթղթի բնօրինակի և թարգմանության միջև փարբերության հայտնաբերման դեպքում Պատվիրատուն որոշումը կընդունի թարգմանության հիման վրա:

Պատվիրատուն իրավունք ունի չքննարկել այն փաստաթղթերը, որոնք թարգմանված չեն հայերեն (ռուսերեն) լեզվով:

#### 2.4.4. Արտարժույթի նկատմամբ պահանջները

Հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով առանց ԱԱՀ, բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ հանդիսացող անձանց կողմից ներկայացված



հայրում ներառվող փաստաթղթերը կարող են ներկայացվել դրամական միջոցների գումարների ԱՄՆ դոլարով արտահայտմամբ (առանց ԱԱՀ) և այլ առաջարկությունների հետ համեմատելու նպատակով գինը կփոխարկվի հայկական դրամի՝ հայրերի բացման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի փոխարժեքով: Սույն առաջարկների հարցման փաստաթղթերում նշված արժույթից բացի այլ արտարժույթով հայրերի ներկայացման պարագայում Պարվիրատուն իրավունք ունի մերժել տվյալ հայրը:

#### 2.4.5. Նախնական (սահմանային) գին

Նախնական (սահմանային) գինը սահմանված չէ:

#### 2.4.6. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայրի գինը:

Առաջարկների հարցմանը մասնակցելու հայրի գինը պետք է իր մեջ ներառի պայմանագրի նախագծում սահմանված ծառայությունների մատուցման բոլոր ծախսերը և ռիսկերը: Ընդ որում հարցմանը մասնակցության հայրի գինը ներառում է պայմանագրի կատարման հետ կապված բոլոր վճարներն ու տուրքերը:

Մասնակիցը պետք է նշի մասնակցության հայրում ենթադրվող ամբողջ գները ծառայությունների մատակարարման: Այն դեպքում, երբ մասնակիցը չի նշի մատուցվող ծառայությունների առանձին անվանումների արժեքը Պարվիրատուն չի վճարի վերջինիս դրանց արժեքը և կհամարի, որ դրանք ներառված են պայմանագրի գնի մեջ:

Մասնակցության հայրի գնի մեջ չի ներառվում ՀՀ օրենսդրության համաձայն վճարվող ավելացած արժեքի հարկը (ԱԱՀ):

ՀՀ ռեզիդենտների համար պայմանագրի գինը հաշվարկվում է հայրի գնին գումարելով ՀՀ ավելացած արժեքի հարկի գումարը:

Պայմանագրի գինը կարող է տարբերվել վերը նշված կարգում սահմանված գումարից, եթե փոփոխվում են մատուցվող ծառայությունների ծավալները (առաջարկների հարցման փաստաթղթերով թույլատրվող սահմաններում):

Պարվիրատուն սահմանում է մատուցվող ծառայություններին ներկայացվող ֆունկցիոնալ և/կամ տեխնիկական պահանջները:

Մասնակցի կողմից սույն ենթաբաժնի պայմանները չընդունելու դեպքում Կազմակերպիչը կարող է մերժել առաջարկների հարցմանը մասնակցելու նրա հայրը:

#### 2.4.7. Առաջարկների հարցման Փաստաթղթերի բացատրություն

Մասնակիցները իրավունք ունեն դիմել Պարվիրատուին սույն Առաջարկների հարցման Փաստաթղթերի բացատրության համար: Առաջարկների հարցման Փաստաթղթերի բացատրության դիմումները պետք է ներկայացվեն գրավոր ձևով՝ ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից կամ Մասնակից այլ պատասխանատու անձի կողմից:

Պարվիրատուն ողջամիտ ժամկետում պետք է պատասխանի ցանկացած դիմումի, որը նա կստանա Առաջարկների ընդունման ժամկետի ավարտից ոչ ուշ քան 5 օր առաջ (կետ 2.6.5):

#### 2.4.8. Առաջարկների ընդունման ժամկետի երկարաձգում

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի երկարաձգել Առաջարկների ընդունման ժամկետը, որը սահմանված է 2.6.5 ենթակետում, այդ մասին տեղեկացնելով բոլոր Մասնակիցներին:

Բոլոր Մասնակիցները, որոնք պաշտոնապես ստացել են սույն Առաջարկների հարցման փաստաթղթերը (ենթաբաժին 2.3), անմիջապես տեղեկացնում են այդ մասին՝ գործածելով օպերատիվ կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ):

#### 2.5. Մասնակիցների նկատմամբ պահանջները: Ներկայացված պահանջներին համապատասխանության հաստատումը

##### 2.5.1. Մասնակիցների նկատմամբ պահանջները

Առաջարկների հարցման հետագա փուլերում (դրանց անցկացման դեպքում) (կետ 1.1.4), Մասնակիցների նկատմամբ պահանջները և սահմանված պահանջներին նրանց համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի նկատմամբ պահանջները կարող են փոփոխվել՝ այդ մասին տեղեկացնելով Մասնակիցներին:

ա) Մասնակիցը պետք է փրապետի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և փորձի, ունենա ոեսուրսային հնարավորություններ (ֆինանսական, նյութատեխնիկական, արտադրական, աշխատանքային), կառավարման իրավասություն, փորձ և համբավ և ունենա նման պայմանագրերի կատարման ոչ պակաս, քան 1 տարվա փորձ,

բ) Մասնակիցը պետք է ունենա՝

- 3 տարվա աշխատանքային փորձ

գ) պետք է օժտված լինի քաղաքացիական իրավունակությամբ ամբողջ ծավալով՝ Պայմանագրի կնքման և կատարման համար (պետք է գրանցված լինի սահմանված կարգով և ունենա գործունեության տեսակների կատարման համապատասխան գործող արտոնագրեր՝ Պայմանագրի շրջանակներում),

դ) Մասնակիցը չպետք է լինի անվճարունակ կամ սնանկ, գտնվի լուծարման ընթացքում, առաջարկի հարցման Մասնակցի՝ պայմանագրի կատարման համար էական գույքի վրա կալանք չպետք է դրված լինի, Մասնակցի տնտեսական գործունեությունը չպետք է կասեցված լինի,

##### 2.5.2. Առաջարկի կազմում ներառված առաջարկների հարցման Մասնակցից պահանջվող փաստաթղթերը՝

Վերոգրյալի առնչությամբ, Մասնակիցը իր Առաջարկի կազմում պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը, որոնք հաստատում են իր համապատասխանությունը սահմանված պահանջներին՝

ա) նոտարապես վավերացված իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում Մասնակցի գրանցման վկայականի պատճենը,

բ) նույնարապես վավերացված կանոնադրության պատճենը՝ գործող խմբագրությամբ,

գ) Մասնակցի կողմից վավերացված փաստաթղթերի պատճենները (հրամանների, ղեկավար նշանակելու մասին հիմնադիրների ժողովի արձանագրությունների), որոնք հաստատում են Առաջարկը ստորագրող անձի իրավասությունները, ինչպես նաև առաջարկների հարցման արդյունքներով համապատասխան Պայմանագիր կնքելու նրա իրավունքը: Եթե Առաջարկը ստորագրվում է լիազորագրով, ներկայացվում է լիազորագրի բնօրինակը կամ նույնարապես վավերացված պատճենը և վերը նշված փաստաթղթերը այն անձի համար, ով տվել է լիազորագիրը,

դ) Մասնակցի կողմից վավերացված վերջին եռամսյակի հաշվետվությունների (ԱԱՀ) պատճենները,

ե) վավերացված նույնի կողմից գործող լիցենզիաների պատճենները այն գործունեության տեսակների համար, որոնք կապված են Պայմանագրի կատարման հետ՝ հավելվածներով, որոնք նկարագրում են գործունեության կոնկրետ տեսակները, որոնց համար առաջարկների հարցման Մասնակիցը ունի լիցենզիա,

զ) սույն առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված ձևին համապատասխան հարցաթերթիկ – առաջարկների հարցման Մասնակցի հարցաթերթիկ (ձև 5),

է) համանման բնույթի և ծավալի աշխատանքի պայմանագրերի կատարման մասին տեղեկանքի բնօրինակը՝ սույն առաջարկների հարցման փաստաթղթերում սահմանված ձևին համապատասխան – Համանման պայմանագրերի կատարման ցանկի և տարեկան ծավալների մասին տեղեկանք (ձև 6),

ը) պայմանագրի կատարման շրջանակներում օգտագործվելիք նյութատեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանքի բնօրինակը՝ սույն առաջարկների հարցման փաստաթղթերում սահմանված ձևով- Նյութատեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանք (ձև 7),

թ) սույն Պայմանագրի կատարման ընթացքում ներգրավվող կադրային ռեսուրսների մասին տեղեկանքի բնօրինակը՝ սույն առաջարկների հարցման փաստաթղթերում սահմանված ձևին համապատասխան – Կադրային ռեսուրսների մասին տեղեկանք (ձև 8),

ժ) Պատվիրատուի կամ առաջարկների հարցման Կազմակերպիչի աշխատակիցների հետ Մասնակցի՝ փոխկապվածության բնույթ կրող, կապերի առկայության մասին տեղեկատվական նամակի բնօրինակը՝ սույն առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված ձևին համապատասխան – 4.9 Պատվիրատուի կամ առաջարկների հարցման Կազմակերպիչի աշխատակիցների հետ Մասնակցի՝ փոխկապվածության բնույթ կրող կապերի առկայության մասին տեղեկատվական նամակ (ձև 9),

ի) Մասնակցի կողմից վավերացված փաստաթուղթ, որը հավաստում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված մարմնի կողմից տրված՝ խոշոր գործարքի կնքման մասին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպած, որոշման (հավանության) առկայությունը կամ (եթե գործարքը ըստ օրենսդրության չի համարվում խոշոր Մասնակցի համար)՝ տեղեկանք ազատ ձևով,

Ծանոթագրություն. Այդպիսի փաստաթղթեր հանդիսանում են՝

սահմանափակ պարասխանադրությամբ ընկերության համար՝ խոշոր գործարք կատարելու մասին որոշում բովանդակող, «Սահմանափակ պարասխանադրությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ընդունված և ձևակերպված արձանագրությունից քաղվածքը կամ Մասնակցի Կանոնադրությունից քաղվածքը, որը հաստատում է միանձնյա կամ կոլեգիալ մարմնի իրավունքը՝ ինքնուրույն կնքելու խոշոր գործարքներ,

բաժնետիրական ընկերության համար՝ խոշոր գործարքի հավանության մասին որոշում բովանդակող, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ընդունված և ձևակերպված արձանագրությունից քաղվածքը կամ փաստաթուղթ, որը կհաստատի, որ Մասնակիցը հանդիսանում է՝ միաժամանակ միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող մեկ բաժնետիրոջից բաղկացած բաժնետիրական ընկերություն]: Ոչ ռեզիդենտների համար, համապատասխան մասնակցի երկրի օրենսդրության:

յ) Բյուջեի նկատմամբ Մասնակցի պարտավորությունների կամ դրանց բացակայության մասին հարկային տեսչությունից տեղեկանք (բնօրինակը),

իւ) Դատական ընթացակարգերում մասնակցության կամ դրանց բացակայության մասին դատական մարմնից տեղեկանք

ծ) Կոնսուլտային անձի կողողինատները՝ անձնագրային տվյալները, անուն-ազգանունը, պաշտոնը, էլ. փոստի հասցեն, հեռախոսի համարները և ֆաքսը,

կ) Առաջարկների հարցմանը մասնակցելու և հայտի ներկայացման հետ կապված պարտականությունների կատարման ապահովումը առևտրային առաջարկի արժեքի 3%-ի չափով:

Երաշխիքը պետք է ներկայացվի ապահովագրական պարտավորության տեսքով և լինի աներկանչելի:

Երաշխիքի (ապահովագրական պարտավորության) գումարը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների համար պետք է արտահայտված լինի հայկական դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար համապատասխանաբար՝ ԱՄՆ դոլարով:

Երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) պետք է գործի առաջարկների հարցման հայտի գործողության ժամկետի ընթացքում, մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Որպես բենեֆիցիար երաշխիքում (ապահովագրական պարտավորության մեջ) պետք է նշված լինի Պարվիրատուն, իսկ պրինցիպալ՝ Առաջարկների հարցման Մասնակիցը, երաշխավոր՝ բանկը կամ ապահովագրական ընկերությունը, որոնք տվել են երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը):

Երաշխիքում (ապահովագրական պարտավորության մեջ) պետք է նախատեսված լինի Պարվիրատուի բացարձակ իրավունքը պահանջել և ստանալ երաշխիքի (ապահովագրական պարտավորության) գումարը ամբողջությամբ հետևյալ դեպքերում.

- Առաջարկների հարցման հայտի գործողության ժամկետում Առաջարկների հարցման հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո (կետ 2.6.5), դրա փոփոխման կամ հետ կանչման դեպքում,

- ներկայացված Առաջարկների հարցման հայտում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ տեղեկավորությունը կամ փաստաթղթերը դիտավորյալ աղավաղելու,

Առաջարկների հարցման Մասնակցի՝ Առաջարկների հարցման արդյունքների մասին Արձանագրությունը, 2.11 ենթաբաժնում նախատեսված կարգով ստորագրելուց հրաժարվելու,

– Առաջարկների հարցման Հաղթողի՝ Առաջարկների հարցման փաստաթղթերում սահմանված կարգով Պայմանագիր կնքելուց հրաժարվելու (ենթաբաժին 2.12:

Երաշխիքում (ապահովագրական պարտավորության մեջ) պետք է նախատեսված լինի, որ ապահովման գումարը պահանջելու և ստանալու համար Պատվիրատուն երաշխավորողին ուղղարկում է միայն գրավոր պահանջ և երաշխիքի (ապահովագրական պարտավորության) բնօրինակը:

Երաշխիքով (ապահովագրական պարտավորությունով) վճարումը պետք է իրականացվի բենեֆիցիարի դիմելու պահից 5 բանկային օրվա ընթացքում:

Երաշխիքում (ապահովագրական պարտավորության մեջ) չպետք է լինեն պայմաններ կամ պահանջներ, որոնք հակասում են վերոգրյալին կամ վերը շարադրվածը դարձնում են կատարման համար անհնար:

Առաջարկների հարցման հայտի պատճենների կազմում պետք է ներառվեն երաշխիքի (ապահովագրական պարտավորության) պատճենները:

Երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) պետք է տրախսացող երկրի Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիային համապատասխան: Ցանկացած դեպքում, երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) պետք է տրամադրվի բանկի (ապահովագրական ընկերության) կողմից, որոնց մասին ստույգ հայտնի է, որ նրանք չեն հանդիսանում անվճարունակ, սնանկ, չեն գտնվում արտաքին կառավարման ներքո կամ նրանց լիցենզիաները կասեցված չեն ամբողջությամբ կամ մասնակի: Թվարկված պահանջները հաստատվում են համապատասխան գործունեության համար լիցենզիա տրամադրող մարմնի կողմից:

Երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) վերադարձվում է Առաջարկների հարցման հաղթողին Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո: Եվ այդ պահից ուժի մեջ է մտնում Պայմանագրով Կատարողի պարտավորությունների կատարման ապահովումը: Առաջարկների հարցման մնացած Մասնակիցներին երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) վերադարձվում է (իրենց հարցումով) Պայմանագրի ստորագրումից, Առաջարկների հարցման չկայացած հայտարարելուց կամ հայտի գործողության ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (կապված նրանից, թե ինչը ավելի վաղ տեղի կունենա):

Երաշխիքը (ապահովագրական պարտավորությունը) կարող է ներկայացվել երաշխիք տրամադրած բանկին (ապահովագրական ընկերությանը)՝ պարտավորության ապահովության գումարը վճարելու համար, Պատվիրատուի որոշման հիման վրա՝ Առաջարկների հարցման Մասնակցի կողմից իր պարտավորությունների խախտման դեպքում:

Առաջարկների հարցման Մասնակիցների կողմից պարտավորությունների ապահովման չներկայացումը հիմք է հանդիսանում Առաջարկների հարցման հայտի մերժման համար:

կ) այլ փաստաթղթեր, որոնք Մասնակցի կարծիքով հաստատում են իր համապատասխանությունը ներկայացվող պահանջներին, համապատասխան մեկնաբանություններով, որոնք բացատրում են նշված փաստաթղթերի ներկայացման

նպատակը:

Այն դեպքում, որք Մասնակիցը գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, նա պարտավոր է ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք նախատեսված են սույն փաստաթղթերի 2.5.2 կետում՝ վավերացված ապոստիլով: Այն դեպքում, երբ առաջարկի հարցման Մասնակցի երկրի օրենսդրությամբ այս կամ այն փաստաթղթի ներկայացումն անհնարին է, Մասնակիցը պարտավոր է ներկայացնել տեղեկանք նշված պատճառների բացատրությամբ, ինչպես նաև (հնարավորինի սահմաններում) համանման փաստաթուղթ, որը բովանդակությամբ մոտ է հարցվողին (ապոստիլացված):

Բոլոր նշված փաստաթղթերը Մասնակից կողմից կցվում են Առաջարկին:

Եթե որևիցե պատճառով Մասնակիցը չի կարող ներկայացնել պահանջվող փաստաթուղթը, նա պարտավոր է կցել ազատ ոճով կազմված, ստորագրված և կնքված տեղեկանք, որը բացատրում է պահանջվող փաստաթղթի բացակայությունը, ինչպես նաև Պարվիրատուին հավաստիացումները՝ նշված պահանջին Մասնակցի համապատասխանության վերաբերյալ:

## 2.6. Առաջարկների ներկայացումը և դրանց ընդունումը

2.6.1. Ներկայացնելուց առաջ Առաջարկը և դրա պատճենները պետք է դրվեն ապահով փակ ծրարներում (փաթեթներում, արկղերում և այլն): Բոլոր ծրարները պետք է լինեն կնքված և Մասնակցի լիազորված անձի կողմից ստորագրված: Առաջարկը տեղադրվում և փակվում են ծրարում, որի վրա նշված է «Առաջարկի Բնօրինակ»: Առաջարկի պատճենները տեղադրվում և փակվում են ծրարներում, որոնց վրա նշված է «Առաջարկի Պատճեն 1», «Առաջարկի Պատճեն 1» և այլն:

2.6.2. Փակված ծրարները Առաջարկով և դրա պատճեններով տեղադրվում են մեկ արտաքին ծրարի մեջ, որը նույնպես պետք է ապահով փակված լինի: Արտաքին ծրարի վրա նշվում է հետևյալ տեղեկատվությունը՝

2.6.3. Ծրարներից յուրաքանչյուրի վրա պետք է նշել հետևյալ տեղեկությունները՝

- ա) Պարվիրատույի անվանումը և հասցեն՝ համաձայն 1.1.1 կետին,
- բ) Մասնակցի լրիվ ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն,
- գ) Պայմանագրի առարկան՝ համաձայն 1.1.1 կետին:

2.6.4. Մասնակիցները պետք է ապահովեն իրենց Առաջարկների առաքումը Պարվիրատույի հասցեին (ենթաբաժիններ 1.1.1 և 1.1.2): Առաջարկը սուրհանդակային ծառայության միջոցով առաքելիս, խորհուրդ է տրվում փոստային ծառայության ներկայացուցչին և փոստային գործակալին տեղեկացնել սույն Առաջարկի առաքման կարգի վերաբերյալ: Սույն կարգի պայմանների չկատարումը Պարվիրատուին իրավունք է ընձեռում մերժել ներկայացվող Առաջարկը:

2.6.5. Պարվիրատուն դադարեցնում է Առաջարկների ընդունումը 2021թ.-ի դեկտեմբերի 21-ին ժամը 10:00: Առաջարկները, որոնք ստացվել են վերը սահմանված ժամկետից ուշ, Պարվիրատուի կողմից կմերժվեն առանց ըստ էության քննարկման՝ անկախ

ուշացման պատճառներից:

2.6.6. Պատվիրատուն ծրարն առաքած անձին տալիս է ստացական ծրարը ստանալու մասին՝ նշելով ստացման ժամկետը:

2.6.7. Հաջորդ փուլերի (ենթակետ 1.1.5) (դրանց անցկացման դեպքում) Առաջարկների ընդունման ավարտի ժամկետի և վայրի մասին տեղեկությունները հավելյալ կտրամադրվեն Մասնակիցներին:

## 2.7. Հարցման արդյունքում ստացված առաջարկների բացումը

2.7.1. Պատվիրատուն իրականացնում է ստացված ծրարների բացման հրապարակային ընթացակարգը 2021թ.-ի դեկտեմբերի 21-ին ժամը 11:00-ին Պատվիրատուի տեղական ժամանակով հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան Ղափանցյան 2/12., «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ, հանձնաժողովի առնվազն երկու անդամի ներկայությամբ:

2.7.2. Այս ընթացակարգին կարող են ներկա լինել առաջարկների հարցման Մասնակիցների ներկայացուցիչները՝ որոնք ժամանակին են ներկայացրել առաջարկները: Տվյալ Ընթացակարգում մասնակցության համար առաջարկների հարցման Մասնակիցներն պետք է իրենց հետ ունենան Առաջարկների հարցման կազմակերպչի կողմից տրված ծրարների ստացումը հավաստող ստացականի բնօրինակը:

2.7.3. Առաջարկների հարցման Մասնակիցների ներկա ներկայացուցիչները գրանցվում են, իսկ գրանցման թերթիկը կցվում է ծրարների բացման արձանագրությանը:

2.7.4. Տվյալ ընթացակարգի ընթացքում, Հանձնաժողովը բացում է յուրաքանչյուր ստացված ծրարը և հայտնում է հետևյալ տեղեկությունները՝ հենվելով առաջարկների նյութի վրա՝

ա) առաջարկների հարցման Մասնակցի անվանումը և հասցեն,

բ) մատուցվող ծառայությունների անվանումը և առաջարկի ընդհանուր արժեքը,

գ) այլ տեղեկություններ, որոնք Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում:

2.7.5. Բացման ընթացակարգի ընթացքում, Հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որտեղ նշվում է հանձնաժողովի կողմից հայտարարված ամբողջ տեղեկատվությունը:

## 2.8. Առաջարկների գնահատում և բանակցությունների վարում

### 2.8.1. Ընդհանուր դրույթներ

Առաջարկների գնահատումը իրականացվում է Առաջարկների հարցման հանձնաժողովի կողմից և այլ անձանց կողմից (փորձագետներ և մասնագետներ)՝ հրավիրված Առաջարկների հարցման հանձնաժողովի կողմից:

Առաջարկների գնահատումը ներառում է ընտրական փուլը (կետ 2.8.2), անհրաժեշտության դեպքում բանակցությունների վարում (կետ 2.8.3) և գնահատման փուլը (կետ 2.8.4)

Հաջորդ փուլերում (կետ 1.1.5) (դրանց անցկացման դեպքում) Առաջարկների գնահատման կարգը, չափանիշները և մեթոդները, կարող են փոփոխվել: Դա կարտահայտվի հետագա փուլերի Առաջարկների հարցման փաստաթղթերում՝ այդ փուլը անցաց Մասնակիցներին տեղեկացման հետ միասին:

## 2.8.2. Ընտրական փուլ

Ընտրական փուլի շրջանակում գնման հանձնաժողովը (այսուհետ՝ առաջարկների հարցման հանձնաժողով) կստուգի՝

ա) Առաջարկների ձևակերպման ճշտությունը և դրանց էության համապատասխանությունը սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին,

բ) Մասնակիցների համապատասխանությունը սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին,

գ) առաջարկվող ծառայությունների համապատասխանումը սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին,

դ) առաջարկվող պայմանագրային պայմանների համապատասխանումը սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին:

Ընտրական փուլի շրջանակում, Առաջարկների հարցման հանձնաժողովը կարող է Մասնակիցներից պահանջել իրենց Առաջարկների բացատրություն կամ լրացում, այդ թվում՝ բացակա փաստաթղթերի ներկայացում: Ընդ որում, Առաջարկների հարցման հանձնաժողովը իրավունք չունի պահանջել բացատրություններ կամ փաստաթղթեր, որոնք փոխում են Առաջարկի էությունը:

Առաջարկի ձևակերպման ճշտությունը ստուգելիս, Առաջարկների հարցման հանձնաժողովը իրավունք ունի ուշադրություն չդարձնել մանր բացթողումների և թերությունների վրա, որոնք չեն ազդում Առաջարկի էության վրա: Առաջարկների հարցման հանձնաժողովը, Մասնակցի գրավոր համաձայնությամբ, կարող է ուղղել բացահայտ ուղղագրական և հանրահաշվային սխալները (ողղումների տակ ստորագրել):

Ընտրական փուլի անցկացման արդյունքներով, Առաջարկների հարցման հանձնաժողովը մերժում է Առաջարկները, որոնք

ա) էականորեն չեն համապատասխանում սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին,

բ) ներկայացված են այնպիսի Մասնակիցների կողմից, որոնք չեն համապատասխանում սույն Առաջարկների հարցման փաստաթղթերի պահանջներին,

գ) ներկայացված են այնպիսի Մասնակիցների կողմից, որոնք չեն ներկայացրել սույն փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են Մասնակցի վերաբերյալ անարժանահավատ տեղեկություններ՝

դ) ներառում է առաջարկություններ, որոնք չեն համապատասխանում սույն Առաջարկների



հարցման փաստաթղթերի պահանջներին,

ե) պարունակում են բացահայտ ուղղագրական և հանրահաշվային սխալներ, որոնց ուղղման հետ Մասնակիցը չի համաձայնվել:

Այն դեպքում, եթե հայտեր ներկայացրած Մասնակիցները բավարարում են հետևյալ պահանջներից յուրաքանչյուրին՝

Ընկերության հիմնադիրների (բաժնետերերի) կազմի մեջ միևնույն անձիք (իրավաբանական կամ ֆիզիկական), ընդ որում նրանց ընդհանուր բաժնեմասը ընկերություններից յուրաքանչյուրում գերազանցում է 50%-ը

- Մեկ ընկերությունը հանդիսանում է մյուս ընկերության 50%-ից ավել բաժնետիրոջ սեփականատեր:

- Գործադիր մարմինը միևնույնն է, այդ դեպքում դրանք դիտարկվում են որպես միմյանց միջև փոխկախված անձանց մեկ խումբ, և նրանցից պետք է ներկայացվի մեկ հայտ, իսկ հակառակ դեպքում Առաջարկների հարցման հանձնաժողովը իրավունք ունի այդ խմբի կողմից սրացված բոլոր հայտերը մերժել:

### 2.8.3. Բանակցությունների վարում

Առաջարկների ուսումնասիրումից և գնահատումից հետո Պարվիրատուն իրավունք ունի անցկացնել բանակցություն ցանկացած Մասնակցի հետ՝ նրա Առաջարկի ցանկացած դրույթի առումով:

Բանակցությունները կարող են վարվել մեկ կամ մի քանի փուլով: Բանակցությունների հերթականությունը սահանում է Պարվիրատուն: Բանակցությունների վարման ժամանակ Պարվիրատուն կխուսափի մյուս Մասնակիցներին սրացված Առաջարկների պարունակության հայտնումից, ինչպես նաև իրենց բանակցությունների ընթացքի և բովանդակության բացահայտումից, այսինքն՝

ա) Պարվիրատուի և Մասնակցի միջև բոլոր բանակցությունները կրում են գաղտնի բնույթ:

### 2.8.4. Գնահատման փուլ

Գնահատման փուլի շրջանակում Առաջարկների հարցման հանձնաժողովը գնահատում և համեմատում է Առաջարկները՝ հաշվի առնելով բանակցությունների արդյունքները (կետ 2.8.3) և կատարում է դրանց դասակարգում՝ ըստ Պարվիրատուի համար նախընտրելիության աստիճանի՝ Առաջարկների հարցման Հանձնաժողովի Կանոնակարգի հաստատմամբ, ելնելով հետևյալ չափանիշներից՝

ա) մատուցվող ծառայությունների արժեքը, մատուցման և դրանց դիմաց վճարման պայմանները,

բ) Ծառայությունների մատուցման տեխնոլոգիական և կազմակերպատեխնիկական առաջարկները,

գ) Մասնակցի փորձը, ռեսուրսային հնարավորությունները և գործնական համբավը:

## 2.9. Սակարկում (գների կանոնակարգում)

2.9.1. Պարզվիրարություն իրեն վերապահում է իրավունք՝ հնարավորություն տալ առաջարկի հարցման Մասնակիցներին կամավոր բարձրացնելու իրենց հայտերի գրավչությունը նախնական (հայտում նշված) գնի իջեցմամբ (այսուհետև՝ «Վերասակարկության ընթացակարգ», «Վերասակարկություն»), պայմանով, որ հայտի այլ դրույթներ կմնան անփոփոխ:

2.9.2. Վերասակարկության ընթացակարգի անցկացման մասին, ինչպես նաև դրա անցկացման կարգի մասին որոշումը ընդունում է Գնումների հանձնաժողովը ինքնուրույն՝ սույն առաջարկի հարցման փաստաթղթերի դրույթներին համաձայն: Սպասվում է, որ վերասակարկությունը կանցկացվի այն դեպքերում, եթե Մասնակիցների կողմից հայտերում հայտարարված գները, ըստ Գնումների հանձնաժողովի բավականաչափ բարձրացված են կամ առաջարկի հարցման Կազմակերպիչը ծրարների բացումից հետո (ենթաբաժին 2.7 մինչև առաջարկի հարցման Հաղթողի որոշելը (ենթաբաժին 2.10) կստանա խնդրանք վերասակարկություն անցկացնելու մասին այն Մասնակիցներից որևիցէ մեկից, ում հայտը նախնական դասակարգման ընթացքում դասվել է չորրորդ տեղից ոչ ցածր:

2.9.3. Վերասակարկությանը մասնակցելու պարտադիր հրավիրվում են գնման գործընթացի այն Մասնակիցները, որոնց մասնակցության հայտերը նախնական դասակարգման ժամանակ գրավել են առաջինից չորրորդ տեղերը: Գնումների հանձնաժողովի որոշումով վերասակարկմանը կարող են մասնակցել նաև գնման գործընթացի այն Մասնակիցները, որոնց մասնակցության հայտերը նախնական դասակարգման ժամանակ գրավել են ավելի ցածր տեղեր:

2.9.4. Պարտադիր վերասակարկումը իրականացվում է հետևյալ դեպքերում.

- Երբ գնման գործընթացի բոլոր Մասնակիցները ներկայացրել են հայտեր, որոնց գինը բարձր է կամ հավասար է գնման պլանային գնին,
- Եթե գնման գործընթացի երկու կամ ավելի մասնակից և իրենց հայտերը հայտարարվել են համապատասխանող գնումային փաստաթղթերի պայմաններին:

2.9.5. Վերասակարկությանը կարող են մասնակցել հրավիրվածների թվից ցանկացած քանակի Մասնակիցներ: Վերասակարկությանը հրավիրված առաջարկների հարցման Մասնակիցը կարող է չմասնակցել վերասակարկությանը, այդ դեպքում նրա հայտը շարունակում է գործել նախկինում հայտարարված գնով: Այդպիսի Մասնակիցների ներկայացուցիչները վերասակարկությանը չեն թույլատրվում:

2.9.6. Վերասակարկությունը կարող է անցկացվել անսահմանափակ:

2.9.7. Գնման գործընթացի մասնակցի առաջարկությունները գնի ավելացման վերաբերյալ չեն դիտարկվում, նմանաբան մասնակիցը համարվում է վերասակարկությանը չմասնակցած, գնման մասնակցության նրա հայտը գործում է նախկինում հայտարարված

գնով:

2.9.8. Վերասակարկությունը կարող է ունենալ անցկացման առերես, հեռակա կամ առերեսհեռակա (խառը) ձև:

2.9.9. Վերասակարկության անցկացման մանրամասների պարզաբանման համար դիմել Պարվիրատուի կոնսուլտացիային անձանց:

2.9.10. Վերասակարկությանը մասնակցությունը Պարվիրատուի կողմից չի գնահատվում որպես 2.4.1. կետի պահանջների խախտում:

2.10. Առաջարկների հարցման հաջորդ փուլերի անցկացման մասին որոշման ընդունում կամ Հաղթողի որոշում

2.10.1. Առաջարկների հարցման հանձնաժողովը իր նիստի ժամանակ ընդունում է կամ Հաղթողի որոշման մասին որոշում, կամ Առաջարկների հարցման հավելյալ փուլեր, կամ առանց հաղթողի որոշման և Պայմանագրի կնքման փվյալ առաջարկների Հարցման ընթացակարգի ավարտի մասին որոշում (կետ 1.1.5) հետևյալ դեպքերում համապատասխանաբար՝

ա) այն դեպքում, եթե Մասնակիցներից որևէ մեկի Առաջարկը մյուս Մասնակիցների Առաջարկներից էականորեն լավն է, և այդ Առաջարկը ամբողջությամբ բավարարում է Պարվիրատուին, Պարվիրատուն ճանաչում է այդ Մասնակցին Հաղթող և նրա հետ կկնքի Պայմանագիր (կետ 2.12) դրանով Առաջարկների հարցման ընթացակարգը կավարտվի,

բ) այն դեպքում, եթե լավագույն Առաջարկը լիովին չի բավարարի Պարվիրատուին, Առաջարկների հարցման հանձնաժողովը իրավունք ունի Առաջարկների հարցման հավելյալ փուլերի անցկացման վերաբերյալ որոշում ընդունել և Առաջարկների հարցման պայմաններում կատարել փոփոխություններ:

գ) եթե Առաջարկների հարցման հանձնաժողովի կարծիքով Մասնակիցների Առաջարկների բարելավման հնարավորություններ չեն կանխատեսվում և հետագա փուլերի անցկացումը անիմաստ է, Հանձնաժողովը իրավունք ունի Առաջարկների հարցման ընթացակարգի դադարեցման վերաբերյալ որոշում ընդունել:

2.10.2. Առաջարկների հարցման հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է հանձնաժողովի նիստի արձանագրությամբ:

2.11. Առաջարկների հարցման արդյունքների Արձանագրության ստորագրումը

Առաջարկների հարցման արդյունքների արձանագրության ստորագրումը նշանակվում է (նախնական) մինչև 30.12.2021թ.-ի ք. Երևան, Ղափանցյան 2/12 «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ հասցեով: Հանձնաժողովը հատուկ դեպքերում կարող է երկարաձգել այդ ժամկետը: Առաջարկների հարցման արդյունքների արձանագրության ստորագրման ստույգ ժամը և վայրը Առաջարկների հարցման հաղթողին կհայտնվի լրացուցիչ:

2.11.1. Առաջարկների հարցման արդյունքների մասին արձանագրությունը յուրաքանչյուր կողմից ստորագրվում է այն անձի կողմից, ով ՀՀ օրենսդրությանը համապատասխան

իրավունք ունի գործել Առաջարկների հարցման Մասնակցի անունից առանց լիազորագրի կամ լիազորագրի հիման վրա նրա կողմից պատշաճ կարգով լիզորված անձը (այսուհետև՝ «**Լիազորված անձ**»), ինչպես նաև կնքվում է: Ընդ որում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել Առաջարկների հարցման արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրող անձի իրավասությունների հաստատում:

#### 2.11.2. Այն դեպքում եթե Առաջարկների հարցման Հաղթողը՝

չի ստորագրի Պայմանագիրը Առաջարկների հարցման արդյունքների մասին Արձանագրությամբ սահմանված ժամկետներում,

կիրառվի Պայմանագրի ստորագրումից 1.2.4. կետին համապատասխան որոշված պայմաններով,

եթե ի հայտ գա, որ Առաջարկների հարցմանը ներկայացրել է ոչ ճշգրիտ տեղեկատվություն,

չի կատարի այլ պայմաններ, որոնք նախատեսված են սույն Առաջարկների հարցման փաստաթղթերով,

ապա նա կորցնում է հաղթողի կարգավիճակը, իսկ Պատվիրատուն իրավունք ունի ընտրել այլ Հաղթողի՝ մնացած գործող Առաջարկների թվից:

#### 2.12. Պայմանագրի ստորագրում

2.12.1. Պատվիրատուի և հաղթողի միջև Պայմանագիրն ստորագրվում է Առաջարկների հարցման արդյունքների մասին Արձանագրության հիման վրա (ենթաբաժին 2.11) 10 օրվա ընթացքում: Կողմերի համաձայնությամբ Պայմանագրի ստորագրումը կարող է երկարաձգվել, բայց 30 օրից ոչ ավել:

2.12.2. Այն դեպքում, եթե ՀՀ գործող օրենսդրությանը և Պատվիրատուի հիմնադիր փաստաթղթերով կապահանջվի Պատվիրատուի համապատասխան իրավասու կառավարման մարմինների (բաժնետերերի ընդհանուր ժողով, Տնօրենների խորհուրդ, ԿԳՄ և այլն)՝ Հաղթողի կողմից առաջարկված պայմաններով կնքվող պայմանագրի նախնական համաձայնեցում (հավանություն, հաստատում), ապա Հաղթողի հետ Պայմանագիրն կկնքվի միայն նման համաձայնեցումից (հավանությունից, հաստատումից) հետո, իսկ 2.12.1 կետում նշված ժամկետը հաշվարկվում է նման համաձայնեցումը (հավանությունը, հաստատումը) ստանալուց հետո:

2.12.3. Պայմանագրի պայմանները որոշվում են համաձայն Պատվիրատուի պահանջների և 1.2.4 կետի:

#### 2.13. Առաջարկների հարցման արդյունքների մասին տեղեկացում Մասնակիցներին

2.13.1. Առաջարկների հարցման արդյունքների մասին արձանագրության ստորագրումից հետո Պատվիրատուն անհապաղ առաջարկների հարցման բոլոր Մասնակիցներին էլեկտրոնային տեսքով ծանուցում է ուղարկում, որում նշում է առաջարկների հարցման Հաղթողի անվանումը և առաջարկների հարցման առարկայի համառոտ շարադրությունը:

2.13.2. Պատվիրատուն հրապարակում է վերը նշված տեղեկությունները առաջարկների հարցման արդյունքների կամ այն մասին, որ այն չի կայացել Պատվիրատուի [www.mek.am](http://www.mek.am) պաշտոնական կայքում և [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում:

### **3. Պայմանագրով Կատարողի պարտավորությունների կատարման ապահովումը**

Պայմանագրի ստորագրումից առաջ Առաջարկների հարցման Հաղթողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարման ապահովումը կնքվող Պայմանագրի ընդհանուր գնի ոչ պակաս քան 10% չափով (առանց ԱԱՀ):

Պայմանագրի կատարման ապահովումը պետք է ունենա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմված երաշխիքի ձև:

Երաշխիքը պետք է հետևյալն չլիներ:

Երաշխիքի գումարը պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով: ՀՀ ոչ ռեզիդենտների համար ԱՄՆ դոլարով:

Երաշխիքը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների կատարումը ողջ ծավալով՝ համաձայն Պայմանագրի:

Պայմանագրի գործողության ժամկետի երկարացման դեպքում բանկային երաշխիքի գործողության ժամկետը նույնպես պետք է երկարացվի նույն ժամանակահատվածով: Եթե Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվում է, սակայն Պայմանագրով նախատեսված պարտականությունները չեն կատարվել կամ ոչ պարզաճ են կատարվել, ապա այդ դեպքում բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է երկարացվի այն ժամանակահատվածով, ինչ ժամանակահատվածով այն տրված է եղել:

Որպես բանկային երաշխիքի բենեֆիցիար պետք է նշվի Պատվիրատուն, պրինցիպալ՝ Առաջարկների հարցման Հաղթողը, երաշխավոր՝ բանկը կամ ապահովագրական ընկերությունը, որոնք տվել են երաշխիքը:

Երաշխիքում պետք է նախատեսված լինի Պատվիրատուի՝ երաշխիքի գումարի ամբողջությամբ պահանջելու բացարձակ իրավունքը՝ Պայմանագրի չկատարման հետ կապված N° 2 Հավելվածում ուղղակի նշված դեպքերում:

Երաշխիքում պետք է նախատեսված լինի, որ ապահովման գումարի պահանջի համար Պատվիրատուն երաշխավորին է ուղարկում միայն գրավոր պահանջ և բանկային երաշխիքի բնօրինակը:

Երաշխիքով վճարումը պետք է իրականացվի բենեֆիցիարի դիմումից հետո 5 աշխատառաջին օրվա ընթացքում:

Երաշխիքում չպետք է լինեն վերոշարադրյալին հակասող պայմաններ կամ պահանջներ:

Երաշխիքը պետք է տրամադրվի բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից, որոնք գործում են մասնակցի ռեզիդենտ հանդիսացող երկրի Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիային համապատասխան:

Պայմանագրի կատարման ապահովման պահպանման և հետ վերադարձման կարգն ու պայմանները ներառված են N° 2 Հավելվածում:

Կատարողի՝ Պայմանագրով պարտավորությունների կատարման ապահովումը չներկայացնելը կամ դրա՝ վերը սահմանված պայմանների ու պահանջների խախտմամբ ներկայացնելը հիմք է հանդիսանում Առաջարկների հարցման արդյունքների մասին արձանագրությունը միակողմանի լուծելու համար Առաջարկների հարցման Մասնակցի պարտավորությունների կատարման ապահովման պահպանմամբ (ենթաբաժին 3): Ընդ որում հանձնաժողովը որոշում է Առաջարկների հարցման նոր Հաղթողին մնացած Մասնակիցների թվից:

#### 4. Առաջարկում ներառվող փաստաթղթերի ձևեր

##### 4.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակ ( ձև 1)

##### 4.1.1. Օֆերտայի ներկայացման նամակի ձև

#### ձևի սկիզբ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թիվ

№ \_\_\_\_\_

Հարգելի պարոնայք,

Ուսումնասիրելով առաջարկների հարցման անցկացման մասին ծանուցումը, որը հրատարակվել էր [նշվում է հրատարակման ամսաթիվը և աղբյուրը], և Առաջարկների հարցման փաստաթղթերը, և կիրառելով դրանցում սահմանված առաջարկների հարցման պահանջները և պայմանները

Մասնակցի լրիվ անվանումը, կազմակերպչական կազմակերպչական ձևը

որը գրանցված է հետևյալ հասցեում

(Մասնակցի հրավարանական հասցեն)

առաջարկում է հետևյալ ծառայությունների մատուցման համար կնքել Պայմանագիր՝

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թիվ

Հարգելի պարոնայք,

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

(Մատուցվող ծառայությունների կրճատ նկարագրությունը)

Տեխնիկական առաջարկի, առևտրային առաջարկի հիման վրա և դրանց համապատասխան, որոնք հանդիսանում են սույն նամակի անբաժանելի մասը, և սույն նամակի հետ կազմում են ընդհանուր հետևյալ գումարի չափով Առաջարկ՝

Առաջարկի վերջնական արժեքը Առաջարկների հարցման փաստաթղթերում նշված տարադրամով առանց ԱԱՀ: \_\_\_\_\_

Սույն Առաջարկը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ

և գործում է մինչև  
«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թիվ:

(ստորագրություն Կ.Տ.)

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն.)

### ձևի վերջ

#### 4.1.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրական ձևը) և իր իրավաբանական հասցեն:

Մասնակիցը պետք է նշի ծառայությունների մատուցման արժեքը թվերով և բառերով այն տարադրամով և պայմաններով, որոնք նշված են սույն փաստաթղթերում, առանց ԱԱՀ՝ Առևտրային առաջարկին համապատասխան (ենթաբաժին 4.3, 2-րդ աղյուսակի «ԸՆԴԱՄԵՆԸ» սյունակ): Գինը անհրաժեշտ է նշել XXX XXX XXX, XX դրամ (ԱՄՆ դոլար) ձևաչափով, օրինակ՝ 1 234 567, 89 «Մեկ միլիոն երկու հազար երեք հարյուր երեսուցորս հինգ հարյուր վաթսուներթ» դրամ (ԱՄՆ դոլար)»:

Մասնակիցը պետք է նշի Առաջարկի գործողության ժամկետը՝ համաձայն 2.4.2 ենթակետի պահանջների:

Մասնակիցը պետք է թվարկի և նշի օֆերտայի ներկայացման նամակին կից ներկայացված փաստաթղթերի ծավալը, որոնք որոշում են Մասնակցի տեխնիկական-առևտրային առաջարկի էությունը:

#### 4.2. Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջարկ (ձև 2)

##### 4.2.1. Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջարկի ձև

### ձևի սկիզբ

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. N° \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 1

**Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջարկ**

Մասնակցի անունը և հասցեն՝ \_\_\_\_\_

(Այսպես Մասնակիցը ազատ ձևով ներկայացնում է իր տեխնիկական առաջարկը՝ հենվելով ծառայությունների մատուցման տեխնիկական հանձնարարության նախագծի վրա՝ համաձայն 1 և 2 Հավելվածների պահանջներին)

\_\_\_\_\_  
(ստորագրություն Կ.Տ)

\_\_\_\_\_  
(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն)

### **ձևի վերջ**

#### 4.2.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներակայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրավական ձևը) և իր հասցեն:

Տեխնիկական առաջարկում նշվում են 1 Հավելվածի բոլոր ուղղությունները՝ հաշվի առնելով պայմանագրի առաջարկվող պայմանները (Հավելված 2): Մասնակիցը իրավունք ունի նշել, որ նա համաձայն է Տեխնիկական հանձնարարության հետ, որը ներկայացված է Հավելված 1 Առաջարկների հարցման փաստաթղթերում, բացառությամբ «այսպիսի» փոփոխությունների (և նշել այդ փոփոխությունները):

Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջարկ կծառայի որպես Պայմանագրի № 1 հավելվածի պատրաստման հիմք: Այդ առումով, Պայմանագրի պատրաստման վրա Պարվիրատուի և Մասնակցի ուժի և ժամանակի ընդհանուր ծախսերի նվազեցման նպատակով, սույն առաջարկը պետք է պատրաստել այնպես, որպեսզի հնարավոր լինի այն նվազագույն փոփոխություններով ներառել Պայմանագրի մեջ:

#### 4.3. Առևտրային առաջարկ (ձև 3)

##### 4.3.1. առևտրային առաջարկի ձև

### **ձևի սկիզբ**

« \_\_\_\_\_ » թ. № \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 2

### **Առևտրային առաջարկ**

Մասնակցի անունը և հասցեն՝ \_\_\_\_\_

**մատուցվող ծառայությունների արժեքի հաշվարկ**



№	Ծառայությունների անվանումը	Ամսավճար, փարադրամով՝ ԱԲՀ փաստաթղթերի պայմանների համաձայն փարադրամով, առանց ԱԱՀ

№	Ծախսերի հոդվածի անվանումը	Արժեքը, փարադրամով <sup>ա</sup> ԱԲՀ փաստաթղթերի պայմանների համաձայն, առանց ԱԱՀ
	Ծառայությունների արժեքը (աղյուսակ 1-ի ընդամենը)	
	Լրացուցիչ ծառայությունների արժեքը [վերծանել ինչպիսի լրացուցիչ ծառայություններ պետք է ներառվեն արժեքում]	
	Այլ ծախսեր (վերծանել՝ նշելով յուրաքանչյուր կոնկրետ ծախսի տեսակը)	
	և այլն	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ (1+2+...)</b>	

<b>Աղյուսակ 3. Ծառայությունների մատուցման այլ առևտրային պայմանները</b>		
№	Անվանումը	Նշանակությունը
	Ծառայությունների մատուցման սկիզբը	
	Ծառայությունների մատուցման ավարտը	
	Ծառայությունների մատուցման ժամանակացույցը	
	Վճարման պայմանները	
	Երաշխիքային ժամկետը	
	և այլն	

(ստորագրությունը, Կ.Տ)

(ստորագրողի աազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

#### 4.3.2. Լրացման հրահանգներ

Մասնակիցը նշում է օֆերտա ներկայացնելու մասին նամակի համարը և ամսաթիվը, որի

հավելվածը հանդիսանում է սույն առևտրային առաջարկը:

Մասնակիցը պետք է նշի իր լրիվ անվանումը (նշելով կազմակերպատիրական ձևը) և հասցեն:

Աղյուսակ 1-ում բերվում է ինքնին Ծառայությունների արժեքի հաշվարկը, առանց լրացուցիչ ծախսերի արժեքի հաշվառման: Աղյուսակ 1-ում ամսական վարձավճար:

Աղյուսակ 2-ում բերվում է լրացուցիչ ծառայությունների արժեքի հաշվարկը: Ընդ որում, 2-րդ աղյուսակի 1-ին սյունակում նշվում է 1-ին աղյուսակում նշված Ծառայությունների մատուցման ընդհանուր արժեքը (սյունակ «ԸՆԴԱՄԵՆԸ»):

Աղյուսակ 3-ում բերվում Մասնակցի առևտրային առաջարկի այլ պարամետրերը:

Առևտրային առաջարկը կծառայի որպես հիմք Պայմանագրի № 1 հավելվածը նախապատրաստելու համար: Այդ կապակցությամբ, նպատակ ունենալով նվազեցնել Պարվիրատուի և Մասնակցի ընդհանուր ուժերի և ժամանակի ծախսը Պայմանագիրը նախապատրաստելիս, սույն Առևտրային առաջարկը պետք է նախապատրաստվի այնպես, որպեսզի հնարավոր լինի այն, նվազագույն փոփոխություններով, ընդգրկել Պայմանագրում:

Առաջարկի գինը պետք է նշվի ստույգ թվերով:

4.4. Պայմանագրի նախագծի առումով փարաձայնությունների արձանագրություն (ձև 4)

4.4.1. **Պայմանագրի նախագծի առումով փարաձայնությունների արձանագրության ձևը**

**ձևի սկիզբ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ. № \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 3

**Պայմանագրի նախագծի առումով փարաձայնությունների արձանագրություն**

Մասնակցի անունը և հասցեն ' \_\_\_\_\_

<b>Պայմանագրի «Պարտադիր» պայմանները</b>				
N°	Պայմանագրի նախագծի N° կետի համարը (Հավելված 2)	Սկզբնական ձևակերպումներ	Մասնակցի առաջարկը	Նշումներ, հիմնավորումներ
1				
2				
3				

<b>Պայմանագրի «Ցանկալի» պայմանները</b>				
N°	Պայմանագրի	Սկզբնական	Մասնակցի	Նշումներ,

	Նախագծի № կետի համարը (Հավելված 2)	ձևակերպումներ	առաջարկը	հիմնավորումներ
1				
2				
3				
(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն.) (ստորագրություն)				
<b>ձևի վերջ</b>				

#### 4.4.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներակայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրավական ձևը) և իր հասցեն:

Տվյալ ձև լրացվում է թե այն դեպքում, երբ Մասնակիցը ունի Պայմանագրի նախագծի (Հավելված 2) փոփոխման պահանջներ կամ առաջարկներ, թե այն դեպքում, երբ այդպիսի պահանջները կամ առաջարկները բացակայում են. վերջին դեպքում աղյուսակներում նշվում է «Համաձայն եմ առաջարկված Պայմանագրի նախագծի հետ» արտահայտությունը:

Այն դեպքում, երբ մասնակիցը ունի Պայմանագրում փոփոխություններ կատարելու առաջարկներ, Մասնակիցը իր Առաջարկի կազմում, պետք է ներկայացնի սույն Տարածայնությունների արձանագրությունը: Մասնակիցը պետք է հստակ բաժանի Պայմանագրի իր համար պարտադիր և ցանկալի փոփոխությունները: Այսպես «Պարտադիր» են համարվում այնպիսի պայմանները և առաջարկները, որոնց չընդունման դեպքում, նա կիրառարվի կնքել Պայմանագիրը: «Ցանկալի» են համարվում Պայմանագրի այն պայմանները, որոնք նա առաջարկում է Պարտավորության վերանայմանը, սակայն Պարտավորության կողմից դրանց մերժման դեպքում, որպես հերևանք Մասնակիցը չի հրաժարի Պայմանագիրը կնքելուց, այն դեպքում, եթե նա ճանաչվի հաղթող:

Պայմանագրի պայմանները կորոշվեն համաձայն 1.2.4 կետին համաձայն:

Պարտավորություն իրեն իրավունք է վերապահում մինչև Պայմանագրի կնքում, վերանայել և ընդունել դրա պայմանների վերաբերյալ առաջարկները և փոփոխությունները (որոնք սկզբունքային բնույթ չեն կրում): Այն դեպքում, եթե կողմերը այդ փոփոխությունների վերաբերյալ համաձայնության չգան, կողմերը ստիպված կլինեն կնքել Պայմանագիրը այդպիսի պայմաններով, որոնք նշված են սույն առաջարկների հարցման փաստաթղթերում և Հաղթողի Առաջարկում:

Ցանկացած դեպքում, Մասնակիցը պետք է ի նկատի ունենա՝

ա) եթե Մասնակցի կողմից ներկայացված որևէ պարտադիր Պայմանագրային առաջարկներ և պայմաններ, անընդունելի կլինեն Պարտավորության համար, այդպիսի Առաջարկը կմերժվի, անկախ տեխնիկական-առևտրային առաջարկի պարունակությունից,

բ) ցանկացած դեպքում, Մասնակցի կողմից Պարտավորության կողմից ներկայացված Պայմանագրի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ տարածայնությունների արձանագրության ներկայացումը, չի զրկում Մասնակցին և Պարտավորությունն այդ պայմանների քննարկման և փոփոխման իրավունքից՝ մինչպայմանագրային բանակցությունների ընթացքում՝ այդ պայմանների փոփոխման առումով որոշման գալու համար:

**4.5. Մասնակցի ձևաթերթիկ (ձև 5)**

4.5.1. Մասնակցի ձևաթերթիկի ձևը

**ձևի սկիզբ**

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. N° \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված4

**Մասնակցի ձևաթերթիկ**

N°	Անվանում	Մասնակցի մասին տվյալներ
1.	Մասնակցի կազմակերպչաիրավական ձևը և ֆիրմային անվանումը	
2.	Հիմնադիրներ (թվարկել հիմնադիրների անվանումները և կազմակերպչաիրավական ձևերը կամ բոլոր հիմնադիրների ազգանունները, անունները, հայրանունները, որոնց բաժնեմասը կանոնադրական կապիտալում գերազանցում է 10%)	
3.	Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում հաշվառվելու մասին վկայական (ամսաթիվը, համարը, ում կողմից է տրված)	
4.	Մասնակցի ՀՎՀՀ	
5.	Իրավաբանական հասցեն	
6.	Փոստային հասցեն	
7.	Մասնաճյուղերը՝թվարկել անվանումները և փոստային հասցեները	
8.	Բանկային տվյալներ (բանկի անցվանումը և հասցեն, բանկում Մասնակցի հաշվարկային հաշվեհամարը, բանկի հեռախոսահամարը, այլ բանկային տվյալներ)	
9.	Մասնակցի հեռախոսահամարները (քաղաքի կոդի հետ միասին)	
10.	Մասնակցի ֆաքսի համարը (քաղաքի կոդի հետ միասին)	
11.	Մասնակցի էլեկտրոնային հասցեն	
12.	Մասնակցի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, որը, համաձայն Մասնակցի հիմնադիր փաստաթղթերի, ունի ստորագրության իրավունք, նաև նշել պաշտոնը և կոնտակտային հեռախոսը:	
13.	Մասնակցի գլխավոր հաշվապահի ազգանունը, անունը, հայրանունը,	

14.	Մասնակցի պատրասխանադու անձի ազգանունը, անունը, հայրանունը, հեղափոխասահամարը և պաշտոնը	
-----	---	--

(ստորագրություն Կ.Տ.)

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն)

**ձևի վերջ**

4.5.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրավական ձևը) և իր հասցեն:

Մասնակիցները պետք է վորոգրյալ աղյուսակի բոլոր կետերը լրացնեն: Որևէ տվյալների բացակայության դեպքում նշել «չկա»:

Ցրողում «Բանկային տվյալներ» նշվում են տվյալները, որոնք կգործածվեն Պայմանագրի կնքման ժամանակ:

**4.6. Նմանատիպ պայմանագրերի կատարման ցանկի և ծավալների վերաբերյալ տեղեկանք (ձև 6)**

4.6.1. Նմանատիպ պայմանագրերի կատարման ցանկի և ծավալների վերաբերյալ տեղեկանքի ձևը

**ձևի սկիզբ**

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. N° \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 5

**Նմանատիպ պայմանագրերի կատարման ցանկի և ծավալների վերաբերյալ տեղեկանք**

Մասնակցի անունը և հասցեն՝ \_\_\_\_\_

N <sup>o</sup>	Կատարման ժամկետները (կատարման սկզբի տարին և ամիսը-փաստացի կամ պլանավորված կատարման ավարտման տարին և ամիսը, չավարտված պայմանագրերի համար՝ կատարված տոկոսը)	Պատվիրատուն (անվանումը, հասցեն, կոնտակտային անձը, նրա պաշտոնը, կոնտակտային հեռախոս)	Պայմանագրի նկարագիրը (ծառայությունների ծավալը, պայմանագրի հիմնական պայմանների նկարագիրը)	Պայանագրի արժեքը,	Թվարկված Պայմանագրերի առումով արտադրանքի փոխարինման պահանջի դեպքեր
1.					
2.					
3.					
...					
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ամբողջ տարվա համար [նշել տարին, օրինակ՝ «2018»</b>					<b>x</b>
1.					
2.					
3.					
...					
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ամբողջ տարվա համար [նշել տարին, օրինակ՝ «2019»</b>					<b>x</b>
4.					
5.					
6.					
...					
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ամբողջ տարվա համար [նշել տարին, օրինակ՝ «2020»</b>					<b>x</b>

Պատվիրատուները խորհուրդ են տալիս կից ներկայացնել իրենց աշխատանքի վերաբերյալ, պայմանագրի մյուս կողմերի օրհգինալ կարծիքները կամ դրանց պատճենները

\_\_\_\_\_  
(ստորագրություն Կ.Տ.)

\_\_\_\_\_  
(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն.)

### ձևի վերջ

#### 4.6.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներակայացման մասին նամակի

հետ համաձայն (ենթակետ 4.1):

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրավական ձևը) և իր հասցեն:

Տվյալ ձևում Մասնակիցը նշում է Նմանարիպ պայմանագրերի կատարման ցանկը և ծավալները, որոնք համեմատելի են 1 և 2 Հավելվածների ծավալների, ժամկետների և այլ պահանջների հետ:

Անհրաժեշտ է նշել, երեքից ոչ ավել, սակայն տասից ոչ պակաս նմանարիպ պայմանագրեր: Մասնակիցը կարող է ինքնուրույն ընտրել պայմանագրերը, որոնք, իր կարծիքով, լավագույնն են բնութագրում իր փորձը:

Մասնակիցը կարող է ներառել նաև չավարտված պայմանագրերը՝ այդ փաստի մասին պարտադիր նշելով:

**4.7. Նյութական-տեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանք(ձև 7)**

4.7.1. Նյութական-տեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանքի ձևը

**ձևի սկիզբ**

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ. N° \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 6

**Նյութական-տեխնիկական ռեսուրսների մասին տեղեկանք**

Մասնակցի անունը և հասցեն՝ \_\_\_\_\_

N°	Անվանում	Գտնվելու վայրը	Սեփականության կամ այլ իրավունք (տնտեսական վարման, գործառնական ղեկավարման)	Նպատակային շանակություն (Պայմանագրի կատարման տեսանկյունից)	Վիճակը	Ծանոթագրություն
1.						
2.						
3.						
...						

(ստորագրություն Կ.Տ.)

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն)

**ձևի վերջ**

4.7.2. Լրացման հրահանգավորում

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրական ձևը) և իր հասցեն:

Տվյալ տեղեկանքում թվարկվում են նյութական-տեխնիկական ռեսուրսները, որոնք Մասնակիցը համարում է գլխավոր և պատրաստվում է գործածել Պայմանագրի կատարման ժամանակ (պահեստ, տրանսպորտային միջոցներ, տեխափոխման ժամանակ արտադրանքի պահպանման պայմանների ապահովման միջոցներ, կապի միջոցներ, տվյալների համակարգչային մշակման միջոցները և այլն):

4.8. Մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկանք (ծև 8)

4.8.1. Մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկանքի ձև

**ձևի սկիզբ**

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. N° \_\_\_\_\_

Օֆերտայի ներկայացման մասին նամակի հավելված 7

**Մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկանք**

Մասնակցի անունը և հասցեն՝ \_\_\_\_\_

**Աղյուսակ-1. Հիմնական մարդկային ռեսուրսներ**

N°	Մասնագերի ազգանուն, անուն, հայրանուն	Կրթությունը (ինչ կրթական հաստատություն է ավարտել, ավարտման թիվը, մասնագիտությունը), թույլատրվող խմբերը, վկայականներ, լիզենզիաներ և այլն	Պաշտոնը	Տվյալ կամ նմանատիպ պաշտոնում աշխատանքային տարի
----	--------------------------------------	---	---------	--

Ղեկավար օղակ(ղեկավարը և նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը, գլխավոր տնտեսագետը, գլխավոր իրավաբանը)

1				
2				
3				



--	--	--	--	--

Մասնագետները (այդ թվում, արտադրանքի գծով մասնագետները, գնումների գծով պետ, վաճառքների գծով պետ, երաշխիքային սպասարկման գծով պետ, ձուլողնոր, տեղադրողներ, փականագործ, էլեկտրիկներ և այլն)

1				
2				
3				

Այլ անձնակազմ (այդթվում, առաքիչներ, վարորդներ, բեռնողներ, անվտանգության աշխատողներ և այլն)

1				
2				
3				

**Աղյուսակ-2. Այլ անձնակազմ**

Մասնագետների խումբ	Անձնակազմի քանակը, անձ
Ղեկավար անձնակազմ	
Ինժեներատեխնիկական անձնակազմ	
Բանվորներ և օժանդակ անձնակազմ	

(ստորագրություն Կ.Տ.)

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոն)

**ձևի վերջ**

**4.8.2. Լրացման հրահանգավորում**

Մասնակիցը նշում է Առաջարկի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներակայացման մասին նամակի հետ համաձայն (ենթակետ 4.1)

Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում՝ կազմակերպատիրավական ձևը) և իր հասցեն:

Տվյալ տեղեկանքի 1-աղյուսակում թվարկվում են միայն այն աշխատակիցները, որոնք Մասնակցի կողմից կներգրավվեն անմիջականորեն Պայմանագրի կատարման համար:



Մասնակիցը պետք է լրացնի վերը բերված տեղեկատվական նամակը, նշելով բոլոր անձանց, որոնք իր կարծիքով կարող են ճանաչվել նրա հետ փոխկապակցված: Այն դեպքում, երբ Մասնակցի կարծիքով այդպիսի անձինք չկան, ապա նամակում գրվում է հետևյալ նախադասությունը «Մեր Առաջարկը քննարկելիս, խնդրում ենք հաշվի առնել, որ [նշվում է Մասնակցի անվանումը] մոտ չկան կապեր, որոնք կարող են ճանաչվել փոխկապակցվածության բնույթ կրող անձանց հետ, որոնք այսպես կամ այնպես կապված են Պարվիրատուի Կազմակերպիչի կամ այլ կազմակերպության որը պատրաստել է նախագծային փաստաթղթերը, մասնագիրը և այլ փաստաթղթերը, որոնք անմիջապես կապված են սույն Առաջարկների հարցման անցկացման հետ»:

Սույն նամակի կազման ժամանակ, Մասնակիցը պետք է հաշվի առնի, որ ցանկացած տեղեկատվության պահումը կապերի առկայության մասին, որոնք կրում են փոխկապակցվածության բնույթ Մասնակցի և ցանկացած անձի, որն այս կամ այլ կերպ կապված է Պարվիրատուի, Կազմակերպիչի կամ այլ կազմակերպության հետ, որը պատրաստել է նախագծային փաստաթղթերը, մասնագիրը և այլ փաստաթղթերը, որոնք անմիջապես կապված են սույն Առաջարկների հարցման անցկացման հետ կարող է ճանաչվել հանձնաժողովի կողմից որպես տվյալ Առաջարկների հարցման պայմանի խախտում և որպես հետևություն՝ նման Մասնակցի Առաջարկը հայտի մերժում:

Թվարկված փաստաթղթերը չեն համարվում սպառիչ: Անհրաժեշտության դեպքում Պարվիրատուն իրավունք ունի պահանջել Մասնակցից այլ լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և երաշխիքներ:

Հավելված 1

**«ՄԷԿ» ՓԲԸ գույքի բոլոր ռիսկերից ապահովագրության, ներառյալ անավարտ շինարարության օբյեկտների տեխնիկական պահանջները**  
**I. «ՄԷԿ» ՓԲԸ-ի գույքի բոլոր ռիսկերից ապահովագրությանը, ներառյալ անավարտ շինարարության օբյեկտները**

**1. Ընդհանուր դրույթներ.**

**Ապահովադիր՝** \_\_\_\_\_ կետում նշված Պարվիրատու:

**Ապահովագրող՝** Ապահովագրական կազմակերպություն, որը բավարարում է ապահովագրական կազմակերպության նկատմամբ Մրցութային / Գնումային փաստաթղթերի \_\_\_\_\_ կետում նշված պահանջներին, որը միաժամանակ հանդիսանում է սույն Լուրի գծով Մրցույթի Հաղթող (այսուհետք տեքստում լուրի՝ **Ապահովագրող կամ Մրցույթի Հաղթող**):

**Ապահովագրված շահեր՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող Ապահովադրի գույքային շահերը:

**Ապահովագրության օբյեկտը՝** Հիմնական միջոցների օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների ապահովագրություն, այդ թվում այն օբյեկտների, որոնց նկատմամբ իրականացվում են ցանկացած տեսակի շինմոնիտորինգային աշխատանքներ, ինչպես նաև 2.1. կետում նշված այլ գույք, բացառությամբ 2.2. կետում նշված գույքի (այսուհետք լուրի տեքստում՝ **Ապահովագրված գույք**):

**Ապահովագրության տարածք՝** Հայաստանի Հանրապետության տարածքը:

**Ապահովագրության ժամկետ՝** Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է Մրցույթի Հաղթողի հետ 2022թ. հունվարի «01» ժամը 00:00-ից մինչև 2022թ. դեկտեմբերի «31» ժամը 24:00 սույն Գնումային փաստաթղթերում նշված պայմաններով՝ կիրառելով Մրցույթի Հաղթողի դիմումի մեջ նշված տարեկան սակագինը:

**2. Ապահովագրության պայմանները՝**

2.1. Ապահովագրության ենթակա են ինչպես Ապահովադրի հաշվեկշռի վրա գտնվող հիմնական միջոցների օբյեկտները և անավարտ շինարարության օբյեկտները, այնպես էլ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում հաշվեկշռի վրա ընդունված օբյեկտները, այդ թվում ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում շինմոնիտորինգային աշխատանքների արդյունքում ստեղծված (կամ ձեռքբերված) հիմնական միջոցների օբյեկտները և անավարտ շինարարության օբյեկտները, ինչպես նաև վարձակալված, լիզինգով կամ վարձույթով վերցված գույքը, կամ այլ գույք, որին Ապահովադիրը տիրապետում է և (կամ) որը օգտագործում է օրինական հիմքերով, և որը գտնվում է ապահովագրական տարածքում (պայմանով, որ նման գույքի ապահովագրությունը Ապահովադրի պարտավորություն է հանդիսանում):

Ապահովագրվող գույքը գրավ է դրված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի օգտին, որը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան փողոց 66 հասցեով: Մինչև «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից գրավի

պայմանագրի դադարեցման մասին պատշաճ տեղեկացնելը՝ ապահովագրության պայմանագրի համաձայն վճարվելիք ցանկացած հատուցում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, առաջնահերթության կարգով վճարվում է «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ որպես Շահառու, վարկառուի վարկային պարտավորության մարման նպատակով և/կամ Շահառուի կողմից փրամադրվում է գրավատուին՝ գրավի առարկայի վերականգնման նպատակով, ինչպես մասամբ այնպես էլ ամբողջությամբ: Ապահովագրողը պարտավորվում է «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին գրավոր տեղեկացնել ցանկացած այնպիսի հանգամանքի մասին, որը կարող է հանգեցնել ապահովագրության պայմանագրի փոփոխմանը կամ վաղաժամկետ դադարեցմանը: Ապահովագրության պայմանագիրը կարող է փոփոխվել կամ վաղաժամկետ դադարեցվել միայն «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գրավոր համաձայնությամբ:

2.2. Ապահովագրության ենթակա չի հետևյալ գույքը (համաձայն գույքային ապահովագրության ընդունված մեխանիզմների)՝ տեղական և արտերկրյա արժույթով կանխիկ դրամական միջոցներ, բաժնետոմսեր, փոխառության տոմսեր և այլ արժեթղթեր, ձուլածո թանկարժեք մետաղներ, պայթուցիկ նյութեր, արվեստի գործեր (այդ թվում նկարներ, կտավներ, քանդակներ, հավաքածուներ), ծրագրային ապահովում և էլեկտրոնային տվյալներ, ավտոտրանսպորտային միջոցներ (այդ թվում կցորդներ և կիսակըցորդներ), լողամիջոցներ և ջրային տրանսպորտի միջոցներ, երկաթուղային տրանսպորտի միջոցներ, օդային տրանսպորտի միջոցներ, ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու իրավունք ունեցող տրանսպորտային միջոցներ (տվյալ բացառությունը չի կիրառվում կապալառուների սարքավորումների, ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու իրավունք ունեցող տրանսպորտային միջոցների, Ապահովադրի գտնվելու վայրում գտնվելու ժամանակ՝ այն պայմանով, որ վնասը չի հատուցվում որևէ այլ ապահովագրության պայմանագրով, Ապահովադրի գտնվելու վայրից 100 ցամաքային մղոնի սահմանում գտնվող ցանկացած տրանսպորտային միջոց՝ այն պայմանով, որ դա կիրառվում է փոխօգնություն ցուցաբերելու համար), էլեկտրաէներգիայի գեներացիայի կապիտալ շինարարության օբյեկտները, եթե դրանք ապահովագրված են Ապահովադրի կողմից գույքի ապահովագրության կամ շինմոնտաժային ռիսկերի ապահովագրության այլ պայմանագրերով համանման ռիսկերի գծով, ոսկերչական իրեր, թանկարժեք քարեր, մորթիներ և մորթիներով զարդարված հագուստի առարկաներ, անտառաբաժին, գյուղատնտեսական տնկարկներ, կենդանիներ, հող (տվյալ բացառությունը չի կիրառվում բարեկարգված տարածքների հողաբարելավման և վերականգնման դեպքում: Նման բարեկարգված տարածքները սահմանվում են որպես հողի բնության ցանկացած փոփոխություններ հողային աշխատանքների, լանդշաֆտային ճարտարապետության և հողային ցամաքորդային աշխատանքների միջոցով, ինչպես նաև մայթերի, ճանապարհների կառուցում կամ համանման աշխատանքներ), ջուր (տվյալ բացառությունը չի կիրառվում ջրմուղի կամ հակահրդեհային համակարգում պարունակվող ջրի նկատմամբ), մուրհակներ, պարտքի հանձնառություններ, գույքը ջրային փոխադրումների ժամանակ:

2.3. Սույն կետում նշված չապահովագրվող գույքի ցանկը կարող է նվազեցվել

Մրցույթի Մասնակիցների կողմից, սակայն չի կարող ընդլայնվել Մրցույթի Մասնակիցների կողմից:

2.4. Ապահովադիրը պարտավոր չէ փրամադրել Մրցույթի Մասնակիցներին կամ Մրցույթի Հաղթողին կամ Ապահովագրողին ապահովագրության ենթակա գույքի ցանկացած ցանկեր և ցուցակներ:

2.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը հաստատում է վնասված գույքի նկատմամբ իր մոտ գույքային շահերի առկայությունը: Նման փաստաթուղթ կարող է հանդիսանալ գույքային քարտը (Ապահովադրի հաշվեկշռի վրա գտնվող գույքի համար) և (կամ) տվյալ օբյեկտում կատարված աշխատանքների ակտը և (կամ) մինչև մոնտաժման իրականացում Ապահովադրի սարքավորումների հանձնման-ընդունման ակտը (անավարտ շինարարության օբյեկտների համար): Այն դեպքում, երբ նման փաստաթղթերի փրամադրումը դժվար է կամ անհնարին, ապա գույքային շահերը հաստատող փաստաթուղթ կարող են հանդիսանալ վնասված գույքի նկատմամբ Ապահովադրի գույքային շահը սահմանող ցանկացած փաստաթղթեր:

2.6. Ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալու դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի գործողությունները ավելի մանրամասն ներկայացված են 8.2. կետերում:

2.7. Վերոհիշյալ 2.1. կետում նշված գույքի ապահովագրությունը պետք է իրականացվի «Բոլոր ռիսկերի նկատմամբ պարասխանատվության» պայմանների հիման վրա: Ընդ որում ապահովագրական ծածկույթում ներառվում են նաև հետևյալ ռիսկերը.

- շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու արդյունքում Ապահովագրված գույքի ոչնչացման և (կամ) վնասման ռիսկերը (ներառյալ մոնտաժման ընթացքում սխալների ռիսկերը, փլուզման կամ վնասման ռիսկերը (այդ թվում փլուզվող կամ ընկնող մասերով) և այլ հանկարծակի և անկանխատեսելի իրադարձությունների ռիսկերը, որոնք կարող են բերել Ապահովագրված գույքի ոչնչացման և (կամ) վնասման), այդ թվում այն պայմանով, որ ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրված գույքը հանդիսացել է իրականացվող շինմոնտաժային աշխատանքների օբյեկտ (եթե այն ապահովագրված չէ գույքի ապահովագրության կամ շինմոնտաժային ռիսկերի ապահովագրության այլ պայմանագրով):

- Մեքենաների և սարքավորումների խափանման ռիսկերը (ապահովագրված և շահագործման մեջ ներդրված մեքենաների և սարքավորումների (մեքենաների և սարքավորումների մասերի) փչացում և (կամ) խափանում և (կամ) ոչնչացում) դրանց վրա ներքին կամ արտաքին ազդող գործոնների հանկարծակի և անկանխատեսելի ազդեցության արդյունքում՝ միայն այն դեպքում, եթե դրանք բերում են համապատասխան մեքենայի և / կամ սարքավորման լրիվ կոնստրուկտիվ ոչնչացման, որը սահմանվում է որպես վերականգնման տեխնիկական անհնարինություն, կամ երբ վերականգնման արժեքը կազմում է նորով փոխարինվածի արժեքի 80 և ավելի տոկոս:

- Գողության ռիսկը (բռնի մուտքով և/կամ ելքով):

- Կասկածներից խուսափելու համար Ապահովագրված գույքը, որին վնաս է հասցվել մեքենաների և սարքավորումների խափանման պատճառով առաջացած հրդեհի

կամ պայթյունի (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խողովակների պայթյունի, օդանավի հարվածի) հետևանքով պետք ապահովագրությամբ ծածկվի:

### **3. Ապահովագրական գումարը.**

Ապահովագրական գումարը սահմնավում է որպես գույքի վերականգնողական արժեք, որը որոշվել է Ապահովադրի գույքի (հիմնական միջոցների օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների) շուկայական (վերականգնողական) արժեքի գնահատման արդյունքների հիման վրա, որոնք որոշվել են ապահովագրության նպատակով, կամ Ապահովադրի կողմից հայտարարված գույքի (հիմնական միջոցների օբյեկտների և անավարտության օբյեկտների) վերականգնողական արժեքի չափով:

### **4. Ապահովագրական հատուցման ծավալը.**

4.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովադրի կողմից կրած վնասները «առաջին ռիսկով» ապահովագրական մեխանիզմի հիման վրա (այսինքն, երբ տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետ կապված Ապահովադրի ծախսերը հատուցվում են ամբողջությամբ՝ առանց յուրաքանչյուր վնասված օբյեկտի արժեքը առանձին գնահատելու անհրաժեշտության) պայմանագրով մեկ և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով սահմանված հատուցման սահմանաչափի սահմաններում:

#### **4.2. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է.**

4.2.1. Ապահովագրված գույքի լրիվ ոչնչացման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ոչնչացված Ապահովագրված գույքի վերանորոգում կամ վերականգնում չի իրականացվում, հատուցման ենթակա է վերականգնման համար Ապահովադրի կողմից կրած ծախսերի գումարը ամբողջությամբ: Վնասը հատուցելիս Ապահովագրված գույքի մաշվածությունը հաշվի չի առնվում:

4.2.2. Ապահովագրված գույքի մասնակի վնասման դեպքում հատուցման ենթակա են այն բոլոր ծախսերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի գույքը վերականգնվի մինչև այն վիճակը, որում այդ գույքը գտնվում էր անմիջապես մինչև այդ ապահովագրական պատահարը տեղի ունենալը: Վնասը հատուցելիս վնասված Ապահովագրված գույքի մաշվածությունը և փոխարինվող մասերի, հանգույցների և ագրեգատների մաշվածությունը հաշվի չի առնվում:

#### **4.3. Վերականգնման համար ծախսերը պետք է ներառեն.**

4.3.1. Ապահովագրված գույքի վերանորոգում (վերականգնում) իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած հանգույցներ, ագրեգատներ, մասեր, նյութեր ձեռքբերելու համար կատարված ծախսերը,

4.3.2. Վնասված Ապահովագրված գույքի վերանորոգում իրականացնելու համար կատարված ծախսերը, ներառյալ նոր ձեռքբերված կամ վերանորոգված հանգույցների, ագրեգատների, մասերի մոնտաժման համար ծախսերը՝ առանց հաշվի առնելու դրանց ժամանակավոր փոխարինող հանգույցներ, ագրեգատներ, մասեր, տեղադրելու համար ծախսերը,

4.3.3. Վնասված Ապահովագրված գույքի, պահեստամասերի, բեռների և նյութերի,

վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ վերանորոգող կամ շինարարական տեխնիկական վերանորոգման վայր և հետ առաքելու համար կատարված ծախսերը:

Վերականգնման համար ծախսերի նշված ցանկը կարող է ընդլայնվել, սակայն չի կարող կրճատվել Մրցույթի Մասնակիցների կողմից:

#### **4.4. Ի լրումն ուղղակի վնասի Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում**

4.4.1. ապահովագրական պատահար տեղի ունենալու հետ կապված Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովադրի հետևյալ լրացուցիչ ծախսերը.

4.4.1.1. վնասի չափը նվազեցնելու և վթարափրկարարական աշխատանքներ իրականացնելու հետ կապված Ապահովադրի ծախսերը,

4.4.1.2. վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման (վերականգնման) պատրաստման հետ կապված ծախսերը, ներառյալ վերանորոգման (վերականգնման) աշխատանքները իրականացնելու համար հատուկ անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, ոչնչացված, վնասված կամ կորցրած հանգույցների, մասերի և ագրեգատների ապամոնտաժման, վերանորոգման արժեքը և ոչնչացված կամ վնասված Ապահովագրված գույքի բեկորներից և մնացորդներից տարածքի մաքրման համար ծախսերը,

4.4.1.3. վնասը գտնելու համար ծախսերը,

4.4.1.4. Գործարկման-կարգաբերման աշխատանքների ծախսերը;

4.4.1.5. Վնասված Ապահովագրված գույքը վերանորոգման (վերականգնման) անցկացման վայր և հակառակ ուղղությամբ ուղեկցելու համար Ապահովադրի անձնակազմի գործուղման ծախսերը,

4.4.1.6. ծախսերը, որոնք անհրաժեշտ է իրականացնել վնասված Ապահովագրված գույքի վերականգնման կամ նոր գույքի մոնտաժման ընթացքում, որպեսզի ապամոնտաժվի, տեղափոխվի կամ պաշտպանվի այլ գույքը (հեռացման և պաշտպանման համար ծախսերը),

4.4.1.7. արտաժամյա, գիշերային ժամերին, պաշտոնապես տոն ճանաչված օրերին և ոչ աշխատանքային օրերին վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու հետ կապված լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև վերանորոգման (վերականգնման) աշխատանքների իրականացման հրատապության հետևանքով առաջացած տրանսպորտային ծախսերը,

4.4.2. ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափի սահմաններում ժամանակավոր վերանորոգման կամ վերականգնման համար հիմնավորված լրացուցիչ ծախսեր, ինչպես նաև ապահովագրական պատահարի արդյունքում ոչնչացված, վնասված կամ կորցված Ապահովագրված գույքի վերջնական վերականգնման, փոխարինման կամ վերանորոգման արագացման համար կատարված լրացուցիչ ծախսերը, ներառյալ արտաժամյա աշխատանքների և հրատապ բեռնափոխադրումների համար ծախսերը կամ փոխադրման այլ արագընթաց միջոցներ օգտագործելու համար լրացուցիչ ծախսերը,



4.4.3. Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափի սահմաններում, ապահովագրական պատահարի արդյունքում գույքի իրական կամ անխուսափելի ուղղակի ֆիզիկական ոչնչացման, կորստի կամ վնասման դեպքում, Ապահովագրված գույքի ժամանակավոր պաշտպանմանն և պահպանմանն ուղղված հիմնավորված և անհրաժեշտ գործողությունների ընթացքում Ապահովագրի կողմից կրած ծախսերը, որոնց գումարվում է ուղղակի ֆիզիկական ոչնչացման, կորստի կամ վնասման արդյունքում առաջացած հատուցման ենթակա ընդհանուր վնասը, եթե նման վնասը առկա է՝ համապատասխան չհատուցվող գումարը կիրառելու և սահմանաչափը չավելացնելու պայմանով;

4.4.4. Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափի սահմաններում ապահովագրական պատահարի արդյունքում ֆիզիկապես ուղղակի ոչնչացված կամ վնասված գույքի բեկորների և աղբի հեռացման, ապամոնտաժման կամ քանդման, ամրացման կամ նշված գույքի մասի կամ մասերի համար հենարանների տեղադրման համար անհրաժեշտ Ապահովագրի կողմից կրած ծախսերը, Ապահովագրական պատահար լինելու արդյունքում ոչնչացած կամ վնասված որևէ չապահովագրված գույքի մասից կամ մասերից առաջացած բեկորների հեռացման ընթացքում Ապահովագրի կողմից կրած նպատակային ծախսերն ու ծախքերը;

Սակայն, Ապահովագրողը չի փոխհատուցում որևէ ծախսեր կամ ծախքեր, որոնք.

(ա) առաջացել են բեկորների հեռացման ընթացքում ինչվոր այլ վայրերում, բացառությամբ այն տարածքների, որտեղ նման գույքը ոչնչացվել կամ վնասվել է, ինչպես նաև նման տարածքներին անմիջապես կից գտնվող տարածքը,

(բ) ցանկացած չապահովագրված գույքի վարակազերծման նպատակով կատարված ծախսերը:

4.4.5. Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափի սահմաններում՝ ճարտարապետի, փորձագետների, ճարտարագետ-խորհրդատուների, իրավաբանների և այլ մասնագետների ծառայությունների վարձատրության հետ կապված ծախսերը (քաղաքաշինական նախագծերի անցկացման ծառայությունների դիմաց տրվող վարձավճարը ներառյալ), որոնք Ապահովագրի անհրաժեշտ և նպատակահարմար կերպով կրել է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝ ապահովագրված գույքի վերականգնման նպատակով,

4.4.6. ապահովագրված գույքի ֆիզիկական ոչնչացման կամ վնասման դեպքում, որոնք բերում են այնպիսի օրենքի կամ որոշման դրույթների հարկադիր կիրառմանը, որը նման ֆիզիկական ոչնչացման կամ վնասման պահին ուժի մեջ է և որը կարգավորում է գույքի շինարարության, վերանորոգման կամ կիրառման հարցերը Ապահովագրողի պատասխանատվության Սահմանաչափի սահմաններում, Ապահովագրին հատուցվում են ստորև բերված ծախսերից բոլորը կամ յուրաքնչյուրը.

(ա) չվնասված գույքի քանդման արժեքը, ներառյալ տարածքի մաքրման արժեքը (եթե նման օրենքի կամ որոշման պահանջները կատարելու համար անհրաժեշտ է քանդել ցանկացած չվնասված գույք),

(բ) քանդված չվնասված գույքի արժեքը, սահմանափակվելով համամասնությամբ, որում ոչնչացումից անմիջապես առաջ չվնասված գույքի ապահովագրական արժեքը

կազմել է ամբողջ գույքի մի մասը,

(գ) գումարը, որի չափով մեծացել է նույն վայրում կամ որևիցե այլ վայրում վնասված և չվնասված գույքի վերանորոգման կամ վերակառուցման արժեքը՝ չգերազանցելով այն ծախսերի չափը, որոնք կառաջանային նման օրենքի կամ որոշման նվազագույն պահանջները կատարելու նպատակով՝ պայմանով, որ սույն կետի գծով Ապահովագրողի պատասխանատվությունը չպետք է գերազանցի համապատասխան ենթասահմանաչափը,

4.4.7. երկրաշարժի, հրաբխային ակտիվության (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կայծակի, մրրիկի, փոթորիկի, հողմի) արդյունքում առաջացած յուրաքանչյուր վնաս, մեկ ապահովագրական պատահար է համարվում

(ա) եթե ապահովագրական ժամկետում 72 ժամվա ընթացքում տեղի է ունեցել մի քանի ստորգետնյա ցնցում կամ մի քանի հրաբխային արտանետում, և նման 72-ժամյա ժամանակահատվածի սկիզբը կարող է սահմանել Ապահովադիրը, կամ

(բ) եթե տեղի է ունեցել մի քանի ջրհեղեղ մի ժամանակահատվածի ընթացքում, որը սկսել է գետում (գետերում) կամ հունում (հուներում) ջրի մակարդակի բարձրացումից կամ դրա (դրանց) ափերից դուրս գալուց և ավարտվել է նման գետի (գետերի) կամ հունի (հուների) ափերի մեջ մտնելով, կամ

(գ) եթե ցանկացած քանակի ջրհեղեղներ առաջացել են ցանկացած մակընթացային այլքի կամ մակընթացային այլքների շարքի հետևանքով որևէ մեկ իրադարձության արդյունքում, ապա նման ստորգետնյա ցնցումները, հրաբխային ակտիվությունը և ջրհեղեղները համարվում են մեկ ապահովագրական պատահար:

Եթե վերոնշյալ ժամանակահատվածը սկսվում է և շարունակվում է ապահովագրությունից հետո, ապա Ապահովագրողը նման երկրաշարժի, հրաբխային ակտիվության կամ ջրհեղեղի հետևանքով պատճառված բոլոր վնասների դիմաց փոխհատուցում է այն ժամանակահատվածի համար, եթե նման ժամանակահատվածը չի գերազանցի ապահովագրական պայմանագրով սահմանված ժամանակահատվածը:

Սակայն Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում որևէ վնասի համար, որը պատճառվել է որևէ երկրաշարժի, ստորգետնյա ցնցման, հրաբխային ակտիվության կամ ջրհեղեղի հետևանքով, որոնք սկսվել են կամ մինչև պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետի սկիզբը, կամ Պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետի ավարտից հետո:

Նշված ցանկը կարող է ընդլայնվել, սակայն չի կարող կրճատվել Մրցույթի Մասնակիցների կողմից:

### **5. Ապահովագրական հատուցման սահմանաչափերը.**

5.1. Մեկ և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է 15 000 000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար:

5.2. Ապահովագրական հատուցման սահմանաչափը ագրեգատային է և ենթակա չէ ավտոմատ կերպով վերականգնման: Ապահովադիրին ապահովագրական հատուցման գումարի վճարման դեպքում, համապատասխանաբար ապահովագրական գումարը նվազում է հատուցված գումարի չափով:

Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից սկսած: Ընդ որում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, ապահովագրական հատուցման գումարը հաշվարկվում է առանց ապահովագրական գումարի և ապահովագրված գույքի իրական արժեքի համամասնության կիրառման:

5.3. Պայմանագրի 4.4.2. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ:

5.4. Պայմանագրի 4.4.3. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ:

5.5. Պայմանագրի 4.4.4. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ:

5.6. Պայմանագրի 4.4.5. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ:

5.7. Պայմանագրի 4.4.6. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ:

## **6. Չհատուցվող գումարը.**

Ոչ պայմանական չհատուցվող գումարը սահմանվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով

- 30 000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլար գումարի չափով (համարժեքը Հայաստանի Հանրապետության արժույթով):

Մրցույթի Մասնակիցը իրավունք ունի առաջարկել լրացուցիչ ապահովագրական սակագին՝ առաջարկելով «Ահաբեկչություն» և «Դիվերսիա» ռիսկերով ապահովագրություն, սակայն տվյալ սակագինը Մրցույթի Կազմակերպիչի կողմից դիտարկման համար պարտադիր չէ:

## **7. Ապահովագրության պայմանագրի դիմաց վճարումը և ապահովագրավճարը.**

Ապահովագրավճարը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) Հայաստանի Հանրապետության դրամ:

Ապահովագրավճարը 6 (վեց) փուլով վճարվում է Ապահովագրողի հաշվարկային հաշվին.

- ապահովագրավճարի առաջին մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.02.2022թ. ոչ ուշ:

- ապահովագրավճարի երկրորդ մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.04.2022թ. ոչ ուշ:

- ապահովագրավճարի երրորդ մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.06.2022թ. ոչ ուշ:

- ապահովագրավճարի չորրորդ մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.08.2022թ. ոչ ուշ:

- ապահովագրավճարի հինգերորդ մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.10.2022թ. ոչ ուշ:

- ապահովագրավճարի վեցերորդ մասը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ: Ապահովագրավճարի վճարումը պետք է իրականացվի 15.12.2022թ. ոչ ուշ:

Վերը նշվածի հետ համեմատ Մրցույթի Մասնակիցները Մրցույթային հայտերում կարող են առաջարկել ապահովագրավճարի վճարման կարգի ավելի բարենպաստ պայմաններ:

Կնքված ապահովագրության պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվությունը պետք է սկսվի ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկզբից՝ ապահովագրավճարի առաջին մասի վճարման ամսաթվից անկախ:

Կասկածներից խուսափելու նպատակով մինչև ապահովագրավճարի առաջին մասի ամբողջական վճարումը, Ապահովադիրը Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու պահանջ չի ներկայացնի:

## **8. Ապահովագրության պայմանագրի այլ պայմանները.**

### **8.1. Պատահարի կարգավորման շրջանակներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվող փաստաթղթերը.**

ա) Պատահարը ապահովագրական ճանաչելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- Վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայրի լուսանկարներ՝ ընդհանուր պլանի և վնասված Ապահովագրված գույքի (եթե դա հնարավոր է), որոնք տալիս են պարկերացում Ապահովադրի գույքին պատճառված վնասի մասշտաբների մասին: Տրամադրվող լուսանկարների որակը չի կարող հանդիսանալ վեճի առարկա: Եթե Ապահովագրողին անհրաժեշտ են վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայրի ավելի մանրամասն լուսանկարներ, նա Ապահովադրի հետ համաձայնեցնելով և սեփական միջոցների հաշվին լուսանկարահանում կազմակերպելու համար վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայր պետք է ուղարկի իր ներկայացուցչին,

- Վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) պատճառների տեխնիկական հետաքննության ակտի պատճենը՝ դրա անբաժանելի մասեր հանդիսացող բոլոր հավելվածներով,

- Վնասված Ապահովագրված գույքի տեխնիկական անձնագրերի պատճենները (միայն այն Ապահովագրված գույքի մասով, որի գծով տեխնիկական անձնագրերը կազմվել և վարվել են),

- Վնասված Ապահովագրված գույքի դեֆեկտացիայի (կամ զննման) ակտերի պատճենները կամ դեֆեկտացիոն տեղեկագրերի (ցուցակների) պատճենները,

- Մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման ժամանակացույցի պատճենը (այն դեպքում եթե նման ժամանակացույցեր կազմվել և վարվել են),

- Սարքավորումների շահագործման ամենօրյա մատյանից քաղվածքների պատճենները կամ վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) մասին գրառումներ պարունակող օպերատիվ մատյանից քաղվածքների պատճենները,

- Վնասված Ապահովագրված գույքի սպասարկման և շահագործման ձեռնարկների

պատճենները (միայն այն Ապահովագրված գույքի համար, որի գծով նման ձեռնարկներ կազմվել և վարվել են),

- Գլխավոր ճարտարագետի կամ ոչնչացված կամ վնասված Ապահովագրված գույքի համար պատասխանատու անձի, կամ Ապահովադրի կողմից լիազորված այլ անձի բացատրագիրը ապահովագրական պատահար տեղի ունենալու պատճառների վերաբերյալ,

- Վնասված գույքի նկարմամբ Ապահովադրի գույքային շահերը հավաստող փաստաթղթերի պատճենները (օրինակ՝ հիմնական միջոցների հաշվառման գույքագրման քարտերի պատճենները (Ապահովադրի հաշվեկշռի վրա գրանվող գույքի համար) կամ կատարված աշխատանքների ակտերի պատճենները և (կամ) մինչև մոնտաժման իրականացումն Ապահովադրի սարքավորումների հանձնան-ընդունման ակտերի պատճենները (անավարտ շինարարության օբյեկտների համար) կամ Ապահովադրի գույքային շահերը հավաստող այլ փաստաթղթեր):

բ) Պատահարը ապահովագրական ճանաչելու համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր.

- Հրդեհի դեպքում Ապահովադրիը տրամադրում է Ապահովագրողին.

- Հրդեհային հսկողության պետական մարմնի՝ հրդեհի պատճառների նշումներով ակտի պատճենը,

- Պետական մարմինների \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) կողմից տրված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշման պատճենը (եթե հրդեհը առաջացել է երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում),

- մարմինների \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) ներկայացուցիչների մասնակցությամբ կազմված հետաքննության ակտը (եթե հրդեհը առաջացել է մարմինների \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) ենթակայության տակ գրանվող օբյեկտում):

- Տարերային աղտերի դեպքում Ապահովադրիը Ապահովագրողին տրամադրում է \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) կամ \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) կողմից տրված տեղեկանքի պատճենը (կախված նրանից, թե ում հսկողության տակ է գրանվում տեղի ունեցած իրադարձությունների արձանագրումը):

- Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների դեպքում Ապահովադրիը Ապահովագրողին տրամադրում է.

- Վնասի պատճառման վայրի \_\_\_\_\_ (նշել մարմնի անվանումը) կողմից տրված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշման պատճենը:

գ) Կողմերի միջև ապահովագրական կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթեր (ապահովագրական պատահարի վնասի գումարը հաստատելու համար).

- Վնասված կամ ոչնչացված Ապահովագրված գույքի փոխարինման նպատակով

նոր գույքի կամ սարքավորումների ձեռքբերումը հաստատող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ առքուվաճառքի, պայմանագրի պատճենները, ապրանքագրերի պատճենները, փոխանցման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները,

- Վնասված Ապահովագրված գույքի դուրսգրումը հաստատող փաստաթղթերի պատճենները (եթե տվյալ գույքը ենթակա չէ վերանորոգման (վերականգնման)),
- Վերանորոգման (վերականգնման) ծախսերը հաստատող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ կապալի պայմանագրերի պատճենները, աշխատանքների ընդունման-հանձնման ակտերի պատճենները, վճարման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները,
- Ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ կապալի պայմանագրերի և առքուվաճառքի պայմանագրերի պատճենները, աշխատանքների ընդունման-հանձնման ակտերի պատճենները, վճարման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները, այդ թվում տնտեսական մեթոդով Ապահովադրի կողմից իրականացրած աշխատանքները հաստատող փաստաթղթերի պատճենները:

Սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված փաստաթղթերի ցանկը հանդիսանում է սպառիչ ցանկ, և ենթակա չէ ընդլայնման Մրցույթի Մասնակիցների կամ Մրցույթի Հաղթողի կամ Ապահովագրողի կողմից:

Ապահովագրական պատահար (ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության) տեղի ունենալու ժամանակ Ապահովագրողը փաստաթղթերի կառուցվածքի և ձևի անահամապատասխանության դեպքում Ապահովագրողի ներքին փաստաթղթերին և ապահովագրության կանոններին ապավինելու իրավունք չունի:

8.2 Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություններ տեղի ունենալու դեպքում կողմերի գործողությունների կարգը.

Ապահովագրության պայմանագիրը պետք է նախատեսի ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի և Ապահովադրի գործողությունների հետեվյալ կարգը.

- Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու մասին պաշտոնական ծանուցում է ուղարկում՝ տեղի ունեցած իրադարձության նկարագրության շարադրմամբ, և (հնարավորության դեպքում) վնասի գումարի նախնական չափի նշմամբ:
- Ապահովադրի կողմից հայտարարված իրադարձությունը Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահար ճանաչելու համար Ապահովադիրը Ապահովագրողին է ուղարկում պաշտոնական հայտ Ապահովագրողի կողմից իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու անհրաժեշտության մասին՝ դիմումին կցելով 8.1. կետի «ա» և «բ»

ենթակետերում նշված փաստաթղթերը:

Նման հայտ ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրից ոչ ուշ ժամկետում Ապահովագրողը պարտավոր է ուսումնասիրել Ապահովադրի տրամադրած փաստաթղթերը և համաձայն Ապահովագրական պայմանագրի Ապահովադրին ուղարկել դիտարկվող իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ մերժման վերաբերյալ պաշտոնական որոշումը:

Ապահովագրողը իրավունք չունի մերժելու ապահովագրական պատահարի ճանաչումը, որպես հիմք ներկայացնելով 8.1. կետի «ա» և «բ» ենթակետերում չնշված լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը:

- Վերանորոգման (վերականգնման) աշխատանքները ավարտելուց հետո Ապահովադիրը Ապահովագրողին է ուղարկում 8.1. կետի «գ» ենթակետում նշված փաստաթղթերը Ապահովագրողի կողմից վերջնական ապահովագրական ակտ կազմելու և դիտարկվող ապահովագրական պատահարի գծով ապահովագրական կարգավորումը Կողմերի կողմից ավարտելու համար:
- Ապահովագրական հատուցման իրականացումը անհիմն ուշացնելու դեպքում Ապահովագրողը վճարման ուշացման յուրաքանչյուր շաբաթվա համար վճարում է տրոյս ժամկետանց վճարման գումարի 1 տոկոսի չափով:

### **8.3. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ խզումը.**

Ապահովագրության Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել ապահովագրավճարը՝ համամասնորեն մասհանելով ապահովագրավճարը Պայմանագրի գործողության ժամկետին համապատասխան:

### **8.4. Սուբրոգացիայից հրաժարումը.**

Ապահովագրության պայմանագիրը պետք է նախատեսի Ապահովագրողի՝ սուբրոգացիայի իրավունքից հրաժարումը այն անձանց նկատմամբ, որոնց հետ կնքված են Ապահովագրված գույքի նախագծման, կարգաբերման, սպասարկման, դիագնոստիկայի, վերանորոգման մասին համաձայնություններ, բացառությամբ՝ դիտարկյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունք ից:

### **8.5. Ապահովագրողի կողմից անկախ փորձագետների ներգրավումը.**

Ապահովագրության Պայմանագիրը պետք է նախատեսի Ապահովագրողի՝ կարգավորման գործընթացքում անկախ գնահատող, լոս-աջասթեր և այլ փորձագետներ ներգրավելու իրավունքից հրաժարվելը այն ապահովագրական պատահարի (կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության) դեպքում, երբ Ապահովադրի կողմից վնասի նախնական գումարը սահմանված է 2 000 000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող չափով:

Եթե ապահովագրական պատահարի դեպքում Ապահովադրի կողմից որոշված նախնական վնասի գումարը գերազանցում է 2 000 000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլարը, ապա Ապահովագրողը, ներգրավելով անկախ գնահատողի, լոս-աջասթերի և այլ փորձագետների համաձայնվում է, որ նշված փորձագետների աշխատանքը.

- իրականացվում է Ապահովագրողի հաշվին,

- չի ազդում ապահովագրական հատուցման վճարման (ապահովագրական պարտավորումների կարգավորման գծով վերջնական փոխադարձ հաշվարկների) ժամկետների և պայմանների վրա),

- չի ազդում Ապահովագրի վերանորոգման-վերականգնման աշխատանքների ընթացքի վրա, այդ թվում վերանորոգման-վերականգնման աշխատանքների իրականացման համար կապալառու կազմակերպությունների ընտրության վրա:

Ապահովագրողը Ապահովագրի համաձայնությամբ ներգրավում է անկախ գնահատողներ, լուսաչափերներ և այլ փորձագետներ (այսուհետ՝ Վթարային կոմիտարներ), որոնցից յուրաքանչյուրի հետ Ապահովագրի իրավունք ունի հաստատել անմիջական կոնսուլտներ:

Ապահովագրի Վթարային Լիազորի կողմից կազմվող բոլոր հաշվետվությունների պատճենները ստանալու իրավունք ունի: Նման հաշվետվությունների առանձին հարվածների մասով Ապահովագրի իր անհամաձայնությունը հայտնելու և տեղի ունեցած իրադարձությունների խելամիտ պատկեր ստանալու համար փոփոխություններ մտցնելու հիմնավորված պահանջ ներկայացնելու, կամ, առնվազն, հաշվետվություններում իր հատուկ կարծիքը արտացոլելու իրավունք ունի:

### **8.6. Ապահովագրական ծածկույթից բացառությունները.**

8.6.1. Բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների խափանում» ռիսկի, ցանկացած ռիսկից ապահովագրության վերաբերյալ, իրադարձությունները ապահովագրական պարտավորումներ չեն համարվում, եթե դրանք տեղի են ունեցել հետևյալի արդյունքում.

ա) Ահաբեկչական ակտերի.

Պայթեցման, հրկիզման կամ մարդկանց մահվան վրանգ առաջացնող այլ գործողությունների իրականացում կամ իրականացման սպառնալիք, էական գույքային վնաս պատճառելու կամ այլ հասարակության համար վրանգավոր հետևանքների առաջացման սպառնալիք հանդիսացող գործողությունների իրականացում, եթե դրանք իրականացվել են հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությունը ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնյա անձի կողմից որոշում կայացնելու կամ մեղավորի այլ անօրինական պահանջը կատարելու վրա ազդելու նպատակով, եթե այդ գործողությունների փաստով հարուցված է քրեական գործ Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգրքի 217-րդ հոդվածով:

բ) Դիվերսիաների.

Պայթեցումների իրականացում, հրկիզումների կամ մարդկանց զանգվածային ոչնչացում, նրանց առողջությանը վնասի պատճառում, ձեռնարկությունների, կառույցների, հաղորդակցման ուղիների կամ միջոցների, կապի միջոցների կամ այլ գույքի ավիրմանը կամ վնասմանը, կամ զանգվածային թունավորմանը կամ պետության թուլացման նպատակով համաճարակների և էպիզոտիաների տարածմանը ուղղված այլ գործողությունների իրականացում, եթե այդ գործողությունների փաստով հարուցված է քրեական գործ Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգրքի 303-րդ հոդվածով:

գ) Ապահովագրի ղեկավարի (լիազորած անձի) անվան տակ ուղղակի դիտավորության, իրավաբանական անձի այլ մարմնի (Կառավարության, տնօրինության), ինչպես նաև չնայած իրենց անունից, սակայն Ապահովագրի իմացությամբ և նրա շահերից ելնելով



գործող անձանց,

դ) Միջուկային էներգիայի ազդեցության, ճառագայթման և ռադիոակտիվ վարակի,

ե) Քիմիական կամ կենսաբանական նյութերով ցանկացած տեսակի աղտոտման (կամ վարակման), եթե նման աղտոտումը (կամ վարակումը) չի հանդիսացել Ապահովագրության Պայմանագրի շրջանակներում որպես ապահովագրական պատահար դիտարկվող իրադարձության ուղղակի հետևանք,

զ) Ասբեստի փոշու, ասբեստի, դիէթիլստիրոլի, դիօքսիդի, միզաֆորմալդեհիդի կամ դրանց բաղադրիչների, սնկի, բորբոսի ազդեցության հետևանքով,

է) Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,

ը) Խոռովության, պետական հեղաշրջման, դավադրության, ապստամբության կամ հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, արտակարգ կամ հատուկ իրավիճակի հայտարարման,

թ) Ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների հրահանգով Ապահովագրված գույքի բռնագրավման, բռնազանձման, կալանքի, ոչնչացման կամ վնասման,

ժ) Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց նկատմամբ տույժերի, տուգանքների, տուժանքների կամ այլ դրամական տուգանային միջոցառումների կիրառման՝ համաձայն օրենսդրության կամ ապահովագրության տարածքում գործող իշխանությունների այլ հրահանգների,

ի) Ապահովագրված գույքի բնական մաշվածության կամ որակի կամ օգտակար հատկությունների աստիճանական կորստի, եթե դրանք առաջացել են շենքերի, շինությունների և սարքավորումների շահագործման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով: Տվյալ բացառությունը վերաբերվում է միայն մաշվածությամբ անմիջապես վնասված նյութերին և սարքավորումներին, և չի բացառում սարքին (աշխատունակ) նյութերին և սարքավորումներին պատճառված վնասի հատուցում,

լ) Ապահովագրված գույքի կոռոզիայի, օքսիդացման, խմորման, նեխման կամ այլ բնական հատկությունների, եթե դրանք առաջացել են շենքերի, շինությունների և սարքավորումների շահագործման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով,

խ) Ճանապարհների կամ մայրերի ծածկույթների, ինչպես նաև հիմքերի, պատերի, շենքերի, շինությունների կամ ինժեներական կառույցների կրող կոնստրուկցիաների կամ ծածկերի նստելու, ճաքճքման, սեղմման, լայնացման կամ փքման, եթե դրանք չեն առաջացել արտաքինից հանկարծակի և անկանխատեսելի ազդեցության արդյունքում,

ծ) Օրենսդրությամբ և անվտանգության կանոնների և նորմերի, տարածքների և արժեքների պահպանման, աշխատանքների իրականացման անվտանգության նորմատիվ ակտերով սահմանված կամ այլ համանման նորմերի Ապահովադրի կողմից միտումնավոր խախտման, եթե դա հանդիսացել է ապահովագրական պատահարի անմիջական պատճառ,

կ) Ապահովագրված գույքի արատների և թերությունների առկայության, որոնք հայտնի են եղել Ապահովադրին և հանդիսացել են ապահովագրական պատահարի առաջացման

պատճառ, բայց դրանց մասին Ապահովագրողը տեղեկացված չի եղել և որոնք համապատասխան փաստաթղթերով լիազոր մարմինների կողմից սահմանված ժամկետներում, կամ Ապահովադրի ներքին փաստաթղթերով սահմանված ժամկետներում չեն վերացվել: Ապահովադրին հայտնի արարներն և թերությունները դրանք՝ հսկող մարմինների ակտերում կամ հրահանգներում, Ապահովադրի հանձնաժողովներում, Ապահովադրի հրամաններում կամ այլ նորմատիվ-հրահանգային փաստաթղթերում ուղղակիորեն նշված արարներն և թերություններն են,

հ) Գույքագրում անցկացնելու ընթացքում հայտնաբերված Ապահովագրված գույքի պակասորդի (կորստի)՝ առանց գույքի հաիշտակության, դրա թաքցման նշանների առկայության,

ծ) Ցանկացած ռիսկից ապահովագրության գծով, բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների կտրում» ռիսկի, չեն հատուցվում այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են նախագծերի, պլաների, տեխնիկական բնութագրերի, նյութերի և աշխատանքների ցանկացած թերությունները ուղղելու, կամ թաքնված թերությունները և արարները ուղղելու համար: Սակայն եթե անմիջականորեն նման թերությունների և արարների արդյունքում առաջանում է սույն Պայմանագրի այլ կետով (բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների կտրում» ռիսկի) չբացառված ֆիզիկական ոչնչացում (կորուստ) կամ վնասում, ապա բացառվում են միայն այն ծախսերը, որոնք կկրեր Ապահովադիրը մինչև ֆիզիկական ոչնչացման (կորուստի) կամ վնասման առաջացումը առկա թերությունը կամ արարը վերացնելու համար:

8.6.2. «Մեքենաների և սարքավորումների կտրում» ռիսկի ապահովագրության գծով, իրադարձությունները ապահովագրական պատահար չեն հանդիսանում, եթե տեղի են ունեցել հետևյալի արդյունքում.

ա) Ապահովադրի ուղղակի դիտավորության՝ ի դեմս նրա ղեկավարի (լիազորած անձի), անձի այլ մարմնի (Կառավարության, տնօրինության), ինչպես նաև չնայած իրենց անունից, սակայն Ապահովադրի իմացությամբ և նրա շահերից ելնելով գործող անձանց,

բ) Միջուկային էներգիայի ազդեցության, ճառագայթման և ռադիոակտիվ վարակի,

գ) Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,

դ) Խռովության, պետական հեղաշրջման, դավադրության, ապստամբության կամ հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, արտակարգ կամ հատուկ իրավիճակի հայտարարման,

ե) Ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների հրահանգով Ապահովագրված գույքի բռնագրավման, բռնազանձման, կալանքի, ոչնչացման կամ վնասման,

զ) Փորձարկումների կամ փորձարարական աշխատանքների իրականացման արդյունքում: Տվյալ բացառության մեջ չեն ներառվում պլանային և վթարավերականգնողական վերանորոգումների ավարտից հետո ապահովագրության տարածքում գործարկման-կարգաբերման աշխատանքների, թեստավորման և հանձնման փորձարկումների ընթացքում տեղի ունեցած մեքենաների և սարքավորումների վթարումները,

է) Միսալների, թերությունների կամ արարների, որոնք հայտնի են եղել Ապահովադրին կամ նրա ներկայացուցիչներին մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը,

ը) Մաշվածության, կոռոզիայի, կեղտի, կաթսաներում քափի և նորմալ շահագործման այլ հետևանքների, եթե դրանք առաջացել են նորմալփոփոխանակական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով, ինչպես նաև մթնոլորտային պայմանների երկարապարսպ ազդեցության հետևանքով,

թ) Ապահովագրությունը չպետք է փարածվի փոխարինվող մասերի և գործիքների, փոխարդիչի ժապավենների, զտիչների, ողորկող շրջանակների, մամլամասերի, կաղապարների, ճուպանների, շղթաների, հաղորդափոկների և բարձ մաշվողականության ենթակա այլ առարկաների վրա, այն դեպքում, եթե դրանց փոխարինումը տեղի է ունենում առանց սարքավորումները միջանկյալ կամ ընթացիկ վերանորոգման ուղարկելու:

ժ) Ապահովագրությունը չի փարածվում այն կորուստների վրա, որոնք մեքենաների և/կամ սարքավորումների վերականգնման տեխնիկական հնարավորություն համարվող ամբողջական կառուցողական կորստի չեն հանգեցրել, կամ երբ վերականգնման արժեքը կազմում է նոր մեքենաներով և / կամ սարքավորումներով փոխարինելու համար պահանջվող գումարի 80 և ավելի տոկոսը:

Մրցույթի Մասնակիցների կամ Մրցույթի Հաղթողի կամ Ապահովագրողի կողմից 8.6.1. - 8.6.2. կետերում նշված բացառությունների ցանկի ընդլայնում չի թույլատրվում: Անկախ այն փաստից, թե որ բացառություններն են նշված Մրցույթի Մասնակցի կամ Մրցույթի Հաղթողի կամ Ապահովագրողի Պայմաններում, դրանք չեն կարող լրացնել կամ հստակեցնել 8.6.1. - 8.6.2. կետերում նշված բացառությունները:

### 8.6.3. Վերաապահովագրությունը.

Մրցույթի Մասնակիցը՝ Մրցութային իր հայտի կազմում պետք է ներկայացնի սույն լուրի գծով վերաապահովագրական պաշտպանության Ծրագիրը՝ նշելով սահմանաչափերը, չհատուցվող գումարները, ապահովագրական գումարները, ապահովագրական ռիսկերը, ապահովագրական ծածկույթից բացառությունները, վերաապահովագրության ձևերը, պլանավորվող վերաապահովագրական ընկերությունների և ռեպրոցեսիոներների ցանկը, այդ թվում նշել վերաապահովագրական բրոքերների ցանկը, որոնց Մրցույթի Մասնակիցները պլանավորում են ներգրավել սույն լուրի գծով վերաապահովագրական պաշտպանություն կազմակերպելու համար: Վերաապահովագրական ընկերությունների վարկանիշը չպետք է ցածր լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված մակարդակից :

Համաձայն Ապահովագրողի կողմից հայտարարված վերաապահովագրական պաշտպանության, ապահովագրության ժամկետի սկզբից ոչ ուշ քան 5 (հինգ) շաբաթ ժամկետում Ապահովագրողը պարտավոր է Մրցույթի Կազմակերպչին տրամադրել վերաապահովագրության պայմանագրի պատճենը (կամ պայմանագրերի, եթե առկա են մի քանի վերաապահովագրողներ / ռեպրոցեսիոներներ և (կամ) այլ փաստաթղթերի, որոնք հավաստում են ռիսկի տեղաբաշխման պայմանները): Վերաապահովագրության պայմանագրերը պետք է ծածկեն ապահովագրության պայմանագրում թվարկված բոլոր ռիսկերը:

## «ԱԷԿ» ՓԲԸ

### ընդհանուր պատրասխանարվության ապահովագրության նկարմամբ ներկայացվող տեխնիկական պահանջները Ընդհանուր պատրասխանարվության ապահովագրում

#### 1. Ընդհանուր դրույթներ

**Ապահովադիր.** \_\_\_\_\_ կետում նշված Պատվիրատու:

**Ապահովագրող.** Ապահովագրական կազմակերպություն, որը բավարարում է ապահովագրական կազմակերպության նկարմամբ Գնման փաստաթղթերի \_\_\_\_\_ կետում նշված պահանջներին, որը միաժամանակ հանդիսանում է սույն Լուրի գծով Մրցույթի Հաղթող (այսուհետև լուրի տեքստում՝ **Ապահովագրող** կամ **Մրցույթի Հաղթող**):

**Ապահովագրված շահեր.** Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող Ապահովադրի ընդհանուր պատրասխանարվության Ապահովագրումը:

**Ապահովագրության օբյեկտը.** Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց այն գույքային շահերը, որոնց վերաբերյալ կնքված է Պայմանագիր՝ կապված վերջիններիս պարտավորության հետ, գործող քաղաքացիական օրենսդրությանը համաձայն՝ հատուցելու երրորդ անձանց պարճառած վնասը, բացառությամբ՝

ա) վնասի, որն առաջացել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով,

բ) փոխադրող հանդիսացող Ապահովադրի կողմից տրասպորտային միջոցների շահագործման հետեվանքով առաջացած վնասի,

գ) վնասի, որը մասնագիտական գործունեության հետևանք է,

դ) վնասի, որը շրջակա միջավայրի համար վրանգ հանդիսացող գործունեության իրականացման (քիմիական ձեռնարկություններ, ԱԷԿ և այլն) հետեվանք է:

**Ապահովագրության տարածք.** Հայաստանի Հանրապետության տարածք:

**Ապահովագրության ժամկետ.** Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է Մրցույթի Հաղթողի հետ 2022թ. հունվարի «01» ժամը 00:00-ից մինչև 2022թ. դեկտեմբերի «31» ժամը 24:00 սույն Գնման փաստաթղթերում նշված պայմաններով՝ կիրառելով Մրցույթի Հաղթողի դիմումի մեջ նշված տարեկան սակագինը:

#### 2. Ապահովագրության պայմանները՝

2.1. Ապահովագրական պատրասխար են համարվում՝

ա) Ապահովադրի կողմից որևէ ֆիզիկական անձի առողջությանը կամ գույքին հասցված վնասը,

բ) իրավաբանական անձանց հասցված գույքային վնասը:

2.2. Ապահովագրողի պատրասխանարվությունը կարող է սահմանափակվել ապահովագրության տարածքով, ապահովագրական պաշտպանության գործողության ժամկետով և գործող օրենսդրությանը չհակասող այլ պայմաններով:

### **3. Ապահովագրական պարզևավճար՝**

Ապահովագրական պարզևավճարի չափը որոշվում է Մրցույթի Մասնակցի կողմից ներկայացված մրցութային հայտին համապատասխան :

### **4. Ապահովագրական հատուցման ծավալը՝**

4.1. Ապահովագրողը պատասխանատվություն է կրում, եթե Ապահովադրի գործունեության հետեվանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարի արդյունքում՝

ա) տեղի է ունեցել շահառուի մահ, աշխատունակության կորուստ կամ նրա առողջությանը վնաս է հասցվել,

բ) շահառուին պարկանող գույքը ոչնչացել կամ վնասվել է:

4.2. Վերականգնման ծախսերը իրենց մեջ պետք է ներառեն՝

ա) ապահովադրի մեղավորության հանգամանքները և պատճառները պարզելու նպատակով կատարված ծախսերը, որոնք համաձայնեցված են եղել Ապահովագրողի հետ.

բ) ապահովագրական պատահարների առնչությամբ դատական մարմիններում գործերի վարման հետ կապված ծախսերը.

գ) անհրաժեշտ և նպատակահարմար ծախսեր՝ կապված ապահովագրական պատահարների հետևանքով Շահառուի կյանքը և գույքը փրկելու կամ պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը կրճատելու նպատակով, սույն կետի «ա» ենթկետում նախատեսված ապահովագրական գումարի 20%-ի սահմաններում:

### **5. Ապահովագրական հատուցման սահմանաչափերը՝**

Մեկ սկզբնական պատահարի հետևանք հանդիսացող ցանկացած պատահարի կամ պատահարների համար ապահովագրության գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում սահմանվում է հատուցման առավելագույն սահմանաչափ 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով:

### **6. Ֆրանշիզա**

Ոչ պայմանական չհատուցվող գումարը սահմանվում է յուրաքանչյուր առանձին պատահարի համար՝

- Ֆիզիկական կամ իրավաբանական անձի գույքին վնաս հասցնելու դեպքում ֆրանշիզան կազմում է 2 000,0 (երկու հազար) ԱՄՆ դոլար (համարժեքը ՀՀ դրամով),

- Ֆիզիկական անձանց կյանքին և (կամ) առողջությանը վնաս հասցնելու դեպքում ֆրանշիզա չի կիրառվում:

### **7. Ապահովագրության պայմանագրի դիմաց վճարումը և ապահովագրավճարը.**

Ապահովագրավճարը փոխանցվում է Ապահովագրողի հաշվարկային հաշվին: Վճարման ենթակա գումարը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ, և պետք է վճարվի մինչև 15.02.2022թ: Վերոնշյալ պայմանների հետ կապված Մրցույթի Մասնակիցները Մրցութային հայտերում կարող են առաջարկել ապահովագրավճարի վճարման կարգի

բարելավման իրենց փարբերակները:

## **8. Ապահովագրության պայմանագրի այլ պայմաններ.**

### **8.1. Ապահովագրական պատահարի կարգավորման շրջանակներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվող փաստաթղթերը.**

8.1.1. Պատահարը ապահովագրական ճանաչելու և ապահովագրական հատուցում վճարելու համար, Ապահովադիրը Ապահովագրողին պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա) Ապահովագրողին պատահարի մասին տեղյակ պահելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ ապահովագրողի գրասենյակ և ներկայացնել գրավոր հայցային դիմում, որտեղ նշված են փյալ իրադարձության առաջացման հանգամանքները: Ապահովադիրը Հայցային դիմումը կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից.

բ) վկայագրի բնօրինակը.

գ) անձնագրի բնօրինակը:

8.1.2. Ապահովագրողի կողմից վնասի չափի և հատուցման գումարի որոշումն իրականացվում է իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերի (բժշկական, փորձագիտական հաստատություններ, ոստիկանություն, անկախ փորձագիտական ընկերություն և այլն), համապատասխան տեղեկանքների, հաշիվների և այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք ապացուցում են կատարված ծախսերը:

8.1.3. Վերը նշված փաստաթղթերի հիման վրա կազմվում է եզրակացություն՝ ապահովագրական հատուցման (վճարման) մասին, որը ստորագրվում է Ապահովագրողի, Ապահովադրի և Շահառուի կողմից: Սույն Պայմաններում նշված իրադարձությունների հետևանքով ծագած վնասի փաստացի չափը որոշելու նպատակով Ապահովագրողը իրավունք ունի ներգրավել անկախ փորձագետների:

8.1.4. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրն Ապահովագրողին պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

8.1.4.1. վնասի չափը հաստատող փաստաթղթեր (անկախ փորձագիտական, դատական փորձաքննության բյուրոյի և այլ եզրակացություններ),

8.1.4.2. համապատասխան իրավասու մարմիններից ստացված (ոստիկանություն, հրշեջ տեսչություն, բժշկական հաստատություն և այլն) փաստաթղթեր, (եթե պատահարը քննվում է դատական կարգով՝ դատական մարմնի որոշումը, որում նշված է տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետ կապված հատուցման ենթակա գումարի չափը:

8.1.5. Ապահովագրական հատուցման գումարը ներառում է՝

8.1.5.1. ֆիզիկական անձի մահվան կամ նրան վնաս պատճառելու դեպքում՝

ա) եկամուտը, որից Շահառուն զրկվել է նրա առողջությանը հասցված վնասի կամ խեղման արդյունքում, աշխատունակությունը կորցնելու կամ դրա աստիճանը նվազելու հետևանքով.

բ) առողջությունը վերականգնելու նպատակով լրացուցիչ ծախսերը (հատուկ բուժում,

պրոթեզավորում և այլն)։

գ) եկամուտի այն մասը, որից Շահառուի մահվան հետևանքով զրկվել են նրա խմանքի փակ գտնվող անաշխատունակ անձինք։

դ) հուղարկավորման ծախսերը։

ե) Ապահովադրի մեղավորության հանգամանքների ճշտման և վնասի չափի հաշվարկման նպատակով կատարված խելամիտ ծախսերը,

զ) ապահովագրական պատահարի առնչությամբ դատական մարմիններում գործերը վարելու համար պահանջվող ծախսերը։

է) անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, կապված այն մարդկանց կյանքի և գույքի փրկման կամ վնասի չափը նվազեցնելու հետ, որոնց ապահովագրական պատահարի արդյունքում վնաս է պատճառվել, և որոնք համաձայնեցված են եղել Ապահովագրողի հետ։

8.1.5.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձին գույքային վնաս պատճառելու դեպքում՝

ա) գույքը վնասելու կամ ոչնչանալու հետևանքով առաջացած ուղղակի և իրական (շուկայական) վնասը որը որոշվում է՝

ա1) գույքի լրիվ ոչնչացման դեպքում դրա իրական (շուկայական) արժեքի չափով՝ բացառությամբ մաշվածությունը։

ա2) գույքը մասնակի վնասելու դեպքում՝ այն վերականգնելու համար անհրաժեշտ ծախսերի չափով։

բ) Ապահովադրի մեղավորության հանգամանքները և չափը պարզելու համար անհրաժեշտ ծախսերը, եթե տեղի ունեցած իրադարձությունը ճանաչվում է ապահովագրական պատահար։

գ) դատարաններում գործեր վարելու համար անհրաժեշտ ծախսերը, եթե տեղի ունեցած իրադարձությունը ճանաչվում է ապահովագրական պատահար։

դ) անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, կապված այն մարդկանց կյանքի կամ գույքի փրկման կամ վնասի նվազեցման հետ, որոնց ապահովագրական պատահարի արդյունքում վնաս է պատճառվել, և որոնք համաձայնեցված են եղել Ապահովագրողի հետ։

8.1.6. Ապահովագրական հատուցումը վճարվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Ապահովադրի գրավոր հայցադիմումի, Ապահովագրողի կողմից կազմված Եզրակացության, և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ ապահովագրական հատուցման գումարը վերջնականապես համաձայնեցնելուց կամ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելուց հետո։

## **8.2. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը.**

Ապահովագրության Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել ապահովագրավճարը՝ մասհանելով ապահովագրավճարի մասը այն ժամանակահատվածին համամասնորեն, որի ընթացքում գործել է ապահովագրության Պայմանագիրը։

### **8.3. Ապահովագրական ծածկույթից բացառությունները.**

- Պատերազմը և Քաղաքացիական խռովությունները,
- Մասնագիտական պատրասխանավությունը,
- Արտադրական վնասվածքների փոխհատուցման պատրասխանավությունը,
- Մասնագիտական հիվանդությունները,
- Աղտոտումը,
- Ահաբեկությունը,
- Ազբեստի հասցրած վնասը,
- Գործատուի պատրասխանավությունը,
- Շինմոնոպոստային աշխատանքների հետևանքով երրորդ անձանց հանդեպ պատրասխանավությունը, կամ շինարարական և վերանորոգման աշխատանքների հետևանքով առաջացած ցանկացած վնասը:

### **8.4. Հատուկ դրույթներ**

Սույն փաստաթուղթը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով, որում հայերեն և ռուսերեն տեքստերում հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

**Հավելված 2**  
**Պայմանագիր**

### **Բոլոր ռիսկերից գույքի ապահովագրության**

«\_\_» \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ 2022թ.

«\_\_\_\_\_» **ապահովագրական ընկերությունը**, որն այսուհետ կանվանվի «**Ապահովագրող**», ի դեմս տնօրեն \_\_\_\_\_, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից,

և «**Միջազգային էներգետիկ կորպորացիա**» **փակ բաժնետիրական ընկերությունը**, որն այսուհետ կանվանվի «**Ապահովադիր**», ի դեմս Գլխավոր տնօրեն պրն. -----, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում միասին անվանվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «**Կողմ**»,

կնքեցին սույն Ապահովագրության Պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**»)



հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն Պայմանագրի Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց Պայմանագրով նախատեսված իրադարձություն (ապահովագրական պատահար) տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին վճարել ապահովագրական հատուցում տրվել իրադարձության արդյունքում ապահովագրված գույքին պատճառված վնասների գծով՝ Պայմանագրով սահմանված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում՝ Պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով:

1.2. Պայմանագիրը կնքված է համաձայն Ապահովագրողի Խորհրդի \_\_\_\_\_թ. \_\_ արձանագրությամբ հաստատված «Բոլոր ռիսկերից արտադրական և առևտրային ձեռնարկությունների ապահովագրության պայմանների» (այսուհետ՝ «Պայմաններ 1») և Ապահովագրողի Խորհրդի \_\_\_\_\_թ. \_\_ արձանագրությամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների խափանումից ապահովագրության պայմանների» (այսուհետ՝ «Պայմաններ 2»), որոնք տրվել և համաձայնեցվել են Ապահովադիրի հետ և հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

Պայմանագրի և ՊԱՅՄԱՆՆԵՐԻ դրույթների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում են Պայմանագրի դրույթները:

Ապահովագրության պայմանագրի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված, սակայն սույն ապահովագրության պայմանագրում չընդգրկված դրույթները ներառված են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Պայմաններ 1-ում և Պայմաններ 2-ում:

1.3. Ապահովագրությունը գործում է հետևյալի գծով.

- Ապահովադիրի հաշվեկշռի վրա գտնվող հիմնական միջոցների օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների, այդ թվում ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում շինմոնտաժային աշխատանքների արդյունքում ստեղծված (կամ ձեռքբերված) հիմնական միջոցների օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների,

- Ապահովադիրի կողմից վարձակալված, լիզինգի Պայմանագրով կամ վարձույթով վերցրած գույքի, կամ այլ գույքի, որին Ապահովադիրը տիրապետում է և (կամ) օգտագործում է օրինական հիմքով,

- Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովադիրի հաշվեկշռին ընդունված գույքի:

1.4. Ապահովագրված գույք հանդիսանում է Ապահովադիրի գույքը:

1.5. Ապահովագրվող գույքը գրավ է դրված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի օգտին, որը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան փողոց 66 հասցեով: Սույնով բոլոր կողմերը համաձայնվում են, որ մինչև «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից գրավի պայմանագրի դադարեցման մասին պատշաճ տեղեկացնելը՝ ապահովագրության պայմանագրի համաձայն վճարվելիք ցանկացած հատուցում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, առաջնահերթության կարգով վճարվում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ որպես Շահառու, վարկառուի վարկային պարտավորության մարման նպատակով և/կամ Շահառուի

կողմից տրամադրվում է գրավատուին՝ գրավի առարկայի վերականգնման նպատակով, ինչպես մասամբ այնպես էլ ամբողջությամբ: Ապահովագրողը պարտավորվում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին գրավոր տեղեկացնել ցանկացած այնպիսի հանգամանքի մասին, որը կարող է հանգեցնել ապահովագրության պայմանագրի փոփոխմանը կամ վաղաժամկետ դադարեցմանը: Ապահովագրության պայմանագիրը կարող է փոփոխվել կամ վաղաժամկետ դադարեցվել միայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գրավոր համաձայնությամբ

## **2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ**

2.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող Ապահովադրի / Շահառուի գույքային շահերը, կապված տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքով Պայմանագրի 1.3. կետում նշված գույքի կորստի, ոչնչացման և / կամ վնասման ռիսկի հետ , այդ թվում այն գույքի, որի վրա իրականացվում են շինմոնտաժային աշխատանքներ:

2.2. Ապահովագրման ենթակա չէ հետևյալ գույքը.

2.2.1 ազգային և արտերկրյա արժույթով կանխիկ դրամական միջոցներ,

2.2.2 բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր,

2.2.3 ձուլածո թանկարժեք մետաղներ,

2.2.4 պայթուցիկ նյութեր,

2.2.5 արվեստի գործեր (այդ թվում նկարներ, կտավներ, քանդակներ, հավաքածուներ),

2.2.6 ծրագրային ապահովում և էլեկտրոնային տվյալներ,

2.2.7 ավտոտրանսպորտային միջոցներ (այդ թվում կցորդներ և կիսակցորդներ), լողամիջոցներ և ջրային տրանսպորտի միջոցներ, երկաթուղային տրանսպորտի միջոցներ, օդային տրանսպորտի միջոցներ, ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու իրավունք ունեցող տրանսպորտային միջոցներ, բացառությամբ.

2.2.1.1. կապալառուների սարքավորումների,

2.2.1.2. Ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու իրավունք ունեցող տրանսպորտային միջոցների, Ապահովադրի գտնվելու վայրում գտնվելու ժամանակ՝ այն պայմանով, որ վնասը չի հատուցվում որևէ այլ ապահովագրության Պայմանագրով,

2.2.1.3. Ապահովադրի գտնվելու վայրից 100 ցամաքային մղոնի սահմանում գտնվող ցանկացած տրանսպորտային միջոց՝ այն պայմանով, որ դա կիրառվում է փոխօգնություն ցուցաբերելու համար:

2.2.8 էլեկտրաէներգիայի գեներացիայի կապիտալ շինարարության օբյեկտները, եթե դրանք ապահովագրված են Ապահովադրի կողմից գույքի ապահովագրության կամ շինմոնտաժային ռիսկերի ապահովագրության այլ պայմանագրերով համանման ռիսկերի գծով,

2.2.9 ոսկերչական իրեր, թանկարժեք քարեր, մորթիներ և մորթիներով զարդարված հագուստի առարկաներ,

2.2.10 անտառաբաժին,

2.2.11 գյուղատնտեսական տնկարկներ,

2.2.12 կենդանիներ,

2.2.13 հող (տվյալ բացառությունը չի կիրառվում բարեկարգված տարածքների հողաբարելավման և վերականգնման դեպքում: Նման բարեկարգված տարածքները սահմանվում են որպես հողի բնության ցանկացած փոփոխություններ հողային աշխատանքների, լանդշաֆտային ճարտարապետության և հողային ցամաքորդային աշխատանքների միջոցով, ինչպես նաև մայթերի, ճանապարհների կառուցում կամ համանման աշխատանքներ),

2.2.14 ջուր (տվյալ բացառությունը չի կիրառվում ջրմուղի կամ հակահրդեհային համակարգում պարունակվող ջրի նկատմամբ),

2.2.15 մուրհակներ, պարտքի հանձնառություններ,

2.2.16 գույքը ջրային փոխադրումների ժամանակ:

2.3. Ապահովագրված գույքի պահպանման պայմանների մասին տեղեկություններ.

2.1.1. Շենքերի կառույցների և էլեկտրահաղորդման գծերի կոնստրուկտիվ էլեմենտները գտնվում են սարքին վիճակում և համապատասխանում են նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

2.1.2. Շենքերում և կառույցներում տարածքները սարքավորված են հակահրդեհային առաջնային միջոցներով՝ հակահրդեհային անվտանգության կանոնների և նորմերի համաձայն:

2.1.3. Շենքերի և կառույցների տարածքներում պայթյունավտանգ և դյուրավառ նյութերը պահպանվում են սահմանված նորմերը չգերազանցող քանակներում:

2.4. Ապահովադիրը պարտավորվում է պահպանել Ապահովագրված գույքի պահպանման պայմանները Պայմանագրի 2.3.1. - 2.3.3. կետերի համաձայն Պայմանագրի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում:

Ապահովադիրը պարտասխանատվություն է կրում Պայմանագրի 2.3.1. – 2.3.3. կետերում նշված տեղեկությունների հավաստիության համար համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության: Այն դեպքում, երբ Ապահովագրված գույքի պահպանման պայմանները չեն համապատասխանում Պայմանագրի սույն կետում նշված պայմաններին, Ապահովադիրը պարտավոր է դրա մասին գրավոր ծանուցել Ապահովագրողին:

2.5. Պայմանագրով ապահովագրության տարածք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը:

### **3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ**

3.1. Պայմանագրի շրջանակներում ապահովագրական պարտաճար է ճանաչվում ապահովագրված գույքի վնասում, ոչնչացում և / կամ կորուստ դրա վրա ցանկացած հանկարծակի և անկանխատեսելի ազդեցության արդյունքում՝ համաձայն Պայմաններ 1-ի և Պայմաններ 2-ի , բացառությամբ Պայմանագրի 3.3. և 3.4. կետերում թվարկված իրադարձությունների: «Բոլոր ռիսկերից պարտասխանատվություն» պայմանից ավելի ապահովագրական ծածկույթում ներառվում են Պայմանագրի 3.1.1 կետում նշված ռիսկերը:

3.1.1. Պայմանագրի շրջանակներում, մասնավորապես, ապահովագրական պարտաճար է հանդիսանում Ապահովագրված գույքի վնասում, ոչնչացում և / կամ կորուստ հետևյալի արդյունքում.

3.1.1.1. Ապահովագրված գույքի ոչնչացում և (կամ) վնասում շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու արդյունքում (ներառյալ մոնտաժման ընթացքում թույլ տված սխալների ռիսկերը, փլուզման կամ վնասման ռիսկերը (այդ թվում փլուզվող կամ ընկնող մասերով) և այլ հանկարծակի և անկանխատեսելի իրադարձությունների ռիսկերը, որոնք կարող են բերել

Ապահովագրված գույքի ոչնչացման և (կամ) վնասման), այդ թվում այն պայմանով, որ ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրված գույքը հանդիսացել է իրականացվող շինմունքային աշխատանքների օբյեկտ (եթե այն ապահովագրված է գույքի ապահովագրության կամ շինմունքային ռիսկերի ապահովագրության այլ Պայմանագրով):

3.1.1.2. Մեքենաների և սարքավորումների անսարքությունների (ապահովագրված և շահագործման մեջ ներդրված մեքենաների և սարքավորումների (մեքենաների և սարքավորումների մասերի) ոչնչացում) դրանց վրա ներքին կամ արտաքին ազդող գործոնների հանկարծակի և անկանխատեսելի ազդեցության արդյունքում: Պայմանագրի ծածկույթում ընդգրկվում են մեքենաների և սարքավորումների խափանման հետ կապված վնասները միայն այն դեպքում, եթե դրանք բերում են համապատասխան մեքենայի կամ սարքավորման լրիվ կոնստրուկտիվ ոչնչացման, որը սահմանվում է որպես վերականգնման տեխնիկական անհնարինություն, կամ երբ վերականգնման արժեքը կազմում է նորով փոխարինման արժեքի 80 և ավելի տոկոս:

3.1.1.3. Գողության ռիսկը (բռնի մուտքով և/կամ ելքով):

3.1.1.4. Կասկածներից խուսափելու նպատակով Ապահովագրված գույքին պատճառված վնասը, մեքենաների և սարքավորումների խափանման պատճառով առաջացած հրդեհի կամ պայթյունի (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խողովակների պայթյունի, օդանավի հարվածի) արդյունքում, ծածկվում է ապահովագրությամբ:

Պայմանագրի նպատակով՝ չնայած Պայմանագրում կամ Պայմաններում առկա որևիցե այլ դրույթների, մեքենաների և սարքավորումների անսարքության տակ հասկացվում է մեքենաների, սարքավորումների, դրանց հարվածների, հանգույցների կամ մասերի աշխատունակ վիճակի խախտում, ինչպես նաև ապահովագրված մեքենաների և / կամ սարքավորումների, դրանց հարվածների, հանգույցների կամ մասերի ոչնչացում կամ վնասում, որոնք բերել են համապատասխան մեքենայի կամ սարքավորման լրիվ կոնստրուկտիվ ոչնչացմանը, որը սահմանվում է որպես վերականգնման տեխնիկական անհնարինություն, կամ երբ վերականգնման արժեքը կազմում է նորով փոխարինման արժեքի 80 և ավելի տոկոս, որն առաջացել է հետևյալ իրադարձությունների արդյունքում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝

3.1.1.3.1. նյութերի թերություններ, կոնստրուկցիաներում, ապահովագրված մեքենաների արտադրությունում կամ մունքային (հավաքման) սխալներ,

3.1.1.3.2. Ապահովագրի անձնակազմի չկանխամտածված սխալներ ապահովագրված մեքենաների սպասարկման ընթացքում,

3.1.1.3.3. Հիդրավլիկ հարված կամ շոգի կամ հեղուկների օգնությամբ գործող կաթասներում և ապարարներում ջրի քանակի պակաս,

3.1.1.3.4. Էլեկտրաէներգիայի ազդեցություն կարճ միացման տեսքով, ցանցում հոսանքի ուժի կամ լարման կտրուկ բարձրացում, մակածված հոսանքների ազդեցություն, ներառյալ նշված երևույթների արդյունքում առաջացած հրդեհի հետևանքով պատճառված վնաս,

3.1.1.3.5. ներքին ֆիզիկական պայթյուն, այդ թվում շոգեկաթասների, ներքին այրման շարժիչների և էներգիայի այլ աղբյուրների պայթյուն,

3.1.1.3.6. Գերբեռնում, գերտաքացում, տատանում, տրոհում, սեպապընդում, մեխանիզմի խցանում օդար առարկաներով, մեխանիզմի ներսում ճնշման փոփոխություն, կեն-

տրոնախոյզ ուժի ազդեցություն,

3.1.1.3.7. Ճոպանների և շղթաների խզում, ապահովագրված օբյեկտների վայր ընկնում և դրանց բախում այլ օբյեկտների,

3.1.1.3.8 նյութի «հոգնածություն»:

3.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովադրի կողմից կրած վնասները «առաջին կորստի» պայմանով (այսինքն երբ ապահովագրական պատահար տեղի ունենալու հետ կապված Ապահովադրի բոլոր ծախսերը հատուցվում են ամբողջությամբ՝ առանց յուրաքանչյուր վնասված օբյեկտի արժեքը առանձին գնահատելու անհրաժեշտության) Պայմանագրով մեկ և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով սահմանված հատուցման սահմանաչափի սահմաններում: Ապահովագրական հատուցման չափը որոշվում է.

- Ապահովագրված գույքի լրիվ ոչնչացման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ոչնչացված Ապահովագրված գույքի վերանորոգում կամ վերականգնում չի իրականացվում, հատուցման ենթակա է վերականգնման համար Ապահովադրի կողմից կրած ծախսերի գումարը ամբողջությամբ: Կասկածներից խուսափելու նպատակով վնասը հատուցելիս Ապահովագրված գույքի մաշվածությունը հաշվի չի առնվում,

- Ապահովագրված գույքի մասնակի վնասման դեպքում հատուցման ենթակա են այն բոլոր ծախսերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի գույքը վերականգնվի մինչև այն վիճակը, որում այդ գույքը գտնվում էր անմիջապես մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը: Կասկածներից խուսափելու նպատակով վնասը հատուցելիս վնասված Ապահովագրված գույքի մաշվածությունը և փոխարինվող մասերի, հանգույցների և ագրեգատների մաշվածությունը հաշվի չի առնվում:

Վերականգնման համար ծախսերը պետք է ներառեն.

3.2.1. Ապահովագրված գույքի վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ ցանկացած հանգույցներ, ագրեգատներ, մասեր, նյութեր ձեռքբերելու համար կատարված ծախսերը,

3.2.2. Վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման ծախսերը, ներառյալ նոր ձեռքբերված կամ վերանորոգված հանգույցների, ագրեգատների, դետալների մոնտաժման բոլոր ծախսերը՝ առանց հաշվի առնելու դրանց փոխարինողների տեղադրման ծախսերը,

3.2.3. Վնասված Ապահովագրված գույքը, պահեստամասերը, բեռները և նյութերը, վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ վերանորոգող կամ շինարարական տեխնիկական վերանորոգման վայր և հետ առաքելու համար կատարված ծախսերը,

3.2.4. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում բացի ուղղակի վնասից Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովադրին ապահովագրական պատահար տեղի ունենալու հետ կապված Ապահովադրի հետևյալ լրացուցիչ ծախսերը.

- վնասի չափի և վթարափրկարարական աշխատանքներ իրականացնելու հետ կապված Ապահովադրի ծախսերը,

- վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման (վերականգնման) պատրաստման հետ կապված ծախսերը, վերանորոգման (վերականգնման) աշխատանքները իրականացնելու համար հատուկ անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, ոչնչացված, վնասված կամ կորցրած հանգույցների, մասերի և ագրեգատների ապամոնտաժման, վերանորոգման արժեքը և ոչնչացված

կամ վնասված Ապահովագրված գույքի բեկորներից և մնացորդներից տարածքի մաքրման ծախսերը ներառյալ,

- վնասումը փնտրելու համար ծախսերը,
- գործարկման-կարգաբերման աշխատանքները իրականացելու համար ծախսերը,
- Ապահովադրի աշխատակազմի անհրաժեշտ գործուղման ծախսերը, կապված վնասված Ապահովագրված գույքը վերանորոգման (վերականգնման) վայր և հետ փոխադրելիս ուղեկցման հետ,
- ծախսերը, որոնք անհրաժեշտ է իրականացնել վնասված Ապահովագրված գույքի վերականգնման ընթացքում կամ նոր գույքի մոնտաժման ընթացքում, որպեսզի ապամոնտաժվի, տեղափոխվի կամ պաշտպանվի այլ գույք (հեռացման և պաշտպանման համար ծախսերը),
- արտաժամյա, գիշերային ժամերին, պաշտոնապես տրանսպորտի օրերին և ոչ աշխատանքային օրերին վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու հետ կապված լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև վերանորոգման (վերականգնման) աշխատանքները հրատապ իրականացնելու համար առաջացած տրանսպորտային ծախսերը:

3.2.5. Ապահովագրողի պարասխանաբանության սահմանաչափի սահմաններում ժամանակավոր վերանորոգման կամ վերականգնման համար հիմնավորված լրացուցիչ ծախսեր, ինչպես նաև ապահովագրական պարահարի արդյունքում ոչնչացված, վնասված կամ կորցրած Ապահովագրված գույքի վերջնական վերականգնման, փոխարինման կամ վերանորոգման արագացման համար կատարված լրացուցիչ ծախսերը, ներառյալ արտաժամյա աշխատանքների և հրատապ բեռնափոխադրումների համար ծախսերը կամ փոխադրման այլ արագընթաց միջոցներ օգտագործելու համար լրացուցիչ ծախսերը:

3.2.6. Ապահովագրողի պարասխանաբանության սահմանաչափի սահմաններում Ապահովագրված գույքի ժամանակավոր պաշտպանման և պահպանման համար հիմնավորված և անհրաժեշտ միջոցառումների ընթացքում Ապահովադրի կողմից կրած ծախսերը, որոնց գումարվում է ուղղակի ֆիզիկական ոչնչացման, կորուստի կամ վնասման արդյունքում առաջացած հատուցման ենթակա ընդհանուր վնասը, եթե այդպիսինը առկա է՝ այն պայմանով, որ կիրառվում է համապարասխան չհատուցվող գումար և առանց մեծացնելու Պայմանագրով սահմանված սահմանաչափերը:

3.2.1. Պայմանագրի համաձայն ապահովագրված և Պայմանագրով սահմանված ապահովագրական պարահարի արդյունքում ուղղակի ֆիզիկապես ոչնչացված կամ վնասված գույքի բեկորների և աղբի հեռացման, ապամոնտաժման կամ քանդման, ամրացման կամ նշված գույքի մասի կամ մասերի համար հենարանների տեղադրման համար անհրաժեշտ Ապահովադրի կողմից կրած ծախսերը:

Ապահովադրի կողմից նպատակահարմար կրած ծախսերը, որոնք առաջացել են Պայմանագրով չապահովագրված, սակայն Պայմանագրով չբացառված որևիցե ռիսկի տեղի ունենալու արդյունքում ոչնչացված կամ վնասված որևէ գույքի մասից կամ մասերից ձևավորված բեկորների հեռացման ընթացքում:

Ապահովագրողը սակայն չի հատուցում որևիցե ծախսեր, որոնք՝

ա) առաջացել են բեկորների հեռացման ընթացքում որևէ այլ վայրերում, բացառությամբ այն վայրերի, որտեղ նման գույքը ոչնչացվել կամ վնասվել է, ինչպես նաև անմիջականորեն նմանապիսի վայրերին կից գտնվող տարածության,

բ) Պայմանագրով չսպահովագրված ցանկացած գույքի վարակազերծման նպատակով:

3.2.2. Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափի սահմաններում Պայմանագրով ապահովագրության շրջանակներում հարուցվում են ճարտարապետի, փորձագետների, ճարտարագետ-խորհրդատուների, իրավաբանների և այլ մասնագետների ծառայությունների դիմաց վարձի հետ կապված ծախսերը (ներառյալ նախագծերը՝ քաղաքաշինության պլանի հետ համապատասխանության բերելու համար ծառայությունների դիմաց վճարները), որոնք Ապահովագրող անհրաժեշտ և նպատակահարմար կերպով կրել է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով ապահովագրված գույքի վերականգնման նպատակով:

3.2.3. Պայմանագրով ապահովագրված գույքի ֆիզիկական ոչնչացման կամ վնասման դեպքում, որոնք բերում են այնպիսի օրենքի կամ որոշման դրույթների հարկադիր կիրառմանը, որը նման ֆիզիկական ոչնչացման կամ վնասման պահին ուժի մեջ է և որը սահմանում է գույքի շինարարության, վերանորոգման կամ կիրառման հարցերը Ապահովագրողի պատասխանատվության Սահմանաչափի սահմաններում, Ապահովագրողն հարուցվում են ստորև բերված ծախսերից բոլորը կամ ցանկացածը

ա) չվնասված գույքի քանդման արժեքը, ներառյալ տարածքի մաքրման արժեքը (եթե նման օրենքի կամ որոշման պահանջները կատարելու համար անհրաժեշտ է քանդել ցանկացած չվնասված գույք),

բ) քանդված չվնասված գույքի արժեքը, սահմանափակվելով համամասնությամբ, որում անմիջապես ոչնչացումից առաջ չվնասված գույքի ապահովագրական արժեքը կազմել է ամբողջ գույքի մի մասը,

գ) գումարը, որի չափով մեծացել է նույն վայրում կամ որևիցե այլ վայրում վնասված և չվնասված գույքի վերանորոգման կամ վերակառուցման արժեքը՝ չգերազանցելով այն ծախսերի չափը, որոնք կառաջանային նման օրենքի կամ որոշման նվազագույն պահանջները կատարելու նպատակով՝ պայմանով, որ սույն կետի գծով Ապահովագրողի պատասխանատվությունը չպետք է գերազանցի համապատասխան ենթասահմանաչափը:

3.2.4. Յուրաքանչյուր վնաս երկրաշարժի, հրաբխային ակտիվության (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կայծակի, մրրիկի, փոթորիկի, հողմի) արդյունքում համարվում է մեկ ապահովագրական պատահար և

ա) եթե ապահովագրության ժամկետում 72 ժամվա ընթացքում տեղի է ունեցել մի քանի ստորգետնյա ցնցում կամ մի քանի հրաբխային արտանետումներ, և Ապահովագրող կարող է սահմանել նման 72-ժամյա ժամանակաշրջանի սկիզբը, կամ

բ) եթե տեղի է ունեցել մի քանի ջրհեղեղ մի ժամանակահատվածի ընթացքում, որը սկսել է գետում (գետերում) կամ հունում (հուներում) ջրի մակարդակի բարձրացումից կամ դրա (դրանց) ավերից դուրս գալուց և ավարտվել է նման գետի (գետերի) կամ հունի (հուների) իր (իրենց) ավերի մեջ մտնելով, կամ

գ) եթե ցանկացած քանակի ջրհեղեղներ առաջացել են ցանկացած մակընթացային ալիքի կամ մակընթացային ալիքների սերիայի հետևանքով որևէ մեկ իրադարձության արդյունքում,

ապա նման ստորգետնյա ցնցումները, հրաբխային ակտիվությունը և ջրհեղեղները համարվում են մեկ ապահովագրական պատահար:

դ) Եթե վերը նշված ժամանակահատվածը սկսում է մինչև և ավարտվում է ապահովագրությունից հետո, ապա Ապահովագրողը հատուցում է նման ժամանակահատվածում նման երկրաշարժի, հրաբխային ակտիվության կամ ջրհեղեղի հետևանքով պատճառված բոլոր վնասները այնպես, ինչպես այն դեպքում, երբ նման ժամանակահատվածը ամբողջությամբ տեղի ունենար Պայմանագրի ապահովագրության ժամկետի ընթացքում:

Սակայն Ապահովագրողը պարասխանաբարություն չի կրում որևիցե վնասի համար, որը պատճառվել է որևէ երկրաշարժի, ստորգետնյա ցնցման, հրաբխային ակտիվության կամ ջրհեղեղի հետևանքով, որոնք սկսել են կամ մինչև սույն Պայմանագրով ապահովագրության ժամկետի սկիզբը, կամ Պայմանագրով ապահովագրության ժամկետի ավարտից հետո:

3.3. Բոլոր դիսկերից ապահովագրության գծով, բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների խափանում» դիսկի, իրադարձությունները չեն հանդիսանում ապահովագրական պարահար, եթե դրանք տեղի են ունեցել հետևյալի արդյունքում.

3.3.1. Ապահովադրի ուղղակի դիտարկության՝ ի դեմս նրա ղեկավարի (լիազորած անձի), իրավաբանական անձի այլ մարմնի (Վարչության, Տնօրինության), ինչպես նաև չնայած իրենց անունից, սակայն Ապահովադրի իմացությամբ և նրա շահերից ելնելով գործող անձանց,

3.3.2. Միջուկային էներգիայի ազդեցության, ճառագայթման և ռադիոակտիվ վարակի,

3.3.3. Քիմիական կամ կենսաբանական նյութերով ցանկացած տեսակի աղտոտման (կամ վարակման), եթե նման աղտոտումը (կամ վարակումը) չի հանդիսացել Ապահովագրության Պայմանագրի շրջանակներում որպես ապահովագրական պարահար դիտարկվող իրադարձության ուղղակի հետևանք,

3.3.4. Ասբեստե փոշու, ասբեստի, դիէթիլստրիոլի, դիօքսիդի, միզաֆորմալդեհիդի կամ դրանց բաղադրիչների, սնկի, բորբոսի ազդեցության հետևանքով,

3.3.5. Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,

3.3.6. Խտովության, պերական հեղաշրջման, դավադրության, ապստամբության կամ հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, արտակարգ կամ հատուկ իրավիճակի հայտարարման,

3.3.7. Ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների հրահանգով Ապահովագրված գույքի բռնագրավման, բռնազանձման, կալանքի, ոչնչացման կամ վնասման,

3.3.8. Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց նկատմամբ տույժերի, տուգանքների, տուժանքների կամ այլ դրամական տուգանային միջոցառումների կիրառման՝ համաձայն օրենսդրության կամ ապահովագրության տարածքում գործող իշխանությունների այլ հրահանգների,

3.3.9. Ապահովագրված գույքի բնական մաշվածության կամ որակի կամ օգտակար հատկությունների աստիճանական կորստի, եթե դրանք առաջացել են շենքերի, շինությունների և սարքավորումների շահագործման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով: Տվյալ բացառությունը վերաբերվում է միայն մաշվածությամբ անմիջապես վնասված նյութերին և սարքավորումներին, և չի բացառում սարքին (աշխատունակ) նյութերին և սարքավորումներին պատճառված վնասի հատուցում,

3.3.10. Ապահովագրված գույքի կոռոզիայի, օքսիդացման, խմորմանեխման կամ այլ բնական հատկությունների, եթե դրանք առաջացել են շենքերի, շինությունների և սարքավորումների շահագործման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով: Տվյալ բացառությունը վերաբերվում է միայն մաշվածությամբ անմիջապես



վնասված նյութերին և սարքավորումներին, և չի բացառում սարքին (աշխատունակ) նյութերին և սարքավորումներին պատճառված վնասի հատուցում,

3.3.11. Ճանապարհների կամ մայրերի ծածկույթների, ինչպես նաև հիմքերի, պատերի, շենքերի, շինությունների կամ ինժեներական կառույցների կողմ կոնստրուկցիաների կամ ծածկերի նստման, ճաքճքման, սեղմման, լայնացման կամ փքման, եթե դրանք չեն առաջացել արտաքինից հանկարծակի և անկանխատեսելի ազդեցության արդյունքում,

3.3.12. Օրենսդրությամբ և անվտանգության կանոնների և նորմերի, փարածքների և արժեքների պահպանման, աշխատանքների իրականացման անվտանգության նորմատիվ ակտերով սահմանված կամ այլ համանման նորմերի Ապահովադրի կողմից միտումնավոր խախտման, եթե դա հանդիսացել է ապահովագրական պատահարի անմիջական պատճառ,

3.3.13. Ապահովագրված գույքի արատների և թերությունների առկայության, որոնք հայտնի են եղել Ապահովադրին և հանդիսացել են ապահովագրական պատահարի առաջացման պատճառ, և որոնց մասին չի տեղեկացվել Ապահովադրին և որոնք ժամանակին չեն վերացվել համապատասխան փաստաթղթերով լիազոր մարմինների կողմից սահմանված ժամկետներում կամ Ապահովադրի ներքին փաստաթղթերով սահմանված ժամկետներում: Ապահովադրին հայտնի արատների և թերությունների տակ հասկացվում են այն արատները և թերությունները, որոնց վերաբերյալ ուղղակի նշում է արված հսկող մարմինների ակտերում կամ հրահանգներում, Ապահովադրի հանձնաժողովներում, Ապահովադրի հրամաններում կամ այլ նորմատիվ-հրահանգային փաստաթղթերում,

3.3.14. Գույքագրում անցկացնելիս հայտնաբերված Ապահովագրված գույքի պակասորդի (կորստի)՝ առանց գույքի հափշտակության, դրա թաքուցման նշանների առկայության,

3.3.15. Ցանկացած դիսկերից ապահովագրության գծով, բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների խափանում» դիսկի, չեն հատուցվում այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են նախագծերի, պլանների, տեխնիկական բնութագրերի, նյութերի և աշխատանքների ցանկացած թերությունները ուղղելու համար, կամ թաքնված թերությունները և արատները ուղղելու համար ծախսերը: Սակայն եթե անմիջապես նման թերությունների և արատների արդյունքում առաջանում է Պայմանագրի այլ կետով (բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների խափանում» դիսկի) չբացառված ֆիզիկական ոչնչացում (կորուստ) կամ վնասում, ապա բացառվում են միայն այն ծախսերը, որոնք կկրեք Ապահովադիրը մինչև ֆիզիկական ոչնչացման (կորուստի) կամ վնասման առաջացումը առկա թերությունը կամ արատը վերացնելու համար:

3.3.16. Ա.Ահաբեկչական ակտերի.

Պայթեցման, հրկիզման կամ մարդկանց մահվան վտանգ առաջացնող այլ գործողությունների իրականացում կամ իրականացման սպառնալիք, էական գույքային վնաս պատճառելու կամ այլ հասարակության համար վտանգավոր հետևանքների առաջացման սպառնալիք հանդիսացող գործողությունների իրականացում, եթե դրանք իրականացվել են հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությունը ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնյա անձի կողմից որոշում կայացնելու կամ մեղավորի այլ անօրինական պահանջը կատարելու վրա ազդելու նպատակով, եթե այդ գործողությունների փաստով հարուցված է քրեական գործ Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգրքի 217-րդ հոդվածով:

Բ. Դիվերսիաների.

Պայթեցումների, հրկիզումների կամ մարդկանց զանգվածային ոչնչացմանը, նրանց առողջությանը վնաս պատճառելուն, ձեռնարկությունների, կառույցների, հաղորդակցման ուղիների կամ միջոցների, կապի միջոցների կամ այլ գույքի ավիրմանը կամ վնասմանը, կամ զանգվածային թունավորմանը կամ պետության թուլացման նպատակով համաճարակների և էպիզոտիանների տարածմանը ուղղված այլ գործողությունների իրականացում, եթե այդ գործողությունների փաստով հարուցված է քրեական գործ Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգրքի 303-րդ հոդվածով:

3.4. «Մեքենաների և սարքավորումների խափանում» դիսկի ապահովագրության գծով, իրադարձությունները չեն հանդիսանում ապահովագրական պատահար, եթե դրանք տեղի են ունեցել հետևյալի արդյունքում.

3.4.1. Ապահովադրի ուղղակի դիտավորության՝ ի դեմս նրա ղեկավարի (լիազորած անձի), իրավաբանական անձի այլ մարմնի (Վարչության, Տնօրինության), ինչպես նաև չնայած իրենց անունից, սակայն Ապահովադրի իմացությամբ և նրա շահերից ելնելով գործող անձանց;

3.4.2. Միջուկային էներգիայի ազդեցության, ճառագայթման և ռադիոակտիվ վարակի,

3.4.3. Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների,

3.4.4. Խռովության, պետական հեղաշրջման, դավադրության, ապստամբության կամ հեղափոխության, քաղաքացիական պատերազմի, արտակարգ կամ հատուկ իրավիճակի հայտարարման,

3.4.5. Ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների հրահանգով Ապահովագրված գույքի բռնագրավման, բռնագանձման, կալանքի, ոչնչացման կամ վնասման,

3.4.6. Փորձարկումներ կամ փորձարարական աշխատանքներ իրականացնելու: Տվյալ բացառության տակ չեն ընկնում այլանային և վթարավերականգնողական վերանորոգումների ավարտից հետո ապահովագրության տարածքում գործարկման-կարգաբերման աշխատանքների, թեստավորման և հանձնման փորձարկումների ընթացքում տեղի ունեցած մեքենաների և սարքավորումների խափանումները,

3.4.7. Արատների, թերությունների կամ դեֆեկտների, որոնք հայտնի են եղել Ապահովադրին կամ նրա ներկայացուցիչներին մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը,

3.4.8. Մաշվածության, կոռոզիայի, կեղտի, կաթսաներում դիրտի և նորմալ շահագործման այլ հետևանքների, եթե դրանք առաջացել են նորմալիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտման հետևանքով, ինչպես նաև մթնոլորտային պայմանների երկարատև ազդեցության հետևանքով,

3.4.9. Ապահովագրությունը չպետք է տարածվի փոխարինվող մասերի և գործիքների, փոխադրիչի ժապավենների, զրիչների, ողորկող շրջանակների, մամլամասերի, կաղապարների, ճոպանների, շղթաների, հաղորդակցիկների և այլ առարկաների վրա, որոնք ենթակա են բարձ մաշվողականության, այն դեպքում, եթե դրանց փոխարինումը կատարվում է առանց սարքավորումները միջին կամ ընթացիկ վերանորոգման դուրս բերելու:

3.4.10. Ապահովագրությունը չի տարածվում այն վնասների վրա, որոնք չեն բերել համապատասխան մեքենայի կամ սարքավորման լրիվ կոնստրուկտիվ ոչնչացմանը, որը սահմանվում է որպես վերականգնման տեխնիկական անհնարինություն, կամ երբ վերականգնման արժեքը կազմում է նորով փոխարինման արժեքի 80 և ավելի տոկոս:

3.5. Կասկածներից խուսափելու նպատակով Պայմանագրի 3.3.1 - 3.3.16. և 3.4.1 - 3.4.10. կետերում նշված բացառությունների ցանկը չի կարող ընդլայնվել Ապահովագրողի կողմից՝ անկախ այն փաստից, թե որ բացառություններն են նշված Ապահովագրողի Պայմաններում, դրանք չեն կարող լրացնել կամ հստակեցնել Պայմանագրի 3.3.1 - 3.3.16. և 3.4.1- 3.4.10. կետերում նշված բացառությունները:

### **3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ, ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ, ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ**

4.1. Ընդհանուր ապահովագրական գումարը սահմանվում է որպես գույքի վերականգնողական արժեք, որը որոշվել է Ապահովագրի գույքի (հիմնական միջոցների օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների) շուկայական (վերականգնողական) արժեքի գնահատման արդյունքների հիման վրա, և կազմում է 1 500 000 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ԱՄՆ դոլար:

4.2. Ապահովագրական հատուցման սահմանաչափը.

4.2.1. Մեկ և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ԱՄՆ դոլար:

4.2.2. Պայմանագրի 4.2.1. կետում նշված Ապահովագրական հատուցման սահմանաչափը ազդեցությանի են և ենթակա չէ ավտոմատ կերպով վերականգնման: Ապահովագրիին ապահովագրական հատուցման գումարի վճարման դեպքում, համապատասխանաբար ապահովագրական գումարը նվազում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվանից սկսած: Ընդ որում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, ապահովագրական հատուցման գումարը հաշվարկվում է առանց ապահովագրական գումարի և ապահովագրված գույքի իրական արժեքի համամասնության կիրառման:

4.3. Պայմանագրով սահմանված են պատասխանատվության լրացուցիչ սահմանաչափեր, որոնք կիրառվում են, ներառյալ Պայմանագրում նշված չհատուցվող գումարը,

4.3.1. Պայմանագրի 3.2.5. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար չափով սահմանաչափ,

4.3.2. Պայմանագրի 3.2.6. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար չափով սահմանաչափ,

4.3.3. Պայմանագրի 3.2.7. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ,

4.3.4. Պայմանագրի 3.2.8. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ,

4.3.5. Պայմանագրի 3.2.9. կետի համաձայն իրականացվող ծախսերի գծով սահմանված է 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով սահմանաչափ,

4.3. Պայմանագրով սահմանված է ոչ պայմանական չհատուցվող գումար յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով 30 000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլար:

**5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

5.1. Պայմանագրով ապահովագրավճարը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) Հայաստանի Հանրապետության դրամ:

5.2. Հաշվեկշռում հիդրոտեխնիկական կառույցներ, և / կամ գեներացնող սարքավորումներ և / կամ էլեկտրաէներգիայի գեներացման կապիտալ շինարարության օբյեկտներ և / կամ տրասնֆորմատորներ և / կամ բաշխիչ սարքեր ունեցող գույքի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ գծով ապահովագրական սակագինը կազմում է 0,0271%:

5.3. Ապահովագրավճարը վճարվում է տարաժամկետ Ապահովագրողի հաշվարկային հաշվին 6 (վեց) մասով՝

- ապահովագրավճարի առաջին մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.02.2022թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի երկրորդ մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.04.2022թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի երրորդ մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.06.2022թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի չորրորդ մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.08.2022թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի հինգերորդ մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.10.2022թ. ոչ ուշ,

- ապահովագրավճարի վեցերորդ մասի վճարումը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամի չափով վճարվում է 15.12.2022թ. ոչ ուշ,

5.4. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի մասի) վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվին միջոցների մուտքագրման օրը:

5.5. Ապահովագրավճարի վճարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

**6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի «01» ժամը 00:00-ից և գործում է մինչև 2022թ. դեկտեմբերի «31» ժամը 24:00:

6.2. Կնքված Պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվությունը սկսում է Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի սկզբից՝ անկախ ապահովագրավճարի առաջին մասի վճարման ամսաթվից:

**7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ**

7.1. Ապահովագրության Պայմանագիրը պետք է նախատեսի ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի և Ապահովադրի գործողությունների հետևյալ կարգը.

7.1.1. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու մասին պաշտոնական ծանուցում է ուղարկում՝ տեղի ունեցած իրադարձության նկարագրության շարադրմամբ, և (հնարավորության դեպքում) վնասի գումարի նախնական չափի նշմամբ:

7.1.2. Ապահովադրի կողմից հայտնաձև իրադարձությունը Ապահովագրողի կողմից համաձայն ապահովագրական Պայմանագրի ապահովագրական պատահար ճանաչելու համար Ապահովադիրը Ապահովագրողին ուղարկում է պաշտոնական հայտ Ապահովագրողի կողմից իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու անհրաժեշտության մասին՝ դիմումին կցելով Պայմանագրի 8.1. կետի «ա» և «բ» ենթակետերում նշված փաստաթղթերը:

Նման հայտ ստանալուց հետո ոչ ուշ քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է դիտարկել Ապահովադրի կողմից տրամադրված փաստաթղթերը և ուղարկել Ապահովադրին պաշտոնական որոշում ապահովագրության Պայմանագրով դիտարկվող իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու կամ մերժման մասին:

Ապահովագրողը իրավունք չունի մերժելու ապահովագրական պատահարի ճանաչումը, որպես հիմք ներկայացնելով Պայմանագրի 8.1. կետի «ա» և «բ» ենթակետերում չնշված լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը:

7.1.3. Վերանորոգման (վերականգնման) աշխատանքները ավարտելիս Ապահովադիրը ուղարկում է Ապահովագրողին Պայմանագրի 8.1. կետի «գ» ենթակետում նշված փաստաթղթերը Ապահովագրողի կողմից վերջնական ապահովագրական ակտ կազմելու և դիտարկվող ապահովագրական պատահարի գծով ապահովագրական կարգավորումը Կողմերի կողմից ավարտելու համար:

7.1.4. Ապահովագրական հատուցման իրականացումը անհիմն ուշացնելու դեպքում Ապահովագրողը վճարման ուշացման յուրաքանչյուր շաբաթվա համար վճարում է տույժ ժամկետանց վճարման գումարի 1% չափով:

## **8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

8.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովադիրը պարտավոր է տրամադրել Ապահովագրողին հետևյալ փաստաթղթերը.

- Պատահարը ապահովագրական ճանաչելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.
- Ապահովագրական պատահարի մասին հայտ,
- Վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայրի լուսանկարներ՝ ընդհանուր պլանի և վնասված Ապահովագրված գույքի (եթե դա հնարավոր է), որոնք տալիս են պատկերացում Ապահովադրի գույքին պատճառված վնասի մասշտաբների մասին: Տրամադրվող լուսանկարների որակը չի կարող հանդիսանալ վեճի առարկա: Եթե Ապահովագրողին անհրաժեշտ են վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայրի ավելի մանրամասն լուսանկարներ, նա Ապահովադրի հետ համաձայնեցնելով և սեփական միջոցների հաշվին պետք է վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) վայր ուղարկի իր

ներկայացուցին լուսանկարահանում կազմակերպելու համար,

- Վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) պատճառների տեխնիկական հետաքննության ակտի պատճենը՝ դրա անբաժանելի մասեր հանդիսացող բոլոր հավելվածներով,

- Վնասված Ապահովագրված գույքի տեխնիկական անձնագրերի պատճենները (միայն այն Ապահովագրված գույքի մասով, որի գծով տեխնիկական անձնագրերը կազմվել են և վարվել են),

- Վնասված Ապահովագրված գույքի դեֆեկտացիայի (կամ զննման) ակտերի պատճենները կամ դեֆեկտացիոն տեղեկագրերի (ցուցակների) պատճենները,

- Մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը վնասված Ապահովագրված գույքի վերանորոգման ժամանակացույցի պատճենը (այն դեպքում եթե նման ժամանակացույցներ կազմվել են և վարվել են),

- Սարքավորումների շահագործման ամենօրյա մատյանից քաղվածքների պատճեններ կամ վթարի (միջադեպի, իրադարձության, պատահարի) մասին գրառումներ պարունակող օպերատիվ մատյանից քաղվածքների պատճենները,

- Վնասված Ապահովագրված գույքի սպասարկման և շահագործման ձեռնարկերի պատճենները (միայն այն Ապահովագրված գույքի համար, որի գծով նման ձեռնարկներ կազմվել են և վարվել են),

- Գլխավոր ճարտարագետի կամ ոչնչացված կամ վնասված Ապահովագրված գույքի համար պատասխանատու անձի, կամ Ապահովադրի կողմից լիազորված այլ անձի բացատրագիր ապահովագրական պատահար տեղի ունենալու պատճառների վերաբերյալ,

- Վնասված գույքի նկարմամբ Ապահովադրի գույքային շահերը հավաստող փաստաթղթերի պատճենները (օրինակ՝ հիմնական միջոցների հաշվառման գույքագրման քարտերի պատճենները (Ապահովադրի հաշվեկշռի վրա գտնվող գույքի համար) կամ կատարված աշխատանքների ակտերի պատճենները և (կամ) մինչև մոնտաժման իրականացում Ապահովադրի սարքավորումների հանձնման-ընդունման ակտերի պատճենները (անավարտ շինարարության օբյեկտների համար) կամ Ապահովադրի գույքային շահերը հավաստող այլ փաստաթղթեր):

Պատահարը ապահովագրական ճանաչելու համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր.

- Հրդեհի դեպքում Ապահովադրիը տրամադրում է Ապահովագրողին.

• Հրդեհային հսկողության պետական մարմնի՝ հրդեհի պատճառների նշումով ակտի պատճենը,

• Պետական մարմինների կողմից տրված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշման պատճենը (եթե հրդեհը առաջացել է երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում),

• Լիազոր մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմված հետաքննության ակտը (եթե հրդեհը առաջացել է դրա ենթակայության տակ գտնվող օբյեկտում):

- Տարերային աղետի դեպքում Ապահովադիրը տրամադրում է Ապահովագրողին.
- Հիդրոտեքնոլոգիայի ծառայության կամ «ՀՀ Արտակարգ իրավիճակների Նախարարության» կողմից տրված տեղեկանքի պատճենը (կախված նրանից, թե ում հսկողության տակ է գտնվում տեղի ունեցած իրադարձությունների արձանագրումը):
- Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների դեպքում Ապահովադիրը տրամադրում է Ապահովագրողին,
- Վնասի պատճառման վայրի պետական մարմինների կողմից տրված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշման պատճենը:
- Կողմերի միջև վերջնական ապահովագրական կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթեր (ապահովագրական պատահարի գծով վնասի վերջնական գումարը հաստատելու համար).
- Վնասված կամ ոչնչացված Ապահովագրված գույքի փոխարինման նպատակով նոր գույքի կամ սարքավորումների ձեռքբերումը հաստատող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ առքուվաճառքի, Պայմանագրի պատճենները, ապրանքագրերի պատճենները, փոխանցման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները
- Վնասված Ապահովագրված գույքի դուրսգրումը հաստատող փաստաթղթերի պատճենները (եթե տվյալ գույքը ենթակա չէ վերանորոգման (վերականգնման)),
- Վերանորոգման (վերականգնման) համար ծախսերը հաստատող փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ կապալի պայմանագրերի պատճենները, ընդունման-հանձնման ակտերի պատճենները, փոխանցման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները,
- Ապահովագրության Պայմանագրով հարուցման ենթակա ծախսերը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ կապալի պայմանագրերի և առքուվաճառքի պայմանագրերի պատճենները, աշխատանքների ընդունման-հանձնման ակտերի պատճենները, փոխանցման հաշիվների պատճենները, վճարման հանձնարարականների պատճենները, այդ թվում Ապահովադիրի տնտեսական միջոցներով կատարված աշխատանքները հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ապահովագրական պատահար (ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն) տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը իրավունք չունի հղում կատարել փաստաթղթերի կառուցվածքի և ձևի՝ Ապահովագրողի ներքին փաստաթղթերի և ապահովագրության Պայմանների անհամապատասխանության վրա: Ապահովագրողի կողմից պետք է ընդունվեն դիտարկման պատշաճ կերպով ձևակերպված փաստաթղթերի հավաստված պատճենները:

8.2. Կասկածներից խուսափելու նպատակով Պայմանագրի 8.1. կետում նշված փաստաթղթերի ցանկը հանդիսանում է սպառիչ և չի կարող ընդլայնվել Ապահովագրողի կողմից:

8.3. Սույնով Ապահովագրողը հրաժարվում է սուբրոգացիայի իրավունքից այն անձանց նկատմամբ, որոնց հետ Ապահովագրված գույքի նախագծման, կարգաբերման, սպասարկման, դիագնոստիկայի, վերանորոգման մասին համաձայնություններ են կնքված, ինչպես նաև այլ անձանց նկատմամբ, որոնց հետ Ապահովադիրը կնքել է պատասխանատվությունից ազատելու

մասին համաձայնագրեր:

Մինչույն ժամանակ՝ դիտարկողյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն անցնում է ապահովագրողին (Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 1021 հոդված):

8.4. Ընդ որում Ապահովադիրը իրավունք ունի սրանալու Վերաապահովագրողների համար Վթարային կոմիսարի կողմից կազմվող բոլոր հաշվետվությունների պատճենները: Ապահովադիրը իրավունք ունի հայտնելու իր անհամաձայնությունը նման հաշվետվությունների առանձին մասերի հետ և տեղի ունեցած իրադարձությունների աղելվապ պատկեր սրանալու համար հիմնավորված պահանջելու կատարել փոփոխություններ, կամ, առնվազն, հաշվետվություններում իր սեփական հատուկ կարծիքը արտացոլելու:

## **9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

7.1. Ապահովագրողի և Ապահովադիրի միջև Պայմանագրով բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7.2. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պարտասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:

## **10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

10.1. Պայմանագիրը դադարում է.

10.1.1. Մինչև այն ժամկետի ավարտը, որով Պայմանագիրը կնքվել է, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո դադարել է ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքներով:

10.1.2. Կողմերի համաձայնությամբ:

10.2. Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի հրաժարվելու Պայմանագրից ցանկացած ժամանակ, եթե հրաժարվելու պահի դրությամբ ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը չի դադարել Պայմանագրի 10.1. կետում նշված հանգամանքներով:

10.3. Ապահովադիրի կողմից Ապահովագրության Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել ապահովագրավճարի մասը՝ մասհանելով ապահովագրավճարի մասը համամասնորեն այն ժամանակահատվածի, որի ընթացքում գործել է ապահովագրության Պայմանագիրը (Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի 1014-րդ հոդվածը):

## **11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

11.1. Կողմերից ոչ մեկը իրավունք չունի Պայմանագրով իր իրավունքները և պարտականությունները փոխանցել երրորդ կողմին առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

11.2. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կլինեն վավեր միայն պայմանով, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով և ստորագրվել են Կողմերի



լիազորված ներկայացուցիչների կողմից:

11.3. Եթե Պայմանագրի որևէ դրույթ դառնում է անվավեր, ապա դա չի ազդում Պայմանագրի այլ դրույթների գործողության վրա:

11.4. Կողմերը կրում են պարասխանատվություն հայտնած վավերապայմանների ճշտության համար և պարտավորվում են ծանուցել միմյանց դրանց փոփոխության մասին:

11.5. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պայմանագրի յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

11.6. Եթե Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կողմերից որևէ մեկը վերակազմավորվի, սույն Պայմանագրով բոլոր իրավունքները և պարտականությունները անցնում են նոր կազմավորված իրավաբանական անձին՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.7. Պայմանագրի բոլոր հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մաս և վավեր են միայն Կողմերի կողմից պատշաճ կերպով ստորագրված և կնքված լինելու դեպքում:

11.8. Ստորագրելով Պայմանագիրը Ապահովադիրը հաստատում է, որ ստացել է Պայմանները, ծանոթացել է և պարտավորվում է դրանք կատարել:

11.9. Ապահովագրության ժամկետի սկզբից ոչ ուշ քան 3 (երեք) օր առաջ ժամկետում Ապահովագրողը պարտավոր է տրամադրել Ապահովադիրին վերաապահովագրության Պայմանագրի պատճենը (կամ պայմանագրերի, եթե առկա են մի քանի վերաապահովագրողներ / ռեբրոցեսսիոներներ և (կամ) այլ փաստաթղթերի, որոնք հավաստում են դիսկի բաշխման պայմանները)՝ համաձայն Ապահովագրողի կողմից հայտնած (կամ Ապահովադրի կողմից առաջարկված) վերաապահովագրական պաշտպանության Ծրագրի կամ վերաապահովագրողի / Բրոքերի կողմից տրամադրված ծածկույթի վերաբերյալ հաստատումը:

11.10. Ապահովագրական գումարի արտարժույթ՝ ԱՄՆ դոլար:

Պայմանագրում Ապահովագրական գումարները, չհատուցվող գումարները բերված են վերոնշյալ «Ապահովագրական գումարի արտարժույթով», սակայն բոլոր հաշվարկներն ու վճարումները իրականացվում են ՀՀ դրամով՝ գործարքի իրականացման օրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից «Ապահովագրական գումարի Արտարժույթ»-ի նկատմամբ սահմանված ՀՀ դրամի փոխարժեքով:

Հավելվածներ.

1. Ապահովագրողի Խորհրդի \_\_\_\_\_թ. նիստի թիվ \_\_ արձանագրությամբ հաստատված «Բոլոր դիսկերից արտադրական և առևտրային ձեռնարկությունների ապահովագրության պայմաններ»,

Ապահովադիրը հավաստում է, որ ստացել է ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ծանոթացել և համաձայն է դրանց հետ:

2. Ապահովագրողի Խորհրդի \_\_\_\_\_թ. նիստի թիվ \_\_ արձանագրությամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների խափանումից ապահովագրության պայմանների»,

Ապահովադիրը հավաստում է, որ ստացել է ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ծանոթացել և համաձայն է

դրանց հետ:

3. Գույքի վնասի / կորստի դիմում:

**12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ապահովագրող**

«\_\_\_\_\_»  
ապահովագրական ընկերություն

Գրանցման ամսաթիվը՝ \_\_/\_\_/20\_\_թ.

Գրանցման վկայական թիվ \_\_,  
տրված ՀՀ ԿԲ կողմից

Свидетельство регистрации номер \_\_,  
выдано ЦБ РА

ՀՀ, ք. Երևան, \_\_\_\_\_,  
\_\_\_\_\_

ՀՀՎՀ \_\_\_\_\_

Հեռ. +(374 1\_) \_\_\_\_\_

Ֆաքս +(374 1\_) \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Հ/Հ - \_\_\_\_\_

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_

\_\_\_\_\_ «\_\_\_\_\_»

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Կ.Տ.

**Ապահովադիր**

«Միջազգային էներգետիկ  
կորպորացիա»

Փակ բաժնետիրական  
ընկերություն

ՀՀ, ք. Երևան, 0021  
Ղաթանցյան 2/12

ՀՀՎՀ 00078569

Հեռ. +(374 10) 24 50 99

Ֆաքս +(374 10) 24 51 99

Էլ. փոստ office@mek.am

Հ/Հ 1570012654440100

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Կիրակոսյան Ա.Ա.

Կ.Տ.

**Ընդհանուր Պարասխանարվության Ապահովագրության**

«\_\_» \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ 2022թ.

ք. Երևան

«\_\_\_\_\_» **ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը**, որն այսուհետ կանվանվի «**Ապահովագրող**», ի դեմս Գործադիր տնօրեն պրն. \_\_\_\_\_, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից,

և «**Միջազգային էներգետիկ կորպորացիա**» **փակ բաժնետիրական ընկերությունը**, որն այսուհետ կանվանվի «**Ապահովադիր**», ի դեմս Գլխավոր տնօրեն՝ Ա. Կիրակոսյանի, որը գործում է Ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

հետագա շարադրանքում միասին անվանվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**»,

կնքեցին սույն Ապահովագրության Պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**») հետևյալի մասին.

**Ապահովագրական գումարի արտարժույթ. ԱՄՆ դոլար**

Պայմանագրում Ապահովագրական գումարները, չհատուցվող գումարները բերված են վերևում նշված «Ապահովագրական գումարի արտարժույթով» սակայն բոլոր հաշվարկները և վճարումները իրականացվում են ՀՀ դրամով գործառույթի իրականացման օրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից «Ապահովագրական գումարի արտարժույթի» նկատմամբ սահմանված ՀՀ դրամի փոխարժեքով:

**Ապահովադրի վերաբերյալ տեղեկատվություն.**

**Ապահովագրված գործունեություն.** Էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրություն,

**Ապահովագրության օբյեկտ.** Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը, կապված նրա պարտականության հետ հատուցել Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը, որը պատճառվել է Ապահովադրի կողմից Ապահովագրության Պայմանագրում նշված գործունեության (Ապահովագրված գործունեություն) իրականացման ընթացքում:

**Պայմանագրի գործողության ժամկետ.**

սկիզբ՝ 01.01.2022թ.

ավարտ՝ 31.12.2022թ. (երկու օրն էլ ներառյալ)

**Ապահովագրական գումար.** 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար ցանկացած պատահարի կամ պատահարների համար, որոնք արդյունք են մեկ սկզբնական պատճառի և համախառն սահմանաչափ ապահովագրության գործունեության ընթացքում:

**Ապահովագրական գումարի սահմանափակում չի կիրառվում**

**Ապահովագրավճար.**

**Տարեկան ապահովագրավճար՝ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ,**

**Ոչ պայմանական չհատուցվող գումար** (յուրաքանչյուր և ցանկացած պատահարի համար)՝

- Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառված գույքային վնասի դեպքում ֆրանչիզան կազմում է 2 000 (երկու հազար) ԱՄՆ դոլար,

- Ֆիզիկական անձանց կյանքին և (կամ) առողջությանը վնաս հասցնելու դեպքում ֆրանչիզա չի կիրառվում:

**Ապահովագրվող պատահարներ՝**

Պայմանագրով հատուցվում է Ապահովադրի իրավական պարասխանատվությունը, որը առաջանում է երրորդ կողմին հասցրած մարմնական վնասի և/կամ մահի և/կամ գույքի կորստի կամ վնասի դեպքում, Ապահովադրի կողմից ապահովագրության Պայմանագրում նշված գործունեության (Ապահովագրված գործունեություն) իրականացման հետ կապված:

**Պարտադիր պայմաններ՝**

Համաձայն «Ընդհանուր պարասխանատվության ապահովագրության» պայմանների,

Լուծման դրույթ ոչ պակաս քան 15 (տասնհինգ) օր նախօրոք գրավոր տեղեկացմամբ:

**Քացառություն են կազմում հետևյալ ռիսկերը՝**

Պատերազմը և Քաղաքացիական խռովությունները,

Մասնագիտական պարասխանատվությունը,

Արտադրական վնասվածքների փոխհատուցման պարասխանատվությունը,

Մասնագիտական հիվանդությունը,

Աղտոտումը,

Ահաբեկչությունը և Սաբոտաժը,

Ազբեստը,

Գործարտի պարասխանատվությունը,

Շինմոնտաժային աշխատանքների հետևանքով երրորդ անձանց հանդեպ պարասխանատվությունը, կամ շինարարական և վերանորոգման աշխատանքների

հեղինակներով առաջացած ցանկացած վնասը:

## **Այլ դրույթներ**

**Ապահովագրության գործելու փարածք՝** Հայաստանի Հանրապետություն:

### **Կիրառվող օրենսդրություն՝**

Սույն ապահովագրության ներքո վնասների հատուցման պահանջները պետք է ներկայացվեն և կարգավորվեն միմիայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Սույն ապահովագրությամբ ծածկվում է Ապահովադրի այն պատասխանատվությունը, որը ծագում է ՀՀ օրենսդրության հիման վրա: Ցանկացած այլ պատասխանատվություն, որի նկատմամբ կկիրառվի այլ պետության օրենսդրություն կամ միջազգային իրավական նորմ ենթակա չէ հատուցման Պայմանագրի ներքո:

**Ապահովագրության պայմաններ.** Սույն ապահովագրությունն իրականացվում է համաձայն Ապահովագրողի Խորհրդի \_\_\_\_\_թ. նիստի թիվ \_\_ արձանագրությամբ հաստատված «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանների» (այսուհետ «**Պայմաններ**»), որոնք տրվել են և համաձայնեցվել են Ապահովադրի հետ և հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

Պայմանագրի և Պայմանների դրույթների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում են Պայմանագրի դրույթները:

Ապահովագրության Պայմանագրի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված, սակայն սույն ապահովագրության Պայմանագրում չընդգրկված դրույթները ներառված են սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Պայմաններում:

### **Ապահովագրական գումարի արտարժույթ՝ ԱՄՆ դոլար.**

Պայմանագրում Ապահովագրական գումարները, չհատուցվող գումարները բերված են վերոնշյալ «Ապահովագրական գումարի արտարժույթով», սակայն բոլոր հաշվարկներն ու վճարումները իրականացվում են ՀՀ դրամով՝ գործարքի իրականացման օրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից «Ապահովագրական գումարի Արտարժույթ»-ի նկատմամբ սահմանված ՀՀ դրամի փոխարժեքով:

**Վեճերի լուծման կարգը.** համաձայն Պայմանագրի, կողմերի միջև ծագած բոլոր տարաձայնությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և ապահովագրության Պայմաններին համաձայն:

**Պայմանագրի փոփոխման կարգը.** Պայմանագրի որևէ փոփոխություն իրականացվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ապահովագրության Պայմանների:

**Պայմանագրի լուծման կարգը.** Պայմանագիրը կարող է լուծվել Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ապահովագրության Պայմանների:

**Ապահովագրական պատահարի մասին տեղեկացման կարգը.** Պայմանագրով սահմանված ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պետք է անմիջապես տեղեկացնի Ապահովագրողին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10 \_\_\_\_\_, (+374 12) \_\_\_\_\_);

**Ապահովագրավճարի վճարման կարգը.** Ապահովագրավճարը փոխանցվում է Ապահովագրողի հաշվարկային հաշվին: Վճարման ենթակա գումարը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ, և պետք է վճարվի մինչև 15.02.2022թ.:

Հավելված.

Ապահովագրողի էտրիդի \_\_\_\_\_թ. նիստի \_\_ Արձանագրությամբ «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմաններ»;

Ապահովադիրը հավաստում է, որ ստացել է Պայմանները և ծանոթացել է դրանց հետ:

Պայմանների օրինակը տրամադրվել է Ապահովադիրին:

### Կողմերի հասցեները և վավերապայմանները

#### Ապահովագրող

«\_\_\_\_\_»  
ապահովագրական  
ընկերություն

Գրանցման ամսաթիվը /  
\_\_\_\_\_թ.

Գրանցման համարը՝ ՀՀ ԿԲ գրանցում  
\_\_\_ /

ՀՀ, ք. Երևան, \_\_\_\_\_

ՀՀԿՀ \_\_\_\_\_

Հեռ. +(374 10) \_\_\_\_\_

Ֆաքս +(374 10) \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Հ/Հ - \_\_\_\_\_

«\_\_\_\_\_» ՓԲԸ

Տնօրեն

#### Ապահովադիր

1.3. «Միջազգային էներգետիկ  
կորպորացիա»

1.4. փակ բաժնետիրական  
ընկերություն

ՀՀ, ք. Երևան, 0021,  
Ղափանցյան 2/12

ՀՀԿՀ 00078569

Հեռ.+(374 10) 24 50 99

Ֆաքս +(374 10) 24 51 99

Էլ. փոստ office@mek.am

Հ/Հ - 1570012654440100

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 3

Առաջարկի/պայմանագրի ապահովման (տվյալ ձևը օգտագործվում է ինչպես Առաջարկի, այնպես էլ՝ պայմանագրի համար)

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ Գնումների հանձնաժողովին

Հարգելի պարոնայք,

Պատվիրատուի \_\_\_\_\_ պայմանագիր կնքելու իրավունքի համար Առաջարկների հարցման (այսուհետ՝ «Առաջարկների հարցում») մասնակից՝

\_\_\_\_\_  
(Առաջարկների հարցման մասնակցի լրիվ անվանումը)

հաշվի առնելով Առաջարկների հարցման՝ վերը հիշատակված մասնակցի (այսուհետ՝ «Մասնակից») հանդեպ Պատվիրատուի (այսուհետ՝ «Պատվիրատու») պարտքի առկայությունը՝

\_\_\_\_\_  
(գումարը թվերով)

ՀՀ դրամի չափով (այսուհետ՝«Մասնակից»)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368 ընդհանուր հոդվածի 1 ին մասի և Պատվիրատուի գնումների կարգի 18.1 կետի հիման վրա՝

հաշվի առնելով Առաջարկների հարցման փաստաթղթերում արտահայտված՝ Պատվիրատուի համաձայնությունը ստորև շարադրված պայմաններին՝

ի վկայություն Առաջարկների հարցման մեջ հաղթող ճանաչվելու դեպքում պայմանագիր կնքելու պարտաստակամության, որպես իր Առաջարկի (պայմանագրի) ապահովում սույնով ստանձնում է պարտավորություններ՝ ըստ ստորև նշված հետևյալ պայմանների՝

Սույնով Մասնակցի կողմից Պատվիրատուին Առաջարկի (Պայմանագրի) ապահովում է տրամադրվում

\_\_\_\_\_  
(գումարը թվերով)

\_\_\_\_\_  
(գումարը տառերով)

ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարի) չափով:

1. Մասնակցի կողմից Առաջարկների հարցմանն իր մասնակցությամբ պայմանավորված պարտավորությունների կատարումն ապահովվում է Պարտքի միջոցների հաշվին՝ 1 կետում վերը նշված չափով՝ սույնի 5 և 6 կետերով սահմանված կանոններին համապատասխան:

2. Մասնակցի կողմից Առաջարկ ներկայացվելու (Պամանագրի կնքման) պահից՝ Առաջարկի (Պամանագրի) ապահովման 1 կետում վերը նշված չափով Պարտքի մասին չեն կարող հաշվարկվել տուժանքներ՝ տույժեր, տուգանքներ, պատասխանատվության այլ միջոցներ, տուժումներ, այլև չեն կարող կատարվել իրավաբանական բնույթի գործողություններ՝ ուղղված Պարտքի համապատասխան մասի մարմանը:

3. Սույնի 5 կետում նշված դեպքերում Առաջարկի (Պամանագրի) ապահովման 1 կետում վերը նշված չափով Պարտքի մասը մարելու Պարվիրատուի պարտականությունը համարվում է դադարած, իսկ Մասնակիցը համապատասխանաբար զրկվում է Պարտքի համապատասխան մասի մարումն ապահանջելու իրավունքից:

4. Պարվիրատուի կողմից Առաջարկի (Պայմանագրի) ապահովումը չի վերադարձվում՝

ա) Առաջարկի փոփոխության կամ ետ կանչի դեպքում (Պայմանագրի ստորագրումից հրաժարում) Առաջարկի գործողության ժամկետում՝ Առաջարկների ընդունման ժամկետի ավարտից հետո (կետ 2.6.6),

բ) ակնհայտ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ Առաջարկի կազմում ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթերի դիտարկման խեղաթյուրման դեպքում,

գ) Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,

դ) Հաղթողի առաջարկների հարցման արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ 2.11 ենթաբաժնում նախատեսված կարգով,

ե) Հաղթողի սույն առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված կարգով (ենթաբաժին 2.12) Պայմանագրի կնքելուց հրաժարվելու դեպքում:

5. Պարվիրատուն, բացառությամբ վերը նշված 5 կետում սահմանված դեպքերի, Առաջարկի (պայմանագրի) ապահովումը հետ է վերադարձնում Մասնակցին հետևյալ դեպքերում.

Առաջարկների հարցումը չկայացած կամ դադարեցված հայտարարելուց հետո,

Առաջարկների հարցման արդյունքների ամփոփումից հետո, եթե Մասնակցի Առաջարկը մերժվել է,

---

(ստորագրություն)

---

(ազգանուն, անուն)

---

(պաշտոնը)



4.S.  
2022թ.